Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

330.1
F-21

330.1
Բ-21

№ 1 «Յառաջ»ի գրադարան № 1

Ա. Ն. ԲԱԽ

ՀԱՐՈՒՍՏՆԵՐ

ԵՒ

ԱՂՔԱՏՆԵՐ

Երկրորդ տպագրութիւն

15 կ. 6-օրդ.—հազար 1906
ԹԻՖԼԻՍ

27.02.2013

22/79

330.1
F-21

15 JAN 2010

05 FEB 2007

69

300
1155-ԲԱ

Ռ. Ն. ԲԱԽ

ՄԻՈՒԹԻՒՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ՀԱՐՈՒՍՏՆԵՐ

ԵՒ

ԱՂՔԱՏՆԵՐ

1003
11462

Երկրորդ տպագրութիւն

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI. 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1906 թ.
ԹԻՖԼԻՍ.

ԹԻՖԼԻՍ
Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Մադաթեան փող. 5.
1906 (185)

ՀԱՐՈՒՍՏՆԵՐ ԵՒ ԱՂՔԱՏՆԵՐ

Եթէ մենք առժամանակ մոռանանք մեր անձնական վըշտերն ու հոգսերը և ուշադիր հայացքով դիտենք մեզ շրջապատող կեանքը, որքան զարհուրելի ու առեղծուածային կերևայ նա մեզ հէնց առաջին անգամից։ Ամեն տեղ մենք կը տեսնենք մի անհասկանալի հակադրութիւն։ Ոմանք աշխատելով ու արիւն-քրտինք թափելով ուժասպառ են լինում, միւսները ոչինչ չեն անում. ոմանք ճանճի նման սովից ու այլևայլ ցաւերից են մեռնում, իսկ միւսները ապրում են շքեղ պալատներում և ոսկէ ու արծաթէ ամաններից կերակուր ուտում։ Ոմանք լալիս են ու տանջւում, իսկ ուրիշները խնդում ու քէֆ անում։ Ցաղճով դատելով մենք պիտի սպասէինք, որ հէնց նրանք լաւ կեանք վարէին, որոնք աշխատասէր ու խնայող են։—Այդպիսի մարդկանց գործն էլ միշտ յաջող պիտի գնար։ Այդպիսի մարդիկ տէր պիտի լինէին շքեղ պալատների, ուտէին արծաթէ և ոսկէ ամաններից, նրանց միջից անպակաս պիտի լինէր ուրախութիւնը։ Մենք պիտի սպասէինք նաև, որ ծոյլ մարդիկ ձեռները ծալած նստէին և դառն արտասունք թափէին. չէ՞ որ, երբ մէկը ոչինչ անել չէ կամենում, ծոյլ է և հարբեցող, ինքն է մեղաւոր, և ոչ մի ուրիշը։ Այդպիսին իր արդար հատուցումն միայն կստանար։

Կարծես այդպէս էլ հէնց պէտք է լինէր և՛ աստուածային և՛ մարդկային օրէնքով... Բայց ինչ արած, որ բանը բոլորովին այդպէս չէ։ Սովից ու ցրտից, արցունքներից ու ցաւերից ճանճի նման մեռնում և ամեն տեսակ հալածանքներ ու չարչարանքներ քաշում են հէնց այն մարդիկ, որոնք արիւն քրտինք են թափում։ Իսկ ով ոչինչ չէ անում, կեանքը նրա համար անընդհատ բարեկենդան է. նա դիտէ միայն շռայլել ու վատնել, իսկ նրա փողին չափ ու սահման չկայ։ Հապա ո՞րտեղ է արդարութիւնը։ Եթէ դու բաղդ չես ունեցել հարուստի որ-

դի լինելու, դու պիտի չարչարուես մինչև կեանքիդ վերջը և հանգստութեան կարօտ մնաս։ Հազիւ դու լոյս աշխարհ ես գալիս, սևուժութ վիշտն ու ցաւը հետևում են արդէն քեզ, ձեռքդ ու ոտդ կապում, սիրտդ ու միտքդ արիւնով լցնում և քարշ են տալիս քեզ աշխարհիս երեսին... Դիցուք, դու գիւղացու տղայ ես։ Հէնց որ դու չորս տարեկան ես դառնում, ահա զգում ես արդէն քո ուսերի վրայ ծանր լուծը. դու ուզում ես վազվզել ու խաղալ, բայց քո ձեռքը ճիպոտ են տալիս և սագեր արածացնելու քշում։։ Դու քիչ մեծանում ես՝ ահա քեզ խոզեր են յանձնում պահելու. այնուհետև հորթեր, և այլն։ Սակայն այդ բոլորը դեռ ոչինչ։ Այդ բոլոր աստիճանները անցընում ես դու խաղալով։—Բայց ահա գալիս են սև ու դառն օրերը։ Դու 8 տարեկան հասակումն ես։ Եկաւ ձմեռը։ Ով հարուստ է, նա ուղարկում է իր զաւակներին ուսումնարան։ Դու էլ կ'ուզէիր ուսումնարան գնալ, նրանց հետ միասին խաղալ ու վազվզել։ Բայց այդ բոլորը քեզ համար երազ է միայն։ Հօրդ ցանքսը վատ է եղել, հարկերի և ապառիկների մէջ մինչև վիզը խրուած է, վճարելու «քօռ գրօշ» չունի, իսկ հացի կարօտ բերանները՝ շատ։ Ինչպէս ձուկը սառուցին է զարկուում, այնպէս էլ քո հայրը՝ դէս ու դէն ընկած՝ մի ելք է փնտրում։ Նա լսում է մի օր, որ հարևան աղան լուցկու գործարան է բաց արել, բարեգործ է հանդիսացել փոքրերին աշխատանք տալով։ Ինչ ասել կ'ուզէ, որ դու գործարան գնալ ամենևին չէիր ցանկանալ։ Բայց ինչ արած, հայրդ է տանում, պիտի գընաս։ Նա խեղճը ինքը գիտէ, որ 12—14 ժամուայ օրական աշխատանքի համար քեզ կը տան միայն մի 10 կոպէկ. նա գիտէ, ծծումբի ու ֆոսֆորի օդը քեզ կը մաշէ ու կը հիւանդացնէ գործարանում։ Ծանր է նրա համար, բայց այնուամենայնիւ նա ի նկատի ունի քո 10 կոպէկը, որ պէտք է նրան ապրուստի համար։

Եթէ բաղդդ բերեց, և դեռ երեխայ ժամանակդ մի հիւանդութիւն կեանքդ չխլեց կամ գործարանի որևէ մեքենայ վիզդ չկտրեց և մի կերպ դու լաւ-վատ 18 տարեկան դարձար, այն ժամանակ դու ինքդ պիտի մտածես քո վիճակի վրայ։ Լուցկու գործարանից քեզ դուրս կը շպրտեն, որովհետև փոքրերն էլ այնտեղ կարող են աշխատել, — քեզպէսներին պահել հաշիւ չկայ, քանի որ դու խօմ օրական 10 կոպէկով չէիր աշխատի այլևս։ Գիւղ գնալ և հօրդ մօտ մնալ նոյնպէս չի լինի։ Դուք մի փոքրիկ հողաբաժին ունիք, իսկ վճարելիք՝ շատ։ Դու պէտք է պանդխտութեան գնաս և դուրսը աշխատանք որոնես, այլապէս քո ընտանիքը ծայրը ծայրին չի կարող հասցնել։ Գալիս ես դու քաղաք և մտնում, դիցուք, չթի գործարան։ Տարօրինակ մի զգացմունք է տիրում սրտիդ, երբ առաջին անգամ կանգնում ես մեքենայի «դազդահի» առաջ.—ծանր է այնտեղ աշխատել։ Աչքդ միշտ չորս պիտի անես, թէ չէ կամ մանածը կը փչացնես կամ՝ ձեռքդ կընկնի մեքենայի տակ։ Բայց ահա կամաց-կամաց դու ընտելացար այդ գործին. աշխատեցիր երկուերեք տարի, գուցէ և աւելի—և սովորեցար դու այդ գործը այնքան, որ քեզանից մի լաւ ջուլհակ դուրս եկաւ։ Դու ապրում ես մի կերպ եօլա գնալով, հաւատացած ես, որ միշտ մի կտոր հաց կունենաս ուտելու.—բայց ահա յանկարծ մի դժբաղդութիւն, մի սովորական դժբաղդութիւն։ Գործարանատէրը յայտնում է, որ ստիպուած է բանուորների կէսը բաց թողնել, որովհետև չթի պահաջ չկայ և գործարանը վնաս է բերում։ Ահա այսպէս քեզ քո ընկերների հետ փողոց են շպրտում։ Դուք կը դիմէք մի ուրիշ չթի գործարանատիրոջ, իսկ նա ձեզ կը պատասխանէ. «Ներեցէք, պարոններ, հազիւ հաց կարողացայ իմ սեփական բանուորներից գլուխ ազատել, նոյն իսկ ստիպուած էի դիմել ոստիկանութեան»։ Եւ այսպէս՝ քո ջուլհակութիւնը քեզ էլ չի օգնում. դու նմանում ես ջրից ցամաք շպրտուած ձկան։ Քեզ ասում են՝ քո կարիքը չունենք,—պրծաւ-գնաց։

Բայց չէ՞ որ ուտել է հարկաւոր, խմել է հարկաւոր։ Ճարահատեալ մտնում ես մի ուրիշ գործարան,—ուր որ ընդունում են։ Դիցուք, քեզ վիճակուեց ընկնել չուգունի ձուլարանը։ Միայն Աստուած գիտէ թէ որքան տառապանք ու դժոխային չարչարանք պիտի կրես դու, մինչև որ մի քիչ ընտելանաս նոր գործիդ և մոռանաս քո ջուլհակութիւնը։ Հազիւ դու ընտելանում ես, և ահա քեզ նորից դուրս են շպրտում, և դու նորից պիտի սովորես մի նոր գործ. ու այսպէս անվերջ, ամեն տեղ

հալածուած,—դու ինքդ չըգիտես, ո՞ւր է քշում քեզ կեանքի հոսանքը, չըգիտես, ո՞րտեղից է գալիս դժբաղդութիւնը։

Եւ կընայես դու չորս կողմդ, կսկիծն ու վիրաւորանքը «կըլցնեն սիրտդ»։ Չէ՞ որ դու էլ մարդ ես, Աստծու կերպարանք ունես,—այն ինչ սեփական կամքի ոյժ քո մէջ այնքան կայ, որքան մի տաշեղի մէջ, որին թեթև ալիքն անդամ դէս ու դէն է գցում։ Եւ այսպէս չար բաղդը դուրս շպրտելով տրորում-ջախջախում է քեզ և ի վերջոյ մի որ և է սալայատակի վրայ կամ պատի տակ է գցում քո կտորտանքները։ «Շանսատակ եղիր», կարծես ուզում է նա ասել դրանով...

Ո՞րն է այն բաղդը, ո՞րն է այն մութ զօրութիւնը, որ այնքան դաժան կերպով իշխում է մարդկանց վրայ, ասես տաշեղների նման խաղում է նրանց հետ և զրկում նրանց իրանց կամքից։ Մեծ է զօրութիւնը։ Ահա ինչ ասաց նրա մասին Նեկրասովը. «Աշխարհումս կայ մի թագաւոր, անողորմ է այդ թագաւորը, սո՛վ է նրա անունը»։

Ահա թէ որն է այդ հզօր ոյժը։ Սովն է, որ մարդկանց տէրն ու տիրականն է։ Բայց սովը սարսափելի չէր լինի, եթէ չըլինէին մարդկային այն դաժան կարգերը, որոնք այնպիսի զարհուրելի ոյժ են տալիս նրան։ Մեր ամբողջ ցաւը հասարակական կարգերից է բղխում. ի՞նչու միքանիսը լաւ են ապրում, շատերը—վատ. ինչու միքանիսը փարթամութեան ու զեղխութեան մէջ են լողում, շատերն մի կտոր հաց անդամ չունեն ուտելու։

Խիստ երկար տանջուեց մարդկային միտքը, մինչի որ գտաւ այդ խնդրի լուծումը, մինչև որ իմացաւ, ո՞րտեղ է հասարակական կարգերի արդարութիւնը և անարդարութիւնը։ Ահա հէնց արդարութեան և անարդարութեան մասին է, որ մենք ուզում ենք այստեղ խօսել. եթէ մեզ յաջողուի պարզել այդ հարցը, այն ժամանակ գուցէ և հեշտ լինի օգնութեան գալ մարդկային թշուառութեան...

I

ԱՇԽԱՏԱԿՑՈՒԹԻՒՆ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄ. ՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆ. ԱՊՐԱՆՔ.

Ներկայ կարգերի էութիւնը աւելի հեշտ հասկանալու համար, ես կըսկսեմ մի քիչ հեռուից։ Եթէ մենք ուզում ենք որ և է մէկին լաւ ճանաչել, նախ և առաջ մենք ծանօթանում ենք նրա անցեալի հետ։ Իսկ երբ մեր առաջն է դրուած նրա անցեալը, մեզ համար դժուար չէ, մանրակրկիտ քննութեան ենթարկելով նրա կեանքը, ասել ի՞նչ մարդ է նա։ Նոյնը կարելի է ասել և ամբողջ մարդկութեան մասին։ Եթէ մենք իմանանք, ի՞նչպէս է նա ապրել հին ժամանակներից սկսած, ի՞նչպէս է նա հասել իր ներկայ դրութեան,—մեզ համար շատ բան կը պարզուի։

Շատ հին ժամանակներում ամբողջ մարդկութիւնը ապրում էր այնպէս, ինչպէս կիսաժերկ վայրենիները ապրում են այժմ անտառների ու այրերի մէջ՝ զուրկ գիւղերից ու քաղաքներից, ճանապարհներից ու կամուրջներից։ Ողորմելի արարած է այդ վայրենին. Փոքր ոյժի տէր, նա բնութիւնից ոչ մի զէնք չէ ստացել։ Ձանազան յարձակումներից պաշտպանուելու համար բնութիւնը եղին եղջիւրներ է տուել, գայլին սուր ատամներ, առիւծին՝ ամուր ճանկեր։ Իսկ վայրենու զէնքը ո՞րն է։ Միայն՝ ծայրը սրած մի փայտ։ Բայց չէ՞ որ վայրենին էլ է ուզում ապրել, չէ՞ որ նա էլ պէտք է կերակուր ճարէ, և, որ գլխաւորն է, իր կաշին թշնամի-գազաններից պաշտպանի։ Պարզ է, որ այն ժամանակ, երբ առիւծը կամ արջը ամեն օր ձեռք են գցում ճաշի համար կամ եզ կամ եղջերու, վայրենին ստիպուած է ամեն տեսակ անպէտք բաներով կերակրուել։ Իսկ ինչ վերաբերում է թշնամիներին, պէտք է ասել, որ վայրենուց ուժեղ ամեն մի գազան՝ իր քէֆն ուզածի չափ վիրաւորում է նրան և նոյն իսկ չի քաշւում նրան իր կերակուրը դարձնել։ Մեր թշուառ վայրենին միայն լալիս ու հառաչում է այդօրինակ կարգերից, Ո՞ւմից նա օգնութիւն և պաշտպանութիւն հայցէ, եթէ ոչ իր նման թշուառ վայրենիներից։ Եւ ա-

հա կամաց-կամաց մեր վայրենիները սկսում են հաւաքուել. նրանք զգում են իրանց աւելի սրտոտ։ Առաջին անգամից նը-
րանց յաջողուեց սպանել մի մեծ եղջերու, որին նրանք մի ամ-
բողջ օր էին ուտում։ Իսկ երբ արջը իր քիթը նրանց մօտ կո-
խեց,—նրանք վրայ պրծան միասին և մի լաւ դաս տուին նրան
նրա նախկին մեղքերի համար։ Եթէ վայրենիները չը միա-
նային և առաջուայ պէս առանձին-առանձին ապրելու լինէին,
այն ժամանակ ոչ-ոք եղջերուի միսն անգամ չէր տեսնի, ինչ-
պէս իր ականջները, և գուցէ շատերն էլ արջի բերանն ըն-
կնէին նախաճաշի համար։ Իսկ այժմ ամեն մէկը եղջերուի միս
էլ կերաւ, արջից էլ իր վրէժը առաւ։ Մեր վայրենիները այս
բանը իրանց միտքն են պահում. նրանք գլխի են ընկնում, որ
միասին գործելը շատ աւելի ձեռնտու է, կարելի է խոշոր
կենդանիներ էլ որսալ, գայլերին ու արջերին էլ այնպէս վա-
խեցնել, որ նրանք երբէք չը մոռանան մարդու ոյժը։ Բաւա-
կան է միայն, որ միասին ապրելու և գործելու օգտակարու-
թեան միտքը մտնի վայրենիների գլուխը,—նրանք այլևս մի-
միանցից պոկ չեն գայ՝ նախկին անօգնական առանձին կեանքը
վարելու համար։ Եւ այսպէս մենք տեսնում ենք, որ ընկերովի
ապրելու պատճառն է կարիքը և անօգնականութիւնը։ Ոյժերի
այնպիսի միացումը, երբ մարդիկ ընկերանում են կերակուր
ճարելու և թշնամիներից պաշտպանուելու նպատակով, կոչւում
է աշխատակցութիւն։

Աշխատակցութեան ամբողջ ձեռնտութիւնը և անհրաժեշ-
տութիւնը ցոյց տալու համար ես կը բերեմ հետևեալ օրինա-
կը։ Դիցուք պէտք է մի տեղից մի ուրիշ տեղ փոխադրել 10
հատ 20 փթանոց երկաթէ ձողեր։ Այդ գործը գլուխ բերելու
համար յանձն են առնում 10 մարդ։ Եթէ նրանցից ամէն մէկը
ուզէ մի մի հատ մենակ տեղափոխել, նա չը պիտի կարողանայ
տեղից անգամ շարժել, եթէ նոյնիսկ հարիւր տարի չարչարւի։
Իսկ եթէ բոլոր տասն էլ իրանց ոյժերը միացնեն, նրանք կը
վերցնեն առանց դժուարութեան նախ մէկը, յետոյ երկրորդը,
երրորդը և այլն։ Այժմ մենք կարող ենք ասել, որ կարիքն ու
անօգնականութիւնը միացնում են մարդկանց եւ ստիպում միա-
սին աշխատել եւ ապրել համայնական, հասարակական կեանքով։

Իւրաքանչիւր համայնք իր կողմից պէտք է հոգ տանի իր
ապահովութեան և գոյութեան միջոցների մասին, եթէ նա ի
հարկէ կորչել չի ուզում։ Օգտուելով մարդկային մտքի և գի-
տութեան առաջադիմութիւնից, ամեն մի համայնք աշխատում
է բարւոքել իր կեանքը ըստ կարելւոյն,—նա վարում է, ցա-
նում է, անասուններ է պահում, հաւաքում է բերքը և այլն։
Բայց աշխարհիս երեսին բոլոր տեղերն էլ միատեսակ յատկու-
թիւններ չունեն, ուստի և բոլոր համայնքները չեն կարող մի-
ևնոյն աշխատանքով պարապել։ Մի համայնքի ձեռքը սև հող
ընկնի՝ նա շատ ցորեն կը ցանի. մի ուրիշի ձեռքը արօտատեղի
ընկնի՝ նա գլխաւորապէս անասնապահութեան վրայ ուշք կը
դարձնէ։ Երրորդին վիճակուի ճահճային մի տեղ՝ թէև հացը այս-
տեղ լաւ չի բսնի, սակայն ճահճի մէջ երկաթի հանք կայ,
—և ահա համայնքը գարբնութեամբ է պարապում։

Մի խօսքով իւրաքանչիւր համայնք ձգտում է գտնել մի
անպիսի գործ, որը նրան ամենից շատ է ձեռնտու։ Նայենք
այժմ, թէ ինչ է դուրս գալիս սրանից։ Մի համայնք, դիցուք,
շատ հացի ունի, իսկ կացին և առհասարակ երկաթեղէն չունի,
իսկ մի ուրիշը երկաթեղէն շատ ունի, իսկ հաց՝ քիչ։ Ի՞նչ
անել։ Բանից դուրս է գալիս, որ թէ մէկին և թէ միւսի գը-
րութիւնն էլ վատ է։ Եւ ահա զանազան համայնքների անդամ-
ները պատահմամբ կամ հարց ու փորձով միմիանց գտնում են։
Մի քանիսը յայտնում են, որ իրենք ունեն առատ ցորեն, մինչ
երկաթի գործիքներ պակասում են նրանց. այնինչ միւսներն
էլ ասում են, թէ երկաթ ինչքան ուզես ունեն, իսկ հացը պա-
կասում է։ Պարզ է, որ ինքն ըստ ինքեան նրանց մէջ կայանում
է փոխանակութիւն։ Նրանք փոխանակում են իրանց ունեցած
բարիքը և այդպիսով երկու համայնքում էլ հաւ հաց, հաւ եր-
կաթեղէն է լինում բաւականաչափ։ Մի անգամ արդէն իրար
հետ ծանօթանալով՝ յետոյ նրանք հետևեալ տարիները շարու-
նակում են նոյնպէս փոխանակել իրանց աշխատածը, կամ ինչ-
պէս ասում են գիտական լեզուով, նրանք փոխանակում են
իրանց արդիւնքները։

Երբ գործը բաւական կարգի է ընկնում, մեր դարբին-
ները սկսում են այսպէս մտածել. «Մեր ճահճուտը հացի հա-

մար անբերրի մի տեղ է, իզուր ենք մենք մեր ժամանակը կորցնում այդ գործի համար. արիք երկրագործութիւնը բոլորովին թողնենք և զբաղուենք միմիայն դարբնութեամբ։ Ինչոր կպատրաստենք՝ հարևանների հետ հացով և ուրիշ անհրաժեշտ առարկաներով կը փոխանակենք։ Մեզ՝ երկու համայնքներիս համար էլ անհրաժեշտ է ունենալ թէ հաց և թէ երկաթեղէն»։ Եւ ահա այսպէս են անում. մի համայնք պարապում է միմիայն դարբնութեամբ, իսկ միւսը միմիայն երկրագործութեամբ, և վերջը իրար հետ փոխանակում են սեփական արդիւնքները, այսպիսով նրանք բաժանում են իրար մէջ աշխատանքը, նրանք իրագործում են աշխատանքի բաժանումը։ Որովհետև ամեն մի համայնք ձգտում է պարապել միայն այն գործով, որը նրան ամենից աւելի ձեռնտու է, ուստի և շատ համայնքների միջև առաջանում է աշխատանքի բաժանումը, և այնուհետև արդիւնքների փոխանակութիւնը։

Բացի դրանից աշխատանքի բաժանումը առաջանում է և համայնքի ներքին կեանքում։ Մէկը, դիցուք, սարսափելի ոյժի տէր է և կարող է ծառերը իրանց արմատով դուրս քաշել։ Ի՞նչ ասել կուզի, որ նա դաշտի լաւ աշխատաւոր է. բայց ստիպիր նրան կօշիկներ կարել, և նա այնպիսի կօշիկներ կը-կարէ, որ «երես ելնելու բան» չի լինի։ Իսկ մի ուրիշը, որ գերանդին անգամ հազիւ է վեր բարձրացնում, կօշիկներ կարելու վարպետ է։ Երկուսն էլ անշուշտ և՛ հացի և՛ կօշիկների կարիք ունեն։ Բայց որպէս զի հողագործը իզուր տեղը չը չարչարուի մախաթի, իսկ կօշկակարը՝ գերանդու վրայ, նրանցից իւրաքանչիւրը միայն մի գործ է կատարում,—հողագործը հացահատիկներ է ցանում, իսկ կօշկակարը կօշիկներ է կարում և վերջը երկուսն էլ փոխանակում են իրանց արդիւնքները։ Այսպիսով նրանք բաժանում են իրար մէջ աշխատանքը։ Եւ որովհետև առհասարակ իւրաքանչիւր մարդ աւելի մեծ յօժարութեամբ այնպիսի գործի է կպչում, որը նրա սրտին ժօտ է ու ընութեանը համապատասխան,—ուստի համայնքի մէջ էլ անպատճառ առաջ է գալիս աշխատանքի բաժանումը։ Եթէ համայնքում 30 մարդ կայ,—նրանցից, դիցուք, 17-ը վարուցանքով կըպարապի, 2-ը՝ կօշկակարութեամբ 3-ը՝ դերձակու-

թեամբ, 2-ը՝ դարբնութեամբ, 5-ը՝ հիւսնութեամբ, 1-ը՝ վառարաններ շինելով։ Նրանցից ամեն մէկը կատարում է միմիայն մի գործ, իսկ բոլորը միասին նրանք պատրաստում են այն բոլորը, ինչ անհրաժեշտ է համայնքի գոյութեան համար, —հաց, կօշիկներ և այլն։ Համայնքի բոլոր անդամները աշխատակցում են, աշխատանքը բաժանուած է,—իւրաքանչիւրը մի գործ կատարելիս, լաւ գիտէ, որ «եթէ երկու նապաստակների յետևից ընկնես, ոչ մէկն էլ չես բռնի»։

Աշխատանքի բաժանման ձեռնտու լինելը կարելի է տեսնել հետևեալ օրինակից։ Լաւ կօշկակարը մի զոյգ կօշիկը երկու օրում կըկարէ. իսկ եթէ դարբինը իր գործը վայր դցեց և ուզեց կօշիկներ կարել,—նրան երկու շաբաթն էլ հերիք չի անի։ Նոյնը կը լինի և այն ժամանակ, երբ կօշկակարը ուզի դարբնութիւն անել։ Մի խօսքով, աշխատանքի բաժանման ժամանակ իւրաքանչիւր մարդ, որ ընտրել է գործի մի մասը, սովորում է այդ մասը և աշխատում է աւելի լաւ ու արագ, քան եթէ նա իր ձեռքում տասը գործ ունենար։

Աշխատանքի բաժանումը դարձնում է աշխատանքը աւելի դիւրին և արդիւնաւէտ կամ, ինչպէս ասում են, աւելացնում է աշխատանքի արդիւնաւէտութիւնը։

Որովհետև աշխատանքի բաժանման ժամանակ ամեն մի մարդ արտադրում է իրան հարկաւոր արդիւնքներից մէկը միայն, ինքն ըստ ինքեան պարզ է, որ նա պէտք է իր արդիւնքները փոխանակէ այնպիսի արդիւնքով, որ նրա ժօտ չը կայ։ Օրինակ, կօշկակարը, որը արտադրում է միայն կօշիկներ, պէտք է նրանց փոխանակի հացի, ազի, շորերի հետ։ Նոյնպէս պիտի վարուեն բոլոր արտադրողները (արդիւնաբերողները)։ Այսպիսով աշխատանքի բաժանման դէպքում պէտք է անպատճառ գոյութիւն ունենայ արդիւնքների փոխանակութիւնը։

Իւրաքանչիւր արդիւնաբերող իր սեփական անձի համար արտադրում է իր արդիւնքի մի փոքրիկ քանակութիւնը։ Կօշկակարը, որ 150 զոյգ կօշիկ է կարում մի տարուայ ընթացքում, պահում է իր համար, դիցուք, երկու զոյգ։ Մնացած 148 զոյգը նա արտադրում է ուրիշ անհրաժեշտ արդիւնքնե-

ռով փոխանակելու համար։ Այդ 148 զոյգը, որ ծառայում է ոչ սեփական գործածութեան, այլ ծախելու կամ փոխանակելու համար, ապրանք է կոչւում։

Դուրս է գալիս, որ աշխատանքի բաժանումը անհրաժեշտ է դարձնում փոխանակութիւնը և ստիպում է մարդկանց արտադրել առարկաներ փոխանակութեան (կամ ծախու) համար, այսինքն արտադրել ապրանքներ։

Եթէ մտաբերենք այս հատուածի մէջ բոլոր ասածները, մենք կը գանք այն եզրակացութեան, որ կարիքն ու անօգնականութիւնն է, որ ստիպում են մարդկանց միանալ, կազմել հասարակութիւններ և դիմել աշխատակցութեան։ Այնուհետև տեղական պայմանների և առանձին մարդկանց ոյժերի ու ընդունակութիւնների տարբերութիւնը առաջ է բերում աշխատակցութեան մէջ աշխատանքի բաժանումը, ինչպէս առանձին համայնքների, այնպէս էլ միևնոյն համայնքի անդամների միջև։ Աշխատանքի բաժանումը իր կողմից առաջ է բերում արդիւնքների փոխանակութիւնը և արդիւնքների արտադրութիւնը փոխանակութեան համար, այսինքն ապրանքների արտադրութիւնը։

II

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԷՔԸ

Մենք արդէն գիտենք, որ աշխատանքի բաժանումը առաջ է բերում անպատճառ ապրանքների փոխանակութիւնը։ Այժմ հարց է ծագում, ինչպէս իմանալ թէ որքան ապրանք պէտք է տալ մի ուրիշ ապրանք ձեռք բերելու համար։

Վերցնենք սկզբում դիտմամբ ամենապարզ օրինակը։ Կօշկակարը ուզում է փոխել մի զոյգ կօշիկներ ջուլհակի քաթանի հետ։ Որքան քաթան պիտի ստանայ նա իր կօշիկների փոխարէն. Ի հարկէ, կօշկակարը կ'աշխատի, որքան կարելի է շատ քաթան ստանայ, իսկ ջուլհակը՝ որքան կարելի է քիչ տայ կօշիկների համար։ Ի՞նչ պայմաններով նրանք կարող են համաձայնութեան գալ։ Եթէ կօշկակարը ուզէ իր կօշիկների փոխարէն խիստ շատ քաթան, դիցուք 40 արշին ստանալ,—

ջուլհակը անպատճառ պիտի ասէ նրան. «Ինչ խելօք ես. կօշիկներդ երկու օրում ես կարել, իսկ ինձանից 40 արշին քաթան ես ուզում։ Չե՞ս հասկանում խելօք, որ քաթանի վրայ 4 օր եմ ես աշխատել»։ Եթէ ընդհակառակը ջուլհակը միայն 10 արշին քաթան առաջարկում է կօշկակարին վերջինիս կօշիկի համար, կօշկակարը կ'ասէ նրան. «Ի՞նչ ուստայ մարդ ես երկու ամբողջ օր ես աշխատել եմ մէջքս երկու տակ արած մի զոյգ կօշիկի վրայ, իսկ դու միայն մի օր ես աշխատել 10 արշին քաթան գործելու համար։ Չէ, ախպէր, շատ կը լինի 10 արշին քաթանի տեղ մի զոյգ կօշիկ տալ, չէ, համարժէք չեն»։ Բայց որովհետև քաթանը կօշկակարին խիստ պէտք է վարտիկի համար, իսկ ջուլհակը վաղուց արդէն ոտաբոբիկ է ման գալիս,—պէտք է մի կերպ եօլայ գնալ։ Եւ ահա ջուլհակը ասում է կօշկակարին. «Լսիր, սիրելիս, դու քո կօշիկները երկու օրում կարեցիր. շատ բարի. ուրեմն ինձանից էլ դու ստացիր նոյնքան քաթան, որքան ես գործել եմ 2 օրում։ Ահա քեզ 20 արշին քաթան։ Այսպիսով ոչ քեզ վնաս կը լինի, ոչ էլ ինձ»։ Այսպէս էլ անում են։ Մենք տեսնում ենք սրանից, որ ջուլհակը ու կօշկակարը գնահատում են ապրանքները համաձայն այն ժամանակի, որ նրանցից ամեն մէկը գործադրել է ապրանքներ արտադրելու համար։

Ի՞հարկէ, իւրաքանչիւր կօշկակար չը գիտէ, որքան ժամանակուայ մէջ ջուլհակը մի արշին քաթան կը գործէ. միւս կողմից ոչ էլ իւրաքանչիւր ջուլհակ գիտէ, որքան ժամանակի ընթացքում կօշկակարը մի զոյգ կօշիկ կը կարէ. — չէ՞ որ ամեն մի արհեստաւոր չի կարող հարկաւոր տեղեկութիւնները ունենալ բոլոր արհեստների մասին։ Բայց եթէ մի քանի անգամ մեր ջուլհակն ու կօշկակարը անկարող են իմանալ, որքան ապրանք պէտք է ստանայ ամեն մէկը,—այնուամենայնիւ վերջիվերջոյ նրանք իրանց ապրանքները կը գնահատեն էլի համաձայն գործադրած ժամանակի։ Ահա թէ ինչպէս. դիցուք, կօշկակարները սկսեցին խաբել ջուլհակներին և իւրաքանչիւր զոյգ կօշիկի համար վերցնել 20 արշին քաթանի տեղ 25 արշին։ Այդ դէպքում կօշկակարութիւնը ջուլհակութիւնից աւելի ձեռնտու արհեստ կը դառնար. կօշկակարները քէֆով կ'ապրէին, իսկ ջուլհակ-

ները գիշեր-ցերեկ գլուխները կախած պիտի աշխատէին։ Մարդս ձգտում է աւելի լաւ ապրել,—ուստի և շատ ջուլհակներ կը սկսեն իրանց զաւակներին կօշկակարութիւն սովորեցնել, և մի քանի տարուց յետոյ այնքան կօշկակարներ առաջ կը գան, որ նրանց կօշիկների համար գնող էլ չի գտնուի։ Կօշկակարները, իրենց ապրանքը մի կերպ ծախելու համար, ստիպուած են կամաց-կամաց մէկ մէկու դէմ մրցելով կօշիկների գինը իջեցնել. գործը այն տեղ կը հասնի, որ նրանք ուրախ կը լինեն մի զոյգ կօշիկը փոխել ոչ միայն 20 արշին քաթանով, այլ 15 արշինով։ Այսպիսով կօշկակարութիւնը այլ ևս ձեռնտու արհեստ չի լինի, և քչերը նրանով կը պարապեն. այդ դէպքում կօշիկների գինը նորից կը բարձրանայ, որովհետև կօշիկներ այժմ քիչ կան։ Եթէ ջուլհակները սկսէին խաբել կօշկակարներին, հիւսներին, հողագործներին և ուրիշներին, նոյն բանը պիտի դուրս գար։ Շատերը կը զբաղուէին քաթանի արտադրութիւնով, կը պատրաստէին չափից դուրս շատ քաթան, և քաթանը այնքան կ'արժանանար, որ ջուլհակութիւնը այլևս ձեռնտու չէր լինի։ Վերջ ի վերջոյ մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ ապրանքների գինը որոշողը այսպէս թէ այնպէս պէտք է լինի այն ժամանակը, որ գործադրւում է նրանց վրայ։ Դուրս է գալիս, որ մարդիկ՝ ապրանքները փոխանակելու դէպքում՝ իրօք փոխանակում են իրանց հաւասար աշխատանքները, այսինքն մօտաւորապէս հաւասար ժամանակ է աշխատում մէկը միւսի համար։

Այլապէս ինչպէս կարող են գնահատել ապրանքները։ Առաջին հայեացքից գուցէ թուայ որ ապրանքները կարող են գնահատուել համաձայն այն օգտի, որ նրանք բերում են մարդկանց,—որքան օգտակար է ապրանքը, այնքան աւելի են տալիս նրա համար։ Սակայն, եթէ ապրանքները գնահատուէին համաձայն իրանց հասցրած օգուտի, այնուամենայնիւ դրանից ոչինչ դուրս չի գալ, բացի խառնաշփոթութիւնից։ Այսօր մէկը կօշիկների համար ուրախ է երեք անգամ աւելի գին տալ.—սաստիկ ցուրտ է, և նա չի կարող շարունակել բորիկ մնալ. վաղը, երբ նա իր հագին ունի արդէն կօշիկներ, ձրի էլ տան, գուցէ չը վերցնի։ Վերջապէս, ինչպէս կարելի է իմանալ, որ ապրանքը աւելի օգտակար, աւելի անհրաժեշտ է։ Այսօր ինձ կօշիկներ է պէտք, վաղը՝ քաթան։ Այսօր ինձ հաց որ ձրի տան չեմ վերցնի, իսկ վաղը ինձ պէտք կը լինի և՛ հաց և՛ կօշիկներ և՛ քաթան։ Օդը և ջուրը բոլորին էլ անհրաժեշտ են, բայց նրանց համար ոչ ոք փող չի տալիս, որովհետև և՛ օդը և՛ ջուրը մարդս ձեռք է բերում ոչ իր աշխատանքով, այլ ձրի, բնութիւնից։ Բայց ջրի համար պէտք է փող վճարել միայն այն դէպքում, երբ նրա ձեռք բերելու համար աշխատանք է գործադրւում։ Օրինակ, քաղաքներում ջրի համար պէտք է վճարել կամ ջրկրին կամ ջրանցքի համար։ Ուրեմն, ապրանքը գնահատւում է համաձայն այն աշխատանքի, որ գործադրուած է նրա ձեռք բերելու կամ արտադրելու համար։

Այդ լաւ. բայց երևակայենք մի այսպիսի դէպք։ Մեր կօշկակարը, որ ուզում է իր կօշիկները քաթանի հետ փոխել, շատ է սիրում խմել և հարբած լինելով՝ կօշիկների վրայ մէջք է ծռել ոչ երկու, այլ ամբողջ չորս օր։ Ենթադրենք, որ հէնց այդ պատճառով նա մտածում է ջուլհակից 20 արշին քաթանի տեղ 40 արշին վերցնել։ «Ես աշխատել եմ 4 օր, կասէ նա, դու էլ կօշիկներիս փոխարէն տուր այնքան քաթան, որքան դու գործել ես 4 օրում. տուր 40 արշին»։ Այն ժամանակ ամեն մի մարդ էլ կը պատասխանի մեր կօշկակար եղբօրը. «Սիրելիս, ես խորհուրդ կը տամ քեզ որքան կարելի է շատ խմել և մի տաք անկիւնում ընկած քէֆ քաշել, այն ժամանակ ոչ թէ 4 օրում, այլ 10 օրումն էլ հազիւ կըկարէիր մի զոյգ կօշիկներդ. չէ եղբայր. գնա մի այնպիսի ախմախին գտիր, որ քեզ կօշիկներիդ համար 100 արշին քաթան տայ։ Իսկ ես կը գտնեմ այնպիսի կօշկակար, որ 2 օրում է կարում մի զոյգ կօշիկը և որը ինձանից նրա համար միայն 20 արշին քաթան կուզէ»։ Այսպէս պիտի ասէր ջուլհակը. և կօշկակարը ճարահատեալ իր կօշիկները 20 արշին քաթանով պիտի փոխէր, ի հարկէ եթէ չէր ուզում վերադառնալ տուն կօշիկների հետ։ Ուրեմն կօշկակարը անարդար էր վարւում, երբ 4 օր մէջքը ծռած լինելով մի զոյգ կօշիկների վրայ՝ նա պահանջում էր ոչ 20 արշին քաթան, այլ աւելի։

Այսպիսով, մեր կօշկակարը պէտք է իր ապրանքը

գնահատէ համաձայն ոչ այն ժամանակի, որ ինքն է գործադրել իր կօշիկների վրայ, այլ այն, որ իսկապէս անհրաժեշտ է մի զոյգ կօշիկներ կարելու համար։ Եթէ կօշկակարները 2 օրուայ մի-մի զոյգ կօշիկ են կարում, այդ դէպքում և նրա կօշիկները պիտի գնահատուեն երկու օրուայ աշխատանքով, եթէ նոյնիսկ պատմամբ նա աւելի ժամանակ է գործ դրել նրանց վրայ։

Մի խօսքով, մեր արհեստաւորները ապրանքները փոխանակելիս գնահատում են համաձայն այն ժամանակի, որ անհրաժեշտ է նրանց արտադրելու համար կամ ինչպէս ընդունուած է ասել, ապրանքների արժէքը չափւում է աշխատանքի այն քանակութեամբ, որ անհրաժեշտ է նրանց արտադրութեան համար։ Այս օրէնքը մենք մեր միտքը պահենք, այլապէս անհնար կըլինի հասկանալ այն բոլոր տնտեսական կարգերը, որոնք այնքան ցաւ են բերում աշխատաւոր դասակարգին։

III

ՓՈՂ

Կօշիկներն ու քաթանը, ինչպէս մենք տեսանք վերևում փոխանակւում էին միմիանց հետ այնպէս, որ այդ երկու ապրանքների մէջ էլ պարունակւի աշխատանքի միաչափ քանակութիւն *)։ Մի զոյգ կօշիկները, որոնց արտադրութեան համար 2 օրուայ աշխատանք էր պէտք, փոխանակում էին 20 արշին քաթանով, որի արտադրութեան համար նոյնպէս 2 օրուայ աշխատանք էր հարկաւոր։ Եւ առհասարակ շուկայում գտնւող բոլոր ապրանքները կարող էին փոխանակւել

*) Այդպէս էր հենց հին ժամանակներում, երբ մարդկանց միջև գոյութիւն ունէր ապրանքների հասարակ փոխանակութիւն։ Շնորհիւ այդ փոխանակութեան մարդիկ աշխատում էին միմեանց համար, փոխադարձ ծառայութիւններ էին մատուցում իրար այնպէս, որ ոչ-ոքի էլ վնաս չէր կպչում (մարդիկ աշխատում էին միմիանց համար մօտաւորապէս հաւասար չափով)։

Г.О.Р.А. Публичная Библиотека
7/II--1922
Именна. Мясникяна
Ц. Ղանալանի անվան

1003
11462

միմիանց հետ այն դէպքում միայն, երբ նրանց մէջ պարունակում էր աշխատանքի միաչափ քանակութիւն։ Օրինակ, եթէ 4 փութ ցորեն արտադրելու համար հարկաւոր է 2 օր, մի զոյգ կօշիկների համար նոյնպէս 2 օր, 20 արշին քաթանի՝ 2 օր, 5 արշին մահուդի՝ 2 օր, և մի հայելու համար նոյնպէս 2 օր,—այդ ժամանակ կարելի էր բոլոր այդ ապրանքները փոխանակել մէկը միւսի հետ։

Այժմ երևակայենք մի այսպիսի դէպք։ Դիցուք, մեր կօշկակարին քաթան է պէտք։ Նա կարեց կօշիկներ և գնաց Ջուլհակի մօտ փոխանակութեան համար։ Հակառակի պէս Ջուլհակը միայն երեկ էր կօշիկներ ձեռք բերել և բոլորովին չէր ուզում իր քաթանը փոխել մի նոր զոյգ կօշիկների հետ. «Ինչի՞ս է պէտք երկու զոյգը. ինձ պէտք է չիթ՝ կնոջս համար։ Եթէ որևէ կտոր ունենայիր, դուցէ և փոխանակէի հետդ»։

Կամաց կամաց կօշկակարը գնում է մի ուրիշ Ջուլհակի մօտ, յետոյ՝ երրորդի մօտ և այլն, և ամեն տեղ նոյն պատմութիւնը,—ոչ ոք էլ կօշիկների կարիք չ'ունի։ Ցաւում է կօշկակարը, որ նա հացթուխ չէ.—հացը հեշտ ծախուող ապրանք է,—այսօր ուտում ես, վաղն էլ է քեզ պէտք. հացը աւելի հեշտ է ուրիշ ապրանքների հետ փոխելը, քան կօշիկները։ Բարեբախտաբար հացթուխը համաձայնուեց կօշիկները փոխել հացի հետ։ Հացը ձեռին՝ կօշկակարը գնաց Ջուլհակի մօտ, և վերջապէս ստացաւ նրանից քաթանը։ Բայց հացթուխն էլ էր գանգատւում իր բաղդի վրայ. ճիշտ է, նրա ապրանքը բոլորին էլ պէտք է, առանց նրան մարդ չի կարող եօլայ գնալ,—սակայն երբեմն հացն էլ դժուար է ծախել. օրինակ անասնապահը մի կով ունի, որը հացթուխին հարկաւոր է, սակայն թէև հացը նրան ամեն օր էլ պէտք է, միայն խիստ շատ հաց պէտք է կովի փոխարէն վերցնել. իսկ հացը չէ՞ որ չի կարելի երկար պահել—չորանում է, փթում։ Այդ կողմից հեշտ չէ և անասնապահի դրութիւնը։ Ճիշտ է, անասունը ամենքին էլ պէտք է, և մարդ կարող է պահել նրան, ինչքան ուզէ,—ոչ փչանալ գիտէ, ոչ չորանալ, ինչպէս հացը... Բայց դիցուք նրան ասեղ է պէտք,—ինչպէս ասեղը փոխի կովի կամ ոչխարի հետ, այնքան կը տան մի կովի կամ ոչխարի համար, որ ամ-

բողջ կեանքումդ էլ չես վերջացնի։ Աւելի ձեռնտու և յարմար է ձեռք բերել ամենից հեշտ ծախուող ապրանքը, որի հետ իւրաքանչիւր մարդ կը համաձայնուի ապրանք փոխել. եթէ այդ ապրանքը շուտով չի փչանում և հեշտութեամբ մասերի է բաժանուում,—այդ դէպքում նրա հետ կարելի է փոխել ամեն տեսակ ապրանք,—մեծ էլ, փոքր էլ... Այսպիսի ապրանքը կը լինի մեր փողի նման փոխանակութեան մի յարմար միջոց, որով կարելի է ամեն ինչ առնել ու ծախել։

Պարզ է, որ ամենքը ձգտում էին նախ և առաջ իրանց ապրանքները փոխել այդ ապրանքների հետ, իսկ յետոյ նրա միջոցով ձեռք բերել հարկաւոր առարկաները. Այդպիսով այդ ապրանքը կամաց կամաց-կամաց դառնում է փոխանակութեան միջոց *) Երբ երևան եկաւ փողը, հեշտացաւ բոլոր ապրանքների արժէքը իմանալը, հեշտացաւ և նրանց միմիանց հետ համեմատելը իրանց արժէքի համաձայն. բոլոր ապրանք-

*) Այդ նպատակի համար զանազան ժամանակներ, զանազան տեղերում մարդիկ ընտրում էին զանազան ապրանքներ։ Մեծ մասամբ ընտրում էին այն առարկաները, որոնցից այդ երկրում շատ կար։ Մեր նախնիքը, սլաւոնական ազգերը, փոխում էին գազանների մորթիները արտասահմանի ապրանքների հետ, որովհետև այն ժամանակներում անտառի մէջ շատից դուրս շատ գազաններ կային, և օտարերկրացի վաճառականները հաճութեամբ էին վերցնում մուշտակներ ու մորթիներ։ Ուրիշ տեղերում իրրև փոխանակութեան միջոց անասուններն էին ծառայում.—նրանք առում էին այս բանը արժէ այսքան ոչխար, այսքան կով կամ այսքան ձի։ Այժմս էլ կան վայրենիներ, որոնք բոժոժներով են փոխանակում. (այդ բոժոժները նրանք զարդարանքների տեղ են գործածում և շատ են սիրում). Նրանք հաւաքում են բոժոժները ծովի ափին, անց են կացնում նրանց թելի վրայ և փոխանակում են նրանց միջոցով։

Բայց այդ բոլոր ապրանքները այնքան էլ յարմար չէին, որպէս զի նրանց հետ կարելի լինի փոխել բոլոր ապրանքները։ Նրանց արժէքը տարէց-տարի փոփոխութեան է ենթարկւում (եթէ դնահատենք նրանց՝ իրանց վրայ գործադրած աշխատանքի համաձայն),—մերթ իջնում, մերթ բարձրանում է։ Ուրեմն, երբեք չես կարող իմանալ ճշտօրէն, թէ որքան կըստանաս ապրանքիդ փոխարէն այնպիսի ապրանք, որով հեշտ լինի արդէն փոխել բոլոր միւս ապրանքները։ Այդ ի հարկէ անյարմար է։ Անյարմար է նաև այն, որ այդ ապրանքները (հաց, անասուն, մուշտակ) շուտ են փչանում, պահելն էլ անյարմար է, և բացի այդ մեծ տեղ են բռնում։ Այդ պատճառով մարդիկ սկսեցին բոլոր ապրանքների փոխանակութեան ժամանակ դի-

ները սկսեցին փողի վերածել։ Օրինակ արժէքները համեմատելու մէջ փողը նոյն դերն է խաղում, ինչ որ ֆունտերը և փութերը առարկաների ծանրութիւնը որոշելու մէջ։ Օրինակ, թէ՞ինչպէս մենք կարող կլինէինք միմիանց հետ համեմատել երկու զանազան քարերի ծանրութիւնը, եթէ մենք նրանց չբվերածէինք ֆունտերի կամ փութերի։

Ինչպէս որ կշռաքարերով կարելի է որոշել ուրիշ առարկաների ծանրութիւնը, որովհետև առաջինները իրանք ծանրութիւն ունեն, նոյնպէս և փողը. ապրանքների արժէքը կարելի է վերածել փողի միայն այն պատճառով, որ ինքը փողը արժէք ունի։ Փողը կտրում են ոսկուց և արծաթից, որոնք հեշտ ծախուող ապրանքներ են։ Արծաթը արժէք ունի ոչ միայն իբրև փող,—մենք գիտենք, որ արծաթէ ամանները, արծաթէ զարդարանքները գործադրութեան մէջ մտան աւելի առաջ, քան արծաթէ դրամները։ Արծաթից միայն այն պատճառով սկսեցին փող կտրել, որ նա կայուն գին ունի, որ նրա մանր

մել այնպիսի ապրանքների օգնութեան, որոնց արժէքը չի ենթարկւում յաճախակի փոփոխութեան, որոնք շուտ չեն փչանում և շատ տեղ չեն բռնում։ Այդ ապրանքներն են ոսկին և արծաթը։ Փոխանակութեան համար նրանց գործածութիւնը ձեռնտու է և այն բանով, որ ոսկու կամ արծաթի կտորը կարելի է մանր մասերի բաժանել. և ամենափոքր մասնիկն անգամ գին կ'ունենայ։ Ուրեմն ոսկու և արծաթի վրայ կարելի է փոխել և՛ մանր և՛ խոշոր, և՛ թանգ և՛ էժան իրեր։ Յարմար է մի բան էլ, այն, որ եթէ պէտք լինի, կարելի է ոսկու էլ արծաթի էլ մասերը կրկին հալել. իսկ միւս ապրանքները փչանում են, երբ նրանց կտրտում են։ Ձեռնտու է և այն, որ ոսկու և արծաթի մասերը հաւասար են, նման չեն գազանների մորթիներին։ Մորթի էլ կայ, մորթի էլ։ Եթէ ասես, որ այս ինչ կովը արժէ 5 արծաթի ոսկի,—այդ բաւական չէ, պէտք է ասես անպատճառ, ինչ տեսակ մորթիներ են. կան այն տեսակ մորթիներ, որ ամեն մէկը մի-մի կով արժէ։ Իսկ ոսկին ու արծաթը այնպէս չեն. իսկական ոսկին ու արծաթը ամեն տեղ նոյնն են։ Եւ ահա փոխանակութեան յարմարութեան համար մարդիկ սկսեցին ոսկին և արծաթը հաւասար կշիռ ունեցող կտորների բաժանել։ Արծաթի կտրած մասերը սկսեցին ռուբլ անուանել. (ռուսերէն՝ рубль. рубить խօսքից է, որ նշանակում է կտրտել)։ Սկզբում ռուբլ էին անուանում զանազան հասարակ կտորներ, յետոյ սկսեցին նրանց միատեսակ շինել. որպէս զի խաբերայութիւն չը լինի, և արծաթի հետ ուրիշ մետաղ չը խառնեն, վճռեցին դուրս տալ նոյն ռուբլները միմիայն պետական գանձարանից, պետական արժէքով և առանձին մակագրութեամբ։

կտորներն անգամ մեծ գին ունեն, չեն փչանում և այլն. մի խօսքով, որ նա փոխանակութեան համար յարմար ապրանք է։ Եթէ հողի տակից 4 զօլոտնիկ արծաթի մի կտոր հանելու համար պէտք է աշխատանքի մի օր, իսկ մի գլխարկ կարելու համար նոյնպէս մի օր,—այդ դէպքում գլխարկի արժէքը նոյնն է, ինչ որ 4 զօլոտնիկ արծաթի արժէքը։ Այդ արծաթի կտորից շինում են մի մանեթանոց դրամ։ Եւ ահա ասում են, որ գլխարկը արժէ մի կտոր արծաթ կամ մի ռուբլ։ Ահա թէ ինչպէս է ծագել փողը։

Սրանից պարզ է, որ փողը նոյնպիսի ապրանք է, ինչպէս են և այլ ապրանքները. փողի արժէքը նոյնպէս չափւում է աշխատանքի այն քանակութեամբ, որ հարկաւոր է գետնի տակից մետաղ հանելու և մշակելու համար։ Իսկ որովհետև մետաղի արժէքը հաստատուն է, ուստի և նրա արժէքին վերածում են ուրիշ ապրանքների արժէքը,—և այդպիսով ապրանք-մետաղը փող է դառնում։ Երբ մենք ապրանքի արժէքը վերածում էինք ցորենի արժէքին, մենք ասում էինք, որ 20 արշին քաթանը կամ 5 արշին մահուդը, կամ մի զոյգ կօշիկները 4 փութ ցորեն արժեն։ Իսկ երբ մենք ապրանքների արժէքը փողի արժէքին ենք վերածում, մենք ասում ենք, որ 20 արշին քաթանը կամ 5 արշ. մահուդը կամ մի զոյգ կօշիկը 4 ռուբլի արժեն (4 կտոր արծաթ)։ Ուրեմն փողը այնպիսի ապրանք է, որ ուրիշ ապրանքների արժէքն է ցոյց տալիս, կամ փողը ապրանքների չափն է։

Փողը շուկայում ցոյց է տալիս ապրանքների արժէքը և բոլոր ուրիշ ապրանքների տեղն է բռնում փոխանակութեան ժամանակ (ինչ ապրանք ուզես, կարող ես փողովդ գնել), այսինքն փողը ծառայում է իբրև ապրանքների փոխանակութեան միջոց։ Շատ բարի։ Իսկ ինչ է թղթադրամը։ Թղթադրամ կտրելը հեշտ է,—մի օրում կարելի է տասնեակ հազարներ կտրել, իսկ շուկայում կարելի է նրանց միջոցով ստանալ ապրանքների մի այնպիսի խոշոր քանակութիւն, որը ստեղծելու համար ամբողջ տարիների աշխատանք պէտք կլինի գործադրել։

Բանից դուրս է գալիս, որ փողի արժէքը ամենևին կախ-

ուած չէ նրա արտադրութեան վրայ գործադրած աշխատանքից։ Դուրս է գալիս, որ թղթէ փողի մէջ կայ մի առանձին զօրութիւն, եթէ նրա փոխարէն կարելի է ուզածիդ չափ ապրանք ստանալ, չնայելով որ իրանք թղթերը գրօշի արժէք ունեն։

Բայց սպասեցէք, կարելի է որ մենք այստեղ էլ կարողանանք հասկանալ բանի էութիւնը։ Նայենք, թէ բանը ինչպէս է։ Երբ ոսկին և արծաթը գետնից հանուած և ինչպէս հարկն է մշակուած են, բաժանում են նրանց հաւասար մասերի, կշռում են և շինում դրամներ—ոսկէդրամ, ռուբլիներ, և այլն։ Եթէ, օրինակ, մի կտոր արծաթ հանելու լինենք ռուբլիանոց դրամ շինելու համար, մի օրուայ աշխատանք հարկաւոր կլինի գործադրել. և եթէ թենոցների կամ գլխարկի համար նոյնպէս մի օրուայ աշխատանք պէտք եղաւ, այդ դէպքում թենոցների և գլխարկի արժէքը կը լինի մի ռուբլի արծաթ։ Փոխանակութեան ժամանակ ռուբլիանոցը շրջանառութեան մէջ է շուկայում, ընկնում է հազար ու մի ձեռքեր, մտնում հազար ու մի ջեբեր. նա ման է գալիս մի տասը տարու չափ, և նայում ես, որ նա արդէն կորցրել է իր կերպարանքը։ Դրամը այլանդակուած, արծիւը մաշուած, իսկ հակառակ կողմում հաղիւ կը կարդաս «մի ռուբլի արծաթ» մակագրութիւնը։ Կշեռքի վրայ կշռելով կը տեսնես, որ նա կորցրել է իր ծանրութեան քառորդը. Ուրեմն և մաշած ու տրորած ռուբլու արժէքը նոր ռուբլուց մի քառորդ պակաս է։ Իսկ երբ դուրս կը գաս շուկայ, նոյն թենոցները կամ գլխարկը կարող ես գնել մաշած ռուբլով էլ նոյնպէս, ինչպէս նորով։ Այդ ինչ է նշանակում։ Ահա ինչ։ Գլխարկ կարողը, որը գլխարկը ծախում է հին ռուբլով, լաւ գիտէ, որ այդ ռուբլու մէջ արծաթ աւելի քիչ կայ, քան նորի, և որ այդ պատճառով նա իր գլխարկի համար չի ստանայ նրա ամբողջ արժէքը (4 զօլոտնիկի փոխարէն միայն 3)։ Բայց գլխարկ կարողը դատում է այսպէս,—ես խօսմ այդ արծաթից օգեր շինելու չեմ, ինձ համար միևնոյնն է ինչքան արծաթ կայ նրա մէջը։ Ինձ համար բաւական է, որ նրա վրայ կայ «մի ռուբլի» մակագրութիւն, իսկ ես նրանով կը գնեմ վաղը մի փութ ցորեն կամ թենոցներ։

Որովհետև փողի գլխաւոր ծառայութիւնը կայանում է արտ-

ժէք ցոյց տալու և փոխանակութեան միջոց ծառայելու մէջ, ուստի շուկայում մարդիկ կարծես մի խօսք արած ուշադրութիւն են դարձնում միմիայն փողի մակագրութեան վրայ, իսկ ինչից կտրած լինելը հաշուի չեն առնում: Միևնոյն չէ թէ «մի ռուբլի» քարի վրայ է փորագրուած թէ չթի մի կտոր է: Բաւական է, եթէ շուկայում բոլորը ճանաչեն, որ նա ռուբլի է, բաւական է, որ նրա տեղ կարելի լինէր գլխարկ կամ թևնոցներ ստանալ: Եւ ահա այս է հիմքը թղթադրամների: Ահա այս պարզ հաշիւը աչքի առաջ ունենալով, կառավարութիւնը հրամայում է տպագրել թղթադրամներ՝ «մի ռուբլի» արծաթ, «երեք ռուբլի» արծաթ և այլն մակագրութեամբ, իսկ շուկայում ամենքն էլ պիտի ընդունեն նրանց որպէս իսկական արծաթէ դրամներ: Այդ բոլորը հնարաւոր է միայն այն պատճառով, որ ապրանք-փողը ցոյց պէտք է տայ ապրանքների արժէքը. այդ ցոյց տալ կարող է հաւասարաչափ լաւ և թուղթը, որքան և մի կտոր արծաթը:

Ահա այսպէս կամաց-կամաց շուկայում է ապրանք-փողից միայն նրա արժէքի մակագրութիւնը, որ տպագրուած է թղթի վրայ, այսինքն թղթադրամները: Իսկ մետաղէ փողերը մնում են պառկած պահեստներում, որպէս զի փոխանակութեան մէջ չըմաշուեն: Նրանց փոխարէն գործածութեան մէջ է մտնում թղթադրամը, որի վրայ գրուած է. թէ այս թղթադրամը ներկայացնելուն պէս պետական գանձարանի մանրացնող դրամարկղից կարելի է ստանալ այսքան ռուբլի արծաթ կամ ոսկի: Թղթադրամը այսպիսով իսկական արծաթէ կամ ոսկէ փողի վկայագիր է,—ահա թէ ինչու նա արժէք ունի:

Եթէ վաղը որ և է բռնապետ վատնէ այն բոլոր արծաթէ և ոսկէ փողերը, որոնք պահուում են պետական դրամարկղներում, դուրս ստուած թղթադրամների փոխարէն,—այն ժամանակ դուք կըտեսնէք դժբախտութիւնը: Մեր վաճառականը արտասահմանում ապրանք պիտի գնէ, իսկ այնտեղ մեր թղթադրամներին հաւատ չեն ընծայում: Եթէ այնտեղ լսեն, որ մեր գանձարանում իսկական փող քիչ է մնացել, մեր ռուբլու գինը իսկոյն և եթ կիսով չափ կիջնի: Արտասահմանում կըպահանջեն իսկական արծաթ և ոսկի, և մեր վաճառականը կըդիմէ պետական

գանձարանը, կը խնդրէ հազար ռուբլու թղթադրամների փոխարէն տալ հազար ռուբլու ոսկի:

Այսպէս կը վազէ պետական գանձարանը մէկը, միւսը, երրորդը, չորրորդը և այլն: Վերջիվերջոյ դուրս կըգայ, որ իսկական մետաղէ դրամ այլևս չըկայ: Խաբերայութիւնը լոյս աշխարհ կելնէ: Դուրս կը գայ, որ թղթադրամներ պատրաստել են չափից դուրս շատ,—չէ՞ որ նրանց գինը սաստիկ էժան է, իսկական փողերը վատնուած են, իսկ առանց փոխանակութեան իսկական դրամով թղթադրամները մի մի «քօռ» դրօշ էլ չարժեն: Գանձարանը պէտք է այդ դէպքում ստիպուած լինի խոստովանել, որ նրա գործերը վատեն գնում, որ նա դադարում է այլևս թղթադրամների փոխարէն տալ ոսկի և արծաթ այնքան, ինչքան նա պարտաւոր է տալ,—այլ տալիս է միայն 60 կամ 70 և նոյնիսկ 50 կոպէկ մի ռուբլու փոխարէն: Այդ կըլինի նոյնը, ինչ որ պատահում է ահագին թւով մուրհակներ տուած և սնանկացած վաճառականի հետ...

Հասարակ ու խեղճ մարդիկ իսկի գլխի էլ չեն ընկնում, թէ ինչպիսի խորամանկ մեքենայութիւն է թագնուած այստեղ: Նրանք ախուվախ են անում և չեն հասկանում ամենևին, ինչ պատահեց յանկարծ, որ բոլոր ապրանքները թանգացան: Իսկ դուրս է գալիս, որ ոչ թէ ապրանքներն են թանգացել, այլ փողը էժանացել է: Գանձարանը բաց է թողել խիստ շատ թղթադրամներ և դիւրահաւատ մարդիկ բոլորը գնել են,—իսկ յետոյ իմացել են, որ նա իր միջոցներից շատ աւելի է թղթեր դուրս թողել. արտասահմանում այդ բանի հոտն առնելով, թղթադրամի փոխարէն շատ քիչ են տալիս, քան առաջ. և բաւական է, որ արտասահմանի ապրանքները սկսեցին թանգանալ,—իսկոյն կը թանգանան և մերոնք:

Այսպէս շատ անգամներ է պատահել մեր Ռուսաստանում: Եթէ վերցնելու լինենք այժմ ոսկէ հին ռուբլիները և համեմատենք նորերի հետ, մենք առանց դժուարութեան կը տեսնենք, որ հներով մէջ ոսկի աւելի կայ, քան նորերի, և որ հները աւելի թանգ արժէին, քան նորերը, թէև նրանց վրայ նոյն գինն է տպուած: Իսկ եթէ մանրամասն քննենք, թէ ինչպէս երևան եկան իսկական և թղթէ դրամներ, և ինչպէս էր

նրանց արժէքը փոխւում մինչև մեր օրերը, մենք կը համոզուենք, որ այդ բոլորը սկզբից մինչև վերջը զեղծում է, և ուրիշ ոչինչ։

Ուրեմն, մետաղէ փողը մի այնպիսի ապրանք է, որ ցոյց է տալիս բոլոր ապրանքների արժէքը, ծառայում է իբրև արժէքի չափ և փոխարինում է փոխանակութեան ժամանակ բոլոր ապրանքները, հետևապէս ծառայում է և որպէս ապրանքների փոխանակութեան միջոց։ Իսկ թղթադրամները մետաղէ դրամների արժէքի նշանացոյցն են և ծառայում են ընդհանուրի համաձայնութեամբ որպէս փոխանակութեան միջոց։ Սրանով կը վերջացնենք մեր խօսքը փողի մասին։

IV

ՊԱՀԱՆՋ ԵՒ ԱՌԱՋԱՐԿ. ՄՐՑՈՒՄ։

Մինչև այժմ մենք ենթադրում էինք, որ շուկայում ապրանքները ծախւում կամ փոխանակւում են համաձայն իրանց արժէքի, այսինքն համաձայն աշխատանքի փոխանակութեան, որ գործադրուած է նրանց արտադրութեան համար։ Իրօք այդպէս պէտք է լինէր։ Սակայն շուկայում ապրանքները ծախւում են իրանց իսկական արժէքից կամ ցածր կամ բարձր։

Տեսնենք թէ ինչպէս է այդ կատարւում։ Կօշկակարը 2 օրուայ մէջ մի զոյգ կօշիկներ կարեց։ Ծախելու ժամանակ նա պէտք է ստանայ կօշիկների փոխարէն 4 ռուբլի արծաթ, որի մէջ պարունակւում է նոյնպէս 2 օրուայ աշխատանք։ Նա դուրս է բերում իր կօշիկները շուկայ, որտեղ պատահմամբ այս անգամ շատ քիչ կօշիկներ կային, իսկ մուշտարի՝ շատ։ Շուկայով անցնում էին զինուորներ, որոնք պատերազմ էին գնում. զինուորների կօշիկների ներբանը կաշուից չէր, այլ հաստ թղթից էր, ուստի նրանք ստիպուած էին սեփական կօշիկներ ձեռք բերել։ Տեղական կօշկակարները չէին նախատեսել, որ այդպիսի դէպք կը պատահի և չէին պատրաստել անսպասելի հիւրերի

ՄԻՈՒԹԻՒՆ ԳՐԱԴԱՐԱՆ

համար աւելորդ կօշիկներ։ Զինուորները թափուեցան մեր կօշկակարի դլխին։

«Ի՞նչ արժեն կօշիկներդ».—4 ռուբլի։ Զինուորներից մէկը վերցրել էր արդէն կօշիկները և ձեռքը չիքը կոխել փող հանելու համար, երբ յանկարծ մի ուրիշը բղաւեց կօշկակարին. «Ինձ տուր կօշիկներդ. տասը կոպէկ աւել կը տամ, բոլորովին բոբիկ եմ ախր»։—Եթէ այդպէս է 25 կոպ. կաւելացնեմ, բղաւեց երրորդը։ «4 և կէս»։—Ստացիր 5 ռուբլի։ Ամեն կողմից աղմուկ բարձրացաւ. մեր կօշկակարը ապշած ու շշմած նայում էր շուրջը, ինչպէս մի գայլ, որին ոչխարների մէջ են բռնել։ Պինդ սղմած 5 ռուբլիանոցը իր ձեռքում, մեր կօշկակարը վազում է տուն։ Նա ուրախ է, որ 4 ռուբլու տեղ անսպասելի կերպով յանկարծ 5 ռուբլի ստացաւ։

Այս դէպքի մասին լսում են միւս կօշկակարները և այսպէս դատում. «Իւրաքանչիւր զոյգ կօշիկների համար մի ռուբլի աւել կըստանանք,—լաւ կը լինի վրայ տալ և շուտ կարել»։ 5 ռուբլով ծախելու յուսով՝ նրանք հետևեալ տօնավաճառին առատին քանակութեամբ կօշիկներ թափեցին շուկայ։ Բայց դժբաղդաբար նրանք սխալուած էին,—զինուորների հետքն անդամ չէր մնացել. իսկ սովորական մուշտարիներին այդքան կօշիկ հարկաւոր չէր։ Կօշկակարները քթերը կախեցին, իսկ մուշտարիները գլխի ընկան, որ այժմ նրանց գործը շատ լաւ է։ Մօտենում է մուշտարին կօշկակարներից մէկին և հարցնում։ «Ի՞նչ արժեն կօշիկները»։ Կօշկակարը, տեսնելով որ այժմ յիմարութիւն կը լինի 5 ռուբլի ուզելն անդամ, պահանջում է իսկական արժէքը—4 ռուբլի։ «Իսկ 3 ռուբլով չե՞ս տայ»։ — «Ինքդ գիտես, եղբայր, որ երկու օր եմ աշխատել,—համարեա լալով ասում է կօշկակարը,—Աստուած չե՞ս ճանաչում, ինչ է, որ միայն 3 ռուբլի ես առաջարկում»։ «Մի տես, թէ ինչպէս էլ կոտրւում է», ծիծաղում է մուշտարին, «ձերոնցից էսօր շատ են եկել - 3 ռուբլով էլ կաղաչես. կըտաս»։ Կօշկակարի միտքն ընկաւ, որ ընտանիքը տանը առանց հացի նստած նրան է սպասում, և մտածեց, որ եթէ նա 3-ով չտայ, այն ժամանակ մի ուրիշը կըտայ, իսկ նա ինքը առանց հացի կը մնայ։ Ճարը կտրած՝ նա տալիս է կօշիկները 3 ռուբլով։ Նոյնը պիտի

անէին և միւսները, եթէ առանց հացի մնալ չէին ուզում- իսկ ով տանը պաշար ունէր, նա պահեց կօշիկները։

Կօշկակարները տեսնելով, որ չափից դուրս շատ կօշիկ կայ շուկայում, մտածեցին, որ եթէ շարունակեն առաջուայ պէս աշխատել, ստիպուած պիտի լինեն մի զոյգը 3 ռուբլով ծախել։ Եւ ահա նրանք կրճատեցին կօշիկների արտադրութիւնը։ Նրանցից մէկը գնաց ուրիշ տեղ, միւսը աւելի ձեռնտու գործ գտաւ, և շուկայում ապրանքը քչացաւ։ Կօշկակարները սիրտ առան և վճռեցին կօշիկները 3-ով չըզիջել։ Մենք տեսնում ենք, որ կօշիկները մի անգամ իրանց իսկական արժէքից թանգ են ծախւում, միւս անգամ՝ էժան։ Կօշիկների արժէքը մնում էր նոյնը (4 ռուբլի կամ 2 օրուայ աշխատանք), իսկ նրանց վաճառականոցային գինը փոխւում էր.—մի անգամ 5 ռուբլի, միւս անգամ՝ 3։

Ինչից էր այդ առաջ գալիս։ Ահա թէ ինչից։ Առաջին անգամ շուկայում կօշիկ քիչ կար, իսկ մուշտարի՝ շատ. կօշիկների պահանջը մեծ էր, իսկ կօշիկ քիչ էր բերուած, այսինքն առաջարկը փոքր էր։ Ամեն մի մուշտարի աշխատում է ուրիշի ձեռքից ապրանքը խլել և դրա համար գինը աւելացնում է, այդպիսով ապրանքի գինը բարձրանում է։ Ամեն մի զինւոր էլ շատ լաւ գիտէր, որ կօշիկների իսկական արժէքը 4 ռուբլի է, բայց նա տեսնում էր, որ մուշտարիները շատ են և կամայ ակամայ գինը աւելացնում էր, որպէս զի իր ձեռքը ընկնեն կօշիկները։ Ոտաբոբիկ խօմ մարդը մանդալու չէ։ Երկրորդ անգամ, ընդհակառակը, կօշիկ շատ կայ, իսկ մուշտարի՝ քիչ, առաջարկը մեծ է, իսկ պահանջը փոքր։

Վաճառողներից իւրաքանչիւրը մի ելք է որոնում և դրա համար իջեցնում է գինը ապրանքի արժէքից վայր։ Կօշկակարը լաւ գիտէ, որ կօշիկների իսկական արժէքը 4 ռուբլի է, բայց նա տեսնում է, որ մուշտարի քիչ կայ, իսկ կօշիկ՝ շատ. ինչ էլ լինի, նա պէտք է ծախէ, եթէ սովից մեռնել չի ուզում։ Եւ ահա գինը մինչև 3 ռուբլի է իջնում։ Առաջին անգամ, երբ պահանջը մեծ էր և առաջարկը՝ փոքր, մուշտարիները ապրանքը իրարից էին խլում, կամ ինչպէս ասում են, մրցումը մուշտարիների միջև էր, և ապրանքի գինը բարձրացաւ։ Երկրորդ

անգամ, երբ ընդհակառակը պահանջը փոքր էր և առաջարկը մեծ, մրցումը վաճառողների միջև էր, ուստի և ապրանքի գինը ընկաւ։ Երբ կօշիկների գինը բարձրացաւ մինչև 5 ռուբլի, աւելացաւ և նրանց արտադրութիւնը. ուրեմն, երբ աւելացաւ պահանջը, աւելացաւ և առաջարկը։ Իսկ երբ առաջարկը աւելացաւ, գինը արդէն չէր կարող 5 ռուբլու վրայ կանգնած մնալ, որովհետև վաճառողների մրցումն առաջացաւ, հետևապէս և գինը ընկաւ։ Բայց երբ գինը ընկաւ մինչև 3 ռուբլի, այսինքն պահանջը քչացաւ, կրճատուեց և արտադրութիւնը. հետևապէս փոքրացաւ և առաջարկութիւնը, որովհետև մրցումն առաջացաւ մուշտարիների միջև, և գինը կրկին բարձրացաւ։

Այդ բոլորը մեզ ցոյց են տալիս պարզապէս, որ մրցումը ապրանքի գինը մօտեցնում է նրա իսկական արժէքին (այսինքն նրա վրայ գործադրած աշխատանքի քանակութեան)։ Գինը բարձրանալով արժէքից վեր, թուլացնում է վաճառողների մրցումը, իսկ ընկնելով արժէքից վայր, նա առաջացնում է մուշտարիների մրցումը։ Սրանից կարելի է հետևցնել, որ եթէ շուկայում պահանջը և առաջարկը հաւասար են, վաճառականոցային գինը հաւասար կը լինի ապրանքի արժէքին։ Եթէ շուկայ են բերել այնքան կօշիկ, որքան պէտք է, և եթէ մի զոյգ կօշիկի արժէքը 4 ռուբլի է, մուշտարիները կարիք չունեն աւելացնելու գինը, քանի որ կօշիկ բոլորին էլ հերիք կը լինի. նոյնպէս և վաճառողները կարիք չունեն ապրանքի գինը պակասացնել, ուր ապրանքի պահանջ կայ։ Պարզ է, որ մենք այստեղ գործ ունենք հասարակ փոխանակութեան հետ, այնպիսի փոխանակութեան, որ կատարւում է առանց մրցումի ներգործութեան։

Եւ այսպէս, ապրանքների փոխանակութիւնը առաջ է գալիս նրանից, որ մարդիկ առանձին տնտեսութիւններ են պահում. այդ է պատճառը, որ նրանք չեն կարող առաջուց իմանալ ում է պէտք ապրանք և որքան. սրանից ծագում է պահանջի և առաջարկի անհաւասարութիւնը, իսկ պահանջի և առաջարկի անհաւասարութիւնից առաջ է գալիս մրցումն՝ մերթ վաճառողների, մերթ մուշտարիների միջև։ Մուշտարիների մրցումը բարձրացնում է ապրանքների գինը, իսկ վաճառող-

ներինը՝ իջեցնում։ Առհասարակ, մրցումը ժամեցնում է ապրանքների վաճառանոցային գինը նրանց իսկական արժէքին, այսինքն ձգտում է հաւասարեցնել պահանջը և առաջարկը։ Յետոյ մենք կը պարզենք թէ ինչ ազդեցութիւն ունի մրցումը հասարակական կարգերի վրայ, և ինչպէս շարունակ նա գցում է բանուորներին սովի, աղքատութեան և զանազան չարիքների բերանը...

V

ԱՇԽԱՏԱՒՈՐ ՁԵՌՔԵՐ

Մեր բոլոր զրոյցներում, աշխատանքի փոխանակութեան մասին, մենք միշտ անում էինք այն ենթադրութիւնը, որ փոխանակողները կամ վաճառողները իրանք այդ ապրանքների արտադրողներն են։ Ջուլհակը վաճառում է այն քաթանը, որ ինքն է գործել իր սեփական դաղգահի վրայ իր սեփական թելով։ Երկրագործը վաճառում է այն հողից ստացած ցորենը, որ ինքն է վարել իր սեփական գութանով և ցանել իր սեփական ցորենով, և այլն։ Բայց մի՞թէ այդպէս է իրականութեան մէջ։ Մետաքս, չիթ ու մահուդ վաճառում են գործարանատէրերը որոնք այդ ապրանքների արտադրութեան համար մատը մատներին անգամ չեն զարկել։

Ցորենը ծախում է կալուածատէրը, որը գուցէ իր աչքերովն էլ չի տեսել, թէ ինչպէս է նա բուսել։ Ո՞րտեղ են այդ ապրանքների արտադրողները։ Ո՞րտեղ են նրանք, «Աստծու աշխատաւորները», աշխատանքի այդ զինուորները, որոնց արիւնով ու քրտինքով են ներկուած այդ հարստութիւնները։ Այստեղ են նրանք, այստեղ... Առանց նրանց ոչինչ առաջ չի գնայ շուկայում։ Նրանք էլ շուկայ դուրս եկան, բայց բերեցին ոչ այն ապրանքները, որ իրանց ձեռքովն էին շինած, որովհետև գործարանատէրը և կալուածատէրը վաղուց արդէն սեփականացրել էին նրանց արտադրած բարիքը... Բանուորները վաճառելու էին բերել ուրիշ ապրանք, նրանք շուկայ էին

բերել իրանց «աշխատաւոր ձեռքերը», իրանց ոյժը ծախելու... Այդ ի՞նչպէս պատահեց, որ բանուորների ձեռքից խլեցին նրանց արտադրած արդիւնքները. ի՞նչպէս պատահեց, որ նրանք շուկայ են բերում վաճառելու ոչ իրանց արդիւնքները, այլ «աշխատաւոր ձեռքը»... Բռնութեան ու արիւնհեղութեան, սովի ու սոսկալի տառապանքների երկար ու սևումութ ճանապարհով պիտի գնար մարդկութիւնը, որպէս զի այդ կարգերին հասնէր։ Կարդանք մարդկային պատմութեան այդ տխուր էջերը...

Մեր առաջն է երկրագործական մի համայնք։ Վաղուց է արդէն, որ նստած է նա սև հողի վրայ, որը այնքան շատ հաց է տալիս։ Աշխատանքի բաժանումը ապահովում է ամբողջ համայնքը ամեն տեսակ անհրաժեշտ արդիւնքներով։ Նա ստիպուած է ուրիշ համայնքներից գնել միայն գուցէ երկաթեղէն ու պղնձեղէն։ Ըստ երևոյթին համայնքը ապրում է հաշտ և ուրախ։ Բայց բանը հէնց նրանումն է, որ բոլոր համայնքների բաղդն էլ խօմ այդքան լաւ չէ։ Մէկը նստել է ճահճոտ մի տեղում, աւելի լաւը չըգտնելով,—իսկ մի ուրիշը բնակութիւն է հաստատել կուսական անտառում։ Ինչ ասել կուզի, որ սրանց ցանքսը վատ է լինում, մինչդեռ ազգաբնակութիւնը շատանում է տարէց-տարի։ Գուցէ կարելի լինէր որ և է արհեստով պարապել—դարբնութեամբ կամ մի ուրիշ յարմար արհեստով. սակայն այն հեռու ժամանակներում, ինչպէս և այժմ, ուրիշի աշխատանքով ապրել ցանկացողներ շատ կային։ Ով համարձակ էր, նա միշտ հոտառութեամբ էր իմանում, թէ ո՞րտեղից կարելի է օգտուել,—և այն ժամանակ վայ թոյլին։ Դիցուք, որ և է անտառային համայնքի անդամները հացի և ուրիշ արդիւնքների սաստիկ կարիք են զգում։ Ի՞նչ անեն։

Խաղաղ բնաւորութեան տէր մարդիկ կասեն. «Ցղերք, անտառում թմբի ծառ շատ կայ. արիք, պոկենք կեղևը և չարուխ ու խսիր գործենք, իսկ բնափայտից շինենք ամաններ, գդալներ, փեթակներ և այդ բոլորը փոխենք հարուստ համայնքում հացի հետ»։ Բայց տրեխ գործելը ամենքի էլ դուրը չի կարող

գալ. կը գտնուեն շատերը, որոնք կուզեն ուրիշ կերպ ձեռք բերել հարկաւոր բարիքը։ Եւ ահա ամենից խիզախն ու համարձակը վեր է ցատկում և ասում. «Անտաշ գիւղացիք, ահա թէ ինչ. շատ արդեօք օգուտ կարող էք դուք ստանալ կեղեւից։ Դուք ուզում էք հալալ աշխատանքով ամեն ինչ ձեռք բերել. բայց այդպէս ապրելով, դուք կարող էք սովից սատկել, էս աշխարհի լաւ համն էլ չտեսած։ Տղերք, մենք ոյժ շատ ունենք, արիք գնան պատերազմի այդ հարուստ համայնքի դէմ և մի տարուայ պաշար խլենք բերենք։ Իսկ ով կնոջ պէս վախկոտ է, թող նա տանը նստի, կեղև պոկի ու արեխ գործէ»։

Այս խօսքերը դուր եկան մեր անտառի բնակիչներին, և նրանք վճռեցին պատերազմի գնալ այս խիզախի յետևից։ Փող են փչում և հաւաքւում են արշաւանքի համար. պայթում է չարիքը երկրագործական համայնքի գլխին։ Նա լսեց անսպասելի հիւրերի գալուստը և դառն արցունքով պատրաստուեց ընդունել ժահը, պաշտպանելով իր հայրենի հողը։ Թշնամիները յարձակում գործեցին, և սկսուեց ժահու կռիւը։ Երկար ու կատաղի կռիւ էր այդ, բայց վերջ ի վերջոյ անտառի բնակիչները յաղթեցին, որովհետև նրանք և, թւով աւելի շատ էին, և՛ աւելի կատաղած էին սովից։ Երկրագործներից շատերը սպանուեցին, շատերն էլ անտառ փախան։ Իսկ յաղթողները վերցրին համայնքի ամբողջ բարիքը, վերցրին հետները կանանց ու երեխաներին և հարուստ աւարով տուն վերադարձան։ Այն խիզախը, որը բոլորին պատերազմի տարաւ, կուռում էր թշնամու հետ շատ քաջ, շատերին էլ միւս աշխարհը ուղարկեց։ Այդ բանի համար իւր ընկերների կողմից նա պատուի ու յարգանքի արժանացաւ և աւարի բաւական մեծ մասը ստացաւ։

Նոր արհեստը անտառաբնակներին դուր եկաւ։ Ոչ վարել, ոչ ցանել,—իսկ բարիքը միշտ կայ ու կայ... Երբ նրանք իրանց պաշարը պարպեցին, նորից պատրաստուեցան արշաւանքի գնալու։ Այս անգամ էլ իրանց զօրավար ընտրեցին նրան, որը այնքան յաջող ու ճարպիկ կերպով առաջին անգամը գործը գլուխ բերեց։ Այս անգամ էլ անտառի բնակիչների արշաւանքը յաջողութեամբ աւարտուեց և շնորհիւ զօրավարի խորամանկութեան, ճարպիկութեան ու քաջութեան, նրանք տուն վերադարձան կրկին մեծ աւարով։ Առաջնորդ զօրավարը այս անգամ աւելի մեծ բաժին ստացաւ և աւելի մեծ պատուի ու յարգանքի արժանացաւ։ Կամաց-կամաց նա հրամանատար և կառավարիչ դարձաւ ոչ միայն պատերազմի, այլ նա և խաղաղ ժամանակ։

Ամեն մի կռուից յետոյ զօրավարի ժոտ մնում էր մեծ աւար. նա հաւաքում էր մտերիմ զինուոր-ընկերներին, ռազմիկներին, և ուտեցնում, խմեցնում ու հագցնում էր նրանց իր հաշուով,—իսկ ռազմիկները նրան ի հարկէ հնազանդում էին միշտ կուրօրէն։ Այդ ռազմիկների վրայ յենուած՝ զօրավարը ահագին իշխանութիւն էր ձեռք բերում համայնականների վրայ։ «Հնազանդուեցէք ինձ ձեր բարի կամքով, թէ չէ վայը եկել տարել է ձեզ» ասում է նա նրանց։ Եւ ով մեղք է գործել զօրապետի առաջ, ռազմիկները իսկոյն ևթ այդ մարդուն խելքի են բերում։ Զօրապետը սկսում է իր ձեռքի տակ պահել ամբողջ համայնքը, ամեն բանի վրայ իր թաթն է դնում։

Ահա այսպիսի ձևով է, որ մեծ մասամբ ծագում է հասարակական իշխանութիւնը։ Զօրապետների մէջ ով ամենից ուժեղն է, նա իր իշխանութեան տակ հաւաքած է շատ համայնքներ, կազմում է մեծ ռազմիկների խումբ և գնում է պաշար ճարելու։ Ոչ մի երկրագործական համայնք չի կարող նրան դիմադրել, և որտեղ նա երևաց, այնտեղ տիրում է լացն ու աւեր։ Աղէկտուր լալիս են գիւղացիները։ Կարիքը, ասում են, շատ բան կը սովորեցնի։ Երկար մտածելուց յետոյ գիւղացիները հետևեալ վճիռը կայացրին։ Դաժան զօրապետի մոտ նրանք ուղարկում են դեսպաններ հետևեալ առաջարկութիւնը անելու. «Քաջ զօրապետ, փոխանակ մեզ կողոպտելու, քարուքանդ անելու և կեանքից զրկելու, աւելի լաւ չի լինի, եթէ դու մեզանից տարեկան որոշ հարկ վերցնես։ Վերցրու ինչքան ուզում ես, միայն թէ մեզ ձեռք մի տայ։ Ախր քեզ համար էլ այդ աւելի ձեռնտու է, այժմ միանգամից դու կաւերես մեր տունն ու տեղը և էլ ոչինչ չես թողնի, որ կարողանաս առնել, իսկ եթէ մեր ասածի պէս վարուես՝ այն ժամանակ ամեն տարի քո հարկը կը ստանաս։ Մենք կը լինենք քո հլու հպատակները»։

Զօրապետը տեսնում է, որ գիւղացիք իրաւ խելօք ու

շատ ձեռնտու բան են ասում. բայց բնաւ ցոյց չըտալով, որ հասկանում է, խրոխտ ձայնով պատասխանում է: «Թէև ձեզ, անպիտաններ, պէտք էր ոչնչացնել, որպէս զի ձեր շունչն անգամի կտրէր աշխարհիցս, բայց իմ անսահման բարեհոգութեան շնորհիւ ես ձեզ խնայում եմ. այսուհետև ես էլ չեմ կողոպտի ու քարուքանդ անի ձեր տունն ու տեղը, իսկ դուք դրա փոխարէն ինձ մեծ հարկ պիտի տաք: Բայց չըմոռանաք, որ դուք իմ հլու ծառաներն էք,—կուզենամ՝ կըխնայեմ, կուզենամ՝ միւս աշխարհը կուղարկեմ»: Գիւղացիք ղլուխ տուին և ուրախացած տուն վերադարձան:

Այնուհետև զօրապետի համար սկսուեց մի անընդհատ բարեկենդան, կերուխում (նա հրամայեց արդէն իրան իշխան անուանել): Իր խմբի հետ նա ման է գալիս մի համայքից միւսը, հարկ է հաւաքում և մեզր ու կարագի մէջ լողում: Ամէն տեղ ընդունում են նրան մեծ պատուով ու շուքով, որ անում են բոլորը վախից. և իշխանը կամաց-կամաց մոռանում է, որ ինքն էլ նոյնպիսի մարդ արարած է, ինչպէս բոլորը: Նա մոռանում է, թէ ինչ ձևով նա ստացաւ իր իշխանութիւնը. նա հրամայում է իր հպատակներին հաւատալ, որ նա իր իշխանութիւնը ոչ թէ պատերազմի միջոցով և բռնութեամբ է ձեռք բերել, այլ Աստծուց: Նա պահանջում է բոլորից անպայման հնազանդութիւն և միամտօրէն կարծում է, թէ երկիրն ու մարդիկ իրանց գոյքով միասին նրա սեփականութիւնն են կազմում,— և նա իրաւունք ունի վարուելու այդ բոլորի հետ, ինչպէս որ իր քէֆն է թելադրում:

Մօտաւորապէս հազար տարի առաջ Ռուսաստանում շատ կային այդպիսի իշխաններ, որոնք ժողովրդի վրին ահագին հարկեր էին գնում և նրա տունը աւերում: Նուաճելով մի քանի համայնքներ՝ամեն մի իշխան կազմում էր նրանցից իր իշխանութիւնը: Բայց շուտով Ռուսաստանում իշխանները զգացին, որ երկիրը նեղ է իրենց համար. սկսեցին իրար հետ կռուել: Նրանք կողոպտում և աւերում էին փոխադարձաբար միմիանց իշխանութիւնները, դաւաճանութեամբ սպանում էին իրանց թշնամիներին, մի խօսքով՝ նրանցից ամեն մէկը ոչինչ չէր խնայում միւսներին ոչնչացնելու և այն ժամանակի համայն Ռուսաստանի տէրը դառնալու համար: 400 տարուց աւելի կռուում էին նրանք միմիանց հետ: Ժողովրդի արիւնը հոսում էր գետերով, մարդիկ փախչում էին աշխարհի չորս կողմը այդ անընդհատ աւերումներից: Վերջ ի վերջոյ իշխաններից մէկին յաջողուեց միւս բոլորի իշխանութիւնների վրայ տէր դառնալ. մէկին սպանեց, միւսին աքսոր ուղարկեց, իսկ ինքը դարձաւ թագաւոր: Հէնց այդ ժամանակից սկիզբն առաւ Մոսկուայի պետութիւնը: Մոսկուայի թագաւորը իր սեփականութիւնն էր հաշուում ռուս ժողովուրդը իր ամբողջ երկրի հետ, որի վրայ ապրում էր վերջինս և որը նա իր արիւն ու քրտինքով մշակում էր: Դեռ հին ժամանակներից իշխանները սովորութիւն էին դարձրել ամբողջ համայնքներ իրանց ռազմիկներին բաժին տալ՝ վերջիններիս հաւատարիմ ծառայութեան համար: Ընծայուած համայնքները իրանց նոր տէրերին հարկ պիտի տային. իսկ տէրերը իրանց կողմից արդէն պարտաւոր էին հարկ տալ իշխանին: Ինչ ասել կուզէ, որ հարկերը աւելի ծանր դարձան: Երբ ստեղուեց Մոսկուայի պետութիւնը, Մոսկուայի թագաւորը նախկին իշխանների նման շարունակում էր իր նախարարներին ու պալատականներին համայնքներ բաժանել նրանց հաւատարիմ հպատակութեան համար: Նախարարները դրա փոխարէն պարտաւոր էին պատերազմի ժամանակ իրանց կալուածներից զինուորների որոշ քանակութիւն դուրս բերել և հարկեր վճարել պետական գանձարանին, Նախարարները և ուրիշ աղաները, ի հարկէ, աշխատում էին իրանց գիւղացիներից որքան կարելի է շատ եկամուտ ստանալ և չափազանց կեղեքում էին նրանց:

Այն բոլոր գիւղական համայնքները, որոնք նախարարների ու զանազան աղաների ձեռքում չէին, կազմում էին թագաւորի սեփականութիւնը, որ կառավարում էին նրա գործակատարները: Եւ որովհետև գիւղացիները աղաների ձեռքից սաստիկ ծանր զրկանքներ էին կրում, սկսեցին նրանք փախչել իրանց նախկին տեղերից և նորերը փնտրել, որտեղ ոչ աղաներ, ոչ էլ թագաւորի վարձկաներ կային: Նախարարների և աղաների համայնքները սկսեցին դատարկուել. այդ բանը ի հարկէ աղաներին դուր չեկաւ, և նրանք սկսեցին գան-

ՄԻՍԻԹԱՐԻՍ ԳՐԱԴԱՐԱՆ

գատել թագաւորն, որ ժողովուրդը հողի վրայից փախչում է, և այդ պատճառով նրանք չեն կարող իրանց պետական ծառայութիւնը կատարել։ Թագաւորները լսեցին նախարարների աղերսանքները և կամաց-կամաց սկսեցին սահմանափակել գիւղացիների կամքը և իրաւունքը մի համայնքից միւսը տեղափոխուելու վերաբերմամբ։ Սկզբում թոյլ տուին նրանց տարուայ մէջ միայն երկու անգամ տեղափոխուել,—իսկ յետոյ թագաւորներից մէկը բոլորովին վերջ դրեց գիւղացիների ազատութեան և առմիշտ կպցրեց նրանց իրանց հողին, Գիւղացիները հողով և մարմնով ընկան կալուածատէրերի իշխանութեան տակ։ 300 տարի տևեց ժողովրդի ճորտութիւնը. աւելորդ է յիշել անգամ թէ ինչպիսի տառապանքներ, ցաւ ու վիրաւորանքներ կրեց ժողովուրդը կալուածատէրերից՝ այդ ճորտատիրութեան ընթացքում. այդ բոլորը ամեն մի ազնիւ ոուսմարդու սրտում պիտի դրած լինի արիւնոտ ու բոցեղէն տառերով։

Շատ անգամներ է ապստամբել ամբողջ ժողովուրդը իր հարստահարիչների դէմ։ Բայց համերաշխ չէր գործում, և հարստահարիչները յաղթող հանդիսացան։ Նրանք թափեցին գիւղացիների արեան մի ամբողջ ծով և նրա մէջ խեղդեցին գիւղական ապստամբութիւնը։ 1861 թ. կատարուեց գիւղացիների ազատութիւնը ճորտային լուծից։ Ճանաչեցին, որ գիւղացիները ազատ մարդիկ են, որ թէ աստուածային և թէ մարդկային օրէնքներին հակառակ էր պահել նրանց այդքան ժամանակ ճորտութեան մէջ, նմանեցնելով նրանց անասունների, որոնց հետ կարելի էր անել, ինչ կուզես։ Տօն էր ամբողջ Ռուսաստանի համար։ Չէ՞ որ գիւղացիներին շնորհուեց ազատութիւն, որից նրանք այնքան ժամանակ անիրաւացի կերպով զրկուած էին։ Գովում ու փառաբանում էին ազատարար թագաւորին, որ նա վերադարձրեց գիւղացիներին նրանց նախկիր ազատութիւնը։

Բայց հողը ինչ եղաւ ուր մնաց... Այն հողը, որ ժողովուրդը ամբողջ հազար տարի ոդողել էր իր արիւն-քրտինքով. այն հողը, որ դարերից ի վեր գիւղացիների սեփականութիւնն էր և պէտք է լինէր։ Ազատեցի՞ն արդեօք հողը կալուածատէրերի ձեռքից և տո՞ւին այն գիւղացիներին։ Ո՛չ։ Հողը ճանաչուեց կալուածատէրերի սեփականութիւն և միայն իրաւունք տրուեց յետ գնել նրան. Գոնէ ամբողջ հողը, որ գիւղացիները մշակում էին, տային նրանց յետ գնելու։ Բայց ինչից ստիպուած այդպէս պիտի անէին. չէ՞ որ այդ այնքան էլ ձեռնտու չէր կալուածատէրերին։ Գործը աւելի հարպիկ կերպով գլուխ բերին։ Կալուածատէրերը թողին գիւղացիներին ամենավատ հողերը, ստիպեցին նրանց յետ գնել այդ հողերը, իսկ իրանց համար թողին ամենալաւը։

Գիւղացիների հողաբաժինները այնպէս էին բաշխուել, որ նրանք ոչինչ էլ չէին կարող անել այդ հողերի վրայ, որովհետև հողաբաժինները փոքր էին և գիւղացիները ստիպուած եղան էլի նոյն աղաներից հող կապալով վերցնել։ Իրօք, ի՞նչ կարող էր անել գիւղացին 2 դեսեատին հողի վրայ, երբ վերջինս երբեմն նոյնիսկ մի տեղում էլ չէր գտնուում, այլ մասամաս էր արուած։ Շնորհիւ ազգաբնակութեան աճման՝ գիւղացիների հողաբաժինները աւելի փոքրացան։ Իսկ որովհետև վճարումները անհամեմատ մեծ էին, այլևս ձեռնտու չէր հող պահելը։ Ինչ որ գիւղացին իր հողաբաժնից էր ստանում, ընկնում է գանձարանը, իսկ նա ինքը սովին էր մատնուած։ Եւ ահա նորից ինչպէս և առաջ ժողովուրդը ստիպուած է փախչել իր հողի վրայից, որը իւրացնում են զանազան վաշխառուներն ու մարդակերները։ Բայց ի՞նչով պարապեն նրանք, որոնք թողին իրանց հողը։ Ազատ հողեր էլ չկան, որ նրանք առաջուայ պէս գիւղական համայնքներ կազմեն։ Ո՞ւր փախչեն խեղճերը կալուածատէր աղաների ձեռքից։

Անհող գիւղացիները ուզեն-չուզեն նորէն պիտի հողատէր աղաների ճորտը դառնան, կամ, եթէ բաղդերը բերեց, որ և է գործարան մտնեն։ Սով-թագաւորի սարսափելի ուրուականը անհող գիւղացու գլխին է կանգնած, նա հալածում է նրան և գցում կալուածատիրոջ կամ գործարանատիրոջ թաթի մէջ, աղաների, որոնք հէնց դրան էլ սպասում են։ Ընկնելով աղայի ձեռքը, գիւղացին մշակում է իր պապական հողը նոյն նահապետական գութանով։ Սակայն ճորտի աշխատանքի արդիւնքը ընկնում է ոչ իր՝ ճորտի ձեռքը, այլ կալուածատէր աղայի ամ-

բաբը։ Ճորտը ստանում է միայն ողորմելի աշխատավարձ, որով հազիւ նա կարողանում է իր գլուխը և իր ընտանիքը պահել։ Ահա թէ ինչու շուկայում կալուածատէրը ծախում է այն ցորենը, որը ուրիշների աշխատանքի արդիւնք է, իսկ ճորտ հողագործը ծախում է նոյն կալուածատիրոջ «իր ձեռքերը», որոնք այնքան ցորեն են ցանում նոյն կալուածատիրոջ համար...

Մենք տեսանք, թէ ի՞նչպէս արտադրող-երկրագործը հողատիրոջ համար «աշխատաւոր ձեռքեր» դարձաւ։ Այժմ տեսնենք, թէ ո՞ւր մնաց արտադրող-արհեստաւորը։

Հին ժամանակներում փոքրիկ համայնքի զրութիւնը բաւական ծանր էր։ Այսպէս թէ այնպէս նա կարող էր մի կերպ իր ապրուստը հայթայթել։ Իսկ կեանքի ապահովութեան կողմից նրա կացութիւնը վատ էր։ Յաճախ թշնամին յարձակում էր նրան և մեծամեծ վնասներ հասցնում։ Այդպէսի յարձակումներից քիչ-շատ ապահովուած լինելու համար, փոքր համայնքները ստիպուած էին աշխատակցութեան դիմել, ինչպէս մի ժամանակ վայրենիները։ Աշխատակցութիւնը միացնում էր վայրենիներին՝ համայնքներին, իսկ այժմ միացնում է մի քանի փոքր համայնքներ ի մի մեծ համայնք, որ կազմում է քաղաք։ Երբ բնակիչները շատ են, ի հարկէ, աւելի հեշտ է պաշտպանուել թշնամիների դէմ, քան երբ համայնքները առանձին են ապրում։

Քաղաքի շուրջը կազմուում են արուարձաններ, փոքր համայնքներ, որոնց բնակիչները վտանգի ժամանակ ապաստան են գտնում քաղաքում։ Աշխատանքի բաժանումը համայնքերում առաջ է բերում արհեստաւորների՝ կօշկակարների, դերձակների, դարբինների և այլոց երևան գալը։ Բայց փոքր համայնքներում արհեստաւորների թիւը կամայ-ակամայ սահմանափակ է լինելու։ Եթէ, դիցուք, համայնքի համար մի դարբին էլ բաւական է, այդ դէպքում իւրաքանչիւր աւելորդ դարբին ստիպուած է հեռանալ համայնքից կամ մի ուրիշ արհեստով պարապել։

Այդպէս չէ քաղաքում. այստեղ բնակիչներ էլ շատ կան և շրջակայ համայնքներից էլ գալիս են քաղաքի շուկան իրանց ապրանքները փոխանակելու համար։ Այստեղ արդէն ամեն տեսակ արհեստաւորի ապրանքների մեծ պահանջ կայ. այս է պատ-

ճառը, որ բոլոր արհեստաւորներն էլ քաղաքում ապրել են ձգտում, և միայն քաղաքում է, որ ծաղկում են ամեն տեսակ արհեստագիտական արտադրութիւններ։ Իւրաքանչիւր արհեստաւոր պէտք է ունենայ այն բոլոր գործիքները, որոնք անհրաժեշտ են նրա աշխատանքի համար. նա պէտք է այնքան փող ունենայ, որ կարողանայ իր արդիւնքի համար հարկաւոր նիւթերը գնել,—մի խօսքով, նա պէտք է ունենայ այն, ինչ արդիւնաբերութեան միջոցներ են անուանում։

Դիցուք, քաղաք եկաւ մի փականագործ. նա ունի հարկաւոր բոլոր գործիքները, իսկոյն սարքում է իր արհեստանոցը և սկսում է աշխատել։ Նա վատ աշխատաւոր չէ, և ապրում է բաւական լաւ։ Բայց ահա նրա հետ դժբաղդութիւն է պատահում. նա սայթաքեց, ընկաւ և ոտը կոտրեց։ Աշխատելու հնար չկայ այլևս, սակայն պէ՞տք է ապրել, թէ չէ։ Սկզբում նա ուառում վերջացնում է իր՝ սև օրի համար պահածը, բայց աշխատել դեռ անկարող է։ Ի՞նչ անի խեղճը. ճարահատեալ սկսում է իր գործիքներ ծախել։ Ճիշտ է, սրտի խորը կսկիծով է նա բաժանւում նրանցից բայց ի՞նչ արած—ուրիշ ելք չկայ։ Մի քանի ամիս պառկած մնալուց յետոյ՝ նա վերջապէս վեր կացաւ, բայց գործիքների հետքն անգամ չէր մնացել, Մեր փականագործը գնում է իր հարևան փականագործի մօտ, որպէս զի նրանից ժամանակաւորապէս գործիքներ վերցնի և որ և է աշխատանք խնդրի, որովհետև նա միշտ շատ պատուէրներ է ունենում։ Դժբաղդաբար այդ հարևանը «խելքը գլխին» մարդ էր և իսկոյն հասկացաւ, թէ բանը ինչում է։ «Ոչ, սիրելիս, ասում է նա խեղճ փականագործին, «ես քեզ գործիքներ չեմ կարող տալ, այլ աւելի լաւ է այսպէս անենք,—ես պատուէրները շատ ունիմ, եթէ ուզում ես, կանգնիր այստեղ ու աշխատիր։ Ես քեզ կը վճարեմ, ինչքան հարկաւոր է, բայց պատրաստածդ ապրանքը իմը կըլինի»։ Շատ լաւ հասկացաւ մեր փականագործը թէ ի՞նչն էր «խելքը գլխին» մարդու ասածը, բայց ի՞նչ պիտի անէր—խօմ կորչելու չէր։

Եւ սկսում է աշխատել մեր բարեկամը իր ճարպիկ հարևանի արհեստանոցում։ «Խելքը գլխին» մարդը իզուր չարեց այդ ամբողջ մարքենայութիւնը. նա իր աշխատաւորից օգուտ

էր ստանում, և, ինչպէս ասում են, համը բերանը մնաց։ Եւ նա սկսում է փնտրել գործիքներից զուրկ փականագործներին և նրանց իր մօտը քաշել։ Ինչ ասել կուզէ, որ այդպիսիները միշտ գտնւում են, որովհետև մի՞թէ քիչ են դէպքերը, երբ արհեստաւոր մարդը փողոց է շպրտւում... Մէկը հրդեհի զոհ դարձաւ և «չփլախ» մնաց, միւսը իշխանի աւերած համայնքից փախաւ, և այլն։ Եւ «խելքը գլխին» փականագործը այդ բոլորին էլ իր մօտ է հաւաքում և աշխատանք տալիս. նա լայնացնում է իր արհեստանոցը, աւելացնում է գործիքների թիւը,—և աշխատանքը եռում է նրա մօտ։ Վաղուց է արդէն, որ նա ինքը թողել է աշխատելը, որովհետև ժամանակ չէկայ դրա համար,—չէ՞ որ արհեստանոցը պիտի կառավարէ։ Նա գիտէ, որ այդ արհեստանոցին «մանուֆակտուրայ» անունը պիտի կպցնել, և հրամայում է իր ապրանքների վրայ դրոշմել, դիցուք, Պետրոս Մարկոսեանի մանուֆակտուրա» կնիքը։

Մանուֆակտուրան ապրանքների արտադրութեան այն ձևն է, երբ որոշ թիւ աշխատաւոր արհեստաւորներ մանուֆակտուրայի տիրոջ արհեստանոցում արտադրում են ապրանքներ՝ տիրոջ գործիքներով և տիրոջ տուած նիւթերից, երբ նրանց աշխատանքի արդիւնքը լիովին տիրոջ գրպանն է մտնում, իսկ արհեստաւորները աշխատավարձ են ստանում։

Մանուֆակտուրայի տէրը արդէն կապիտալիստ է (կապիտալ խօսքից։ որ նշանակւում է առօրեայ լեզուում դրամագլուխ, իսկ մնտեսագիտութեան մէջ առանձին և շատ որոշ նշանակութիւն ունի)։ Նա ծախսում է կապիտալ, վարձում է արհեստանոց, գնում է նիւթեր ու գործիքներ, որպէս զի ուրիշի աշխատանքի միջոցով ստանայ աւելի շատ կապիտալ, աւելի մեծ օգուտ.

Արհեստային աշխատանքն այն բոլոր շրջաններում, որ տեղ թանդ գործիքներ են պէտք (փականագործի, դարբնի և այլոց համար), առաջ է գալիս մանուֆակտուրան, որովհետև ամեն տեղ էլ կը գտնուեն բաւականաչափ «խելքները գլխներին» մարդիկ, որոնք միշտ պատրաստ կլինեն դժբաղդութեան ժամանակ իրանց մերձաւորի տրիւն-քրտինքը քամել։

Մանաւանդ շատ են դուրս գալիս այդպիսի խելքները

գլխներին» մարդիկ չարչիների և վաճառականների միջից։ Միայն արհեստաւորների չնչին մասը կարող է պատուիրատուների համար աշխատել։ Առհասարակ լինում է այնպէս, որ այսօր ոչինչ պատուէր չունես ու ձեռքերդ ծալած պիտի նստես ու սպասես, իսկ վաղը մէկ էլ տեսար եկան,—հացը լաւ է բուսել հարևան գիւղերում, գիւղացիների ձեռքը աւելորդ կոպէկ ընկաւ և նրանք ուզում են տրեխների և պատառոտած ոտնամանների տեղ կօշիկներ գնել։ Ուրեմն եթէ չես ուզում տարուայ մի մասը ձեռներդ ծալած նստել, և ուզում ես հարկաւոր դէպքում պատրաստի ապրանք ունենալ,—չպէտք է պատուէրների սպասես, այլ անդադար պիտի աշխատես վաճառքի համար։

Նախօրօք ծախու համար ապրանք պատրաստելու այս ձևը կոչւում է տնայնագործութիւն, որը զանազանւում է սովորական արհեստից նրանով, որ այստեղ ապրանքը պատրաստւում է առանց պատուիրողների։ Միջին Ռուսաստանի նահանգներում կան շատ գիւղեր, որոնք ամբողջապէս տնայնագործութեամբ են պարապում։ Մի գիւղի բնակիչները դամեր շինողներ են, միւսինը՝ հիւսներ, երրորդինը՝ կօշկակարներ և այլն։ Նախօրօք պատրաստում են անգրագիտ քանակութեամբ ապրանքներ և յետոյ գանազան շուկաներում և տօնական ճառներում ծախում են։ Իսկ որովհետև ապրանք ծախելը գլուխ ցաւեցնող մի գործ է, որ հմտութիւն և շրջանառութեան մէջ գտնուող դրամագլուխ է պահանջում,—տնայնագործները գանազան չարչի — ճիւաղների ձեռքն են ընկնում։ Վերջիններս ընդունում են տնայնագործներից պատրաստի ապրանքը, վճարում են փողը և երբեմն նոյնիսկ ապագայում պատրաստուելիք ապրանքի համար «բէհ» (գրաւ) են տալիս։ Դրա փոխարէն տնայնագործը աշխատում է չարչու համար ճիշդ այնպէս, ինչպէս քաղաքի բանուորը գործատանատիրոջ համար։

Միայն անունով է տնայնագործը իր գլխի տէրը, բայց իրօք նա այնքան է սարկացած, որ առանց չարչու մի քայլ անգամ չի կարող անել։ Ամբողջ առևտուրը չարչիների ձեռքումն է գտնւում. չարչիները բէհ են տալիս աշխատանքի համար, նրանք տալիս են տնայնագործին յաճախ և նիւթեր։ Ա-

դա-չարչուն նեղացնելը մեծ անբաղդութիւն է. նա կարող է այլևս չընդունել քո ապրանքը և կըթողնէ, որ դու սատկես սովից։ Պարզ է, որ ամբողջ օգուտը վաշխառու վաճառականի ջերն է մտնում, իսկ տնայնագործի բաղդը սարկական աշխատանքը և աղքատութիւնն է միայն։ Վատ է գիւղական տնայնագործների կացութիւնը, բայց նախանձելի չէ և քաղաքի արհեստաւորների վիճակը։ Այստեղ նրանց սարկացնում են պատրաստի ապրանքների խանութատերները և կապալառուները։

Ճարպիկի մէկը ինքը մի հատ կօշիկ անգամ կարել չըգիտէ, բայց քաղաքային խորհուրդից կամ ինտենդանտային վարչութիւնից հազարաւոր կօշիկների պատուէր է վերցնում, գրաւ է տալիս,—իսկ ամբողջ աշխատանքը կօշկակարների միջև է բաժանում։ Մատը մատին չըզարկած, նա ստանում իւրաքանչիւրի կօշիկից բաւական օգուտ, և նոյնիսկ իր գլուխն էլ գովում է. «Ես, ասում է նա պարծենկոտութեամբ, ձեր բարերարն եմ, ես ձեզ աշխատանք եմ տալիս. առանց ինձ դուք սովից կը սատկէք»։ Իսկ կօշիկների խանութը յայտարարութիւն է անում, որ պատուէրներ է ընդունում. և սակայն նոյնպէս վարձովի կօշկակարների մէջ է բաժանում ստացած պատուէրները։ Այսպէս ամեն տեղ անկախ արհեստաւորը ընկնում է իր հարևան արհեստաւորի լուծի տակ։ Սա էլ երեկ գուցէ նրա նման հասարակ մշակ էր և մէջքը երկուտակ արած անդադար աշխատում էր, բայց այժմ որքան հեռու են նրանք միմիանցից իրանց դիրքով։ Ի՞նչպէս նա սովորեց ուրիշի աշխատանքով ապրել, ի՞նչպէս նա իր ձեռքի տակ հաւաքեց իր եղբայր-արհեստաւորներին և ստիպեց նրանց իր համար աշխատել...

Վերադառնանք մեր «խելքը գլխին» փականագործին, որը իր համար մանուֆակտուրայ բացեց։ Նրա գործերը լաւ են գնում, Շնորհիւ «հալալ» աշխատանքին նրա փորը զգալի կերպով հաստացաւ, նա ինքը պատկառել և վայելուչ կերպարանք ստացաւ, և այժմ նրա անունը «Մարկոս աղա» է։ Նա շուտշուտ է յաճախում Աստծու տաճարը, սրբերի առաջ փթանոց մոմեր է վառում, և այդ բոլորը անում է իբրև շնորհակալութիւն այն բանի համար, որ այդ սրբերը ողորմած են դէպի

նա և պարգևում են նրանց՝ անարժանին հարստութիւն. իսկ այն, որ նրա մօտ աշխատող բանուորները անիծում են այն օրն ու ժամը, երբ նա լոյս աշխարհ է եկել, այն որ նրանք աշխատելուց ուժասպառ են լինում և սովից քիչ է մնում մեռնեն,—այդ բոլորը ոչինչ... Չէ՞ նրանք հարիւրապատիկ կըվարձատրուեն միւս աշխարհում...

Այժմ նայենք, թէ ի՞նչպէս պիտի ազդէր մեր «խելքը գլխին» մարդու մանուֆակտուրան առանձին աշխատող ինքնուրոյն փականագործների վրայ։ «Խելքը գլխին» փականագործի մանուֆակտուրայում աշխատում են, դիցուք, 10 մարդ։ Նրանց բոլորի համար նա պահում է մի արհեստանոց։ Իսկ անկախ փականագործները ստիպուած են ամեն մէկը իր համար մի առանձին արհեստանոց ունենալ։ 10 փականագործները աշխատում են մի արհեստանոցում, իսկ 10 անկախ փականագործները 10 հատ արհեստանոց պիտի պահեն։

Ուրեմն մանուֆակտուրայի տէրը անկախ փականագործների հետ համեմատած ունի այն առաւելութիւնը, որ շահում է արհեստանոցի վարձ, վառելիքի և լուսաւորութեան մէջ։ Բայց այդքան դեռ բոլորը չէ։ Իւրաքանչիւր ազատ փականագործ, եթէ ուզում է կարգին աշխատել, պէտք է իր արհեստի համար հարկաւոր բոլոր գործիքները ունենայ, չը նայելով, որ նրա գործիքների մի մասը միշտ առանց գործադրութեան է մնում. եթէ, դիցուք, նա բանում է զնդանի վրայ, խարտոցները նրան պէտք չեն։ Ուրեմն գործիքների մէջ էլ մանուֆակտուրայի տէրը բաւական օգտուում է՝ համեմատելով առանձին փականագործների հետ։ Մանուֆակտուրայում մէկը մի բան է անում, միւսը՝ ուրիշ. այդպիսով՝ այդտեղ գործիքները էլ պարապ չեն մնում. Այս նշանակում է, որ գործիքների վերաբերմամբ էլ մանուֆակտուրայի տէրը առաւելութիւններ ունի՝ անկախ արհեստաորի հետ համեմատելով։ Բայց այդ էլ դեռ բոլորը չէ։ Փականագործը, որ կողպէքներ է շինում մենակ իր արհեստանոցում, ինքը պէտք է կռէ-կոփէ կողպէքի մասերը, յետոյ էլ ինքը պէտք է դրստէ ու մաքրէ վերջացնէ, և վերջապէս ինքը պիտի ի մի հաւաքէ կողպէքի մասերը։ Այդ պատճառով նա ստիպուած է մի գործիքից միւս դիմել և

իզուր աեղ ժամանակ կորցնել։ Եթէ մարդ մի գործիքով է աշխատում, նա կարող է շատ աւելի արագ ու լաւ աշխատել, քան եթէ մարդ ստիպուած է յաճախ փոխել իր գործիքները, որովհետև ամեն մի գործիքի «սամթը» պէտք է առնել,—մի բան, որ ամեն անգամ շատ ժամանակ է խլում։ «Ինքը գլխին» փականագործը տեսնում է, որ մի գործիքից միւսին անցնելը ունի շատ մեծ անյարմարութիւններ. և նա մացնում է իր մանուֆակտուրայի մէջ աւելի օգտակար կարգ. «Բաւական է, որքան դուք դարձանոցից արհեստանոց գնացիք եկաք», ասում է նա իր աշխատաւորներին, «թող ձեզանից երկուսը դարբնոցում կողպէքների մասերը կռեն, հինգը թող այդ մասերը դրբստեն ու սարքեն, իսկ երկուսը թող մասերը ի մի հաւաքեն»։ Ուրիշ խօսքով, իր մանուֆակտուրայի մէջ նա մացնում է աշխատանքի բաժանում։

Աշխատանքի բաժանման ժամանակ հասայնքում իւրաքանչիւր մարդ մի որ և է արդիւնք է արտադրում. այս ձևը կոչւում է աշխատանքի հասարակական բաժանում։ Աշխատանքի մանուֆակտուրային բաժանման ժամանակ իւրաքանչիւր բանւոր արտադրում է ոչ ամբողջ արդիւնքը, այլ արդիւնքի միայն մի մասը, Պարզ է, որ աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը աշխատանքը աւելի արդիւնաւոր է դարձնում, քան հասարակական բաժանումը։ Նախ, որ իւրաքանչիւր բանւոր մի գործիքից միւսին անցնելու համար ժամանակ չի կորցնում, և երկրորդ՝ շարունակ մի գործիքի վրայ աշխատելով, բանւորը նրա «սամթն» է առնում և աւելի արագ է աշխատում, քան եթէ նա յաճախ փոխէր գործիքները։

Աշխատանքի մանուֆակտուրային բաժանման հէնց այդ առաւելութիւններից և շահաւէտութիւնից զուրկ են աշխատող փականագործները։ Եւ այդ է պատճառը, որ նրանց աշխատանքը մանուֆակտուրային աշխատանքի հետ համեմատած աւելի քիչ արդիւնաւէտ է։ 10 ազատ փականագործներ եթէ իւրաքանչիւրը օրական 5 կողպէք շինի, միասին 50 կողպէք կը պատրաստեն,—իսկ 10 մանուֆակտուրային փականագործներ, որոնք միասին են աշխատում, իրանց տերոջ համար օրական 70-կան կողպէք կը պատրաստեն։

Այսպէս ուրեմն մանուֆակտուրայի տէրը համեմատած անկախ բանող փականագործի հետ ունի այն առաւելութիւնը, որ բանւորների նոյն քանակութեամբ ստանում է շատ աւելի արդիւնքներ։ և բացի այդ՝ արհեստանոցի և գործիքների համար նա շատ աւելի քիչ է ծախսում։ Հարկաւոր նիւթերը նա ձեռք է բերում միշտ մեծ քանակութեամբ և ուրեմն՝ աւելի էժան։ Իսկ ծախելու ժամանակ նա հնարաւորութիւն ունի սպասելու, որպէսզի ապրանքը թանգանայ,—քանի որ նա ունի աւելորդ փող. — մի խօսքով ամեն տեղ էլ նա աւելի ձեռնտու պայմանների մէջ է դրուած, քան հասարակ արհեստաւորը։

Մանուֆակտուրիստը իր ապրանքները շուկայ է դուրս բերում, իսկ ազատ արհեստաւորը՝ նոյնպէս իր ապրանքները. նրանց ապրանքները միատեսակ են, բայց արժէքը՝ տարբեր։ Մանուֆակտուրիստի մօտ ամեն մի բանւոր օրական 7 կողպէք է պատրաստում. իսկ ազատ փականագործը միայն 5 հատ։ Պարզ է, որ մանուֆակտուրիստը կարող է իր ապրանքները աւելի էժան ծախել։ Առաջ է գալիս մրցում մանուֆակտուրիստների և ինքնագլուխ փականագործների միջև (վաճառողների մրցում), որը իջեցնում է կողպէքների գինը (7 կողպէքը—աշխատանքի 1 օր)։ Թէև ինքնագլուխ փականագործները օրական միայն 5 կողպէք են շինում, սակայն նրանք ստիպուած են ծախել նոյն գնով, ինչ գնով որ ծախում են մանուֆակտուրիստները։ Այլապէս ոչ ոք էլ նրանցից ապրանք չի գնի։ Պարզ է, որ վերջ ի վերջոյ նրանք պէտք է սնանկանան և թողնեն իրանց ինքնուրոյն արհեստը։ Ունենալով վերևում յիշած առաւելութիւնները, մանուֆակտուրիստը մրցման միջոցով մեռցնում է մանր արհեստը, զրկում է արհեստաւորներին նրանց արդիւնաբերութեան գործիքներից, ազատ արհեստաւորներին ուրիշի ստրուկներ է դարձնում։

Բայց մանուֆակտուրաները մրցում են ոչ միայն մանր արհեստի, այլ և միմիանց հետ։ Որքան աւելի մեծ է մանուֆակտուրան, այնքան աւելի ձեռնտու է նրա դիրքը մանր մանուֆակտուրայի հետ համեմատած, այնքան աւելի քիչ է ծախսում արդիւնաբերութեան գործիքների վրայ և այնքան աւելի օգտուում է աշխատանքի աւելի մեծ բաժանումից։ Հետևա-

պէս որքան աւելի մեծ է մանուֆակտուրան, այնքան նրա աշխատանքը աւելի արդիւնաւէտ է, այնքան աւելի էժան կարող է նա ծախել իր ապրանքները։ Խոշոր և մանր մանուֆակտուրաների միջև միշտ տիրում է անընդհատ մրցում, և խոշոր մանուֆակտուրան պէտք է ոչնչացնէ մանրը ճիշտ այնպէս, ինչպէս մանր մանուֆակտուրան ոչնչացնում է մանր արհեստի արդիւնաբերութիւնը։

Մանուֆակտուրաների մրցումը արտայայտւում է նրանով, որ իւրաքանչիւր մանուֆակտուրայ աշխատում է տիրել շուկային։ Այդ նպատակին հասնելու համար նա ծախում է ապրանքները որքան կարելի է էժան։ Իսկ աւելի էժան ծախել նա կարող է միայն այն ժամանակ, երբ նրանց արտադրութիւնը պահանջում է աւելի քիչ մարդկային աշխատանք։ Երևան են գալիս մեքենաները։ Մեքենան, կարելի է ասել, ուղղակի փոխարինում է արհեստաւորի աշխատանքը։ Մեքենան արտադրում է մեքենայաբար և տալիս է շատ արդիւնք, որի արտադրութիւնը պահանջում է արհեստաւորից շատ հմտութիւն և երկարատև նախապատրաստութիւն. լաւ ջուլհակ լինելու համար պէտք է երկար սովորել,—այս է պատճառը, որ ջուլհակի աշխատանքը աւելի շատ է վարձատրւում, քան դիցուք մշակի աշխատանքը, որ բոլորովին սովորելու կարիք չկայ։ Այն կապիտալիստը, որը ոստայնագործարան է ուզում բաց անել, պէտք է գտնի արդիւնաբերութեան գործիքներից զուրկ արհեստաւոր—ջուլհակներին և ստիպէ նրանց վարձով աշխատել իր համար։ Այդ վարձը անշուշտ հասարակ բանուորի վարձից աւելի մեծ կը լինի։ Բայց ահա մարդիկ հնարեցին ոստայնագործութեան շոգեմեքենան, որ աւելի արագ և աւելի լաւ է գործում, քան ջուլհակը։ Այն մանուֆակտուրիստը, որ շոգեմեքենայ է դրել իր արհեստանոցում, արդէն բոլորովին կարիք չունի ջուլհակի ճարպիկութեան և փոխարինում է նրան հասարակ բանուորով, որովհետև շոգեմեքենայի վրայ աշխատել մի մեծ գործ չէ, իսկ հասարակ բանուորին անշուշտ աւելի քիչ պէտք է տալ, քան արհեստաւորին։ Հետևապէս մեքենան փոխարինելով արհեստաւորների ճարպիկութիւնը, կապիտալիստին հնարաւորութիւն է

տալիս եօլայ գնալ առանց արհեստաւորի, նրա փոխարէն բանեցնել հասարակ աշխատաւորներ։

Այսպէս առաջ է գալիս գործարանը։ Նշանակում է, որ արհեստաւորների ձեռքով կատարուող և նրանցից երկարատև նախապատրաստութիւն պահանջող աշխատանքը գործարանում կատարւում է մեքենայի միջոցով, որի գործադրութիւնն էլ յանձնւում է անուս բանուորների, որոնցից չէ պահանջւում ոչ մի նախապատրաստութիւն։ Աշխատանքի արդիւնաւորութիւնը գործարանական արդիւնաբերութեան մէջ շատ աւելի մեծ է. քան ուրիշ որ և է արդիւնագործութեան մէջ։ Որ և է արհեստաւոր-դարբին օրական դիցուք 600 հատ մեխ կը շինի, իսկ գործարանում հասարակ բանուորը՝ մի քանի հազար։ Պարզ է, որ մեքենայի պատրաստած մեխերը արհեստաւորի շինած մեխերից շատ աւելի էժան կը լինեն։ Առհասարակ գործարանը մահացու հարուած է տալիս մանր արհեստին և մանուֆակտուրային, և բաց է անում իր դռները հասարակ բանուորի առաջ, ոչնչացնում է կարիքը արհեստաւորի արտադրութեան մէջ։ Իսկ իրանք արհեստաւորները կամ կամաց-կամաց սովից են մեռնում, կամ դառնում են գործարանական հասարակ բանուորներ, գործարանատիրոջ համար «աշխատաւոր ձեռքեր»։

Ամփոփենք մեր ասածները արտադրող-երկրագործների և արտադրող-արհեստաւորների՝ կապիտալիստի համար «աշխատաւոր ձեռքեր» դառնալու մասին։ Հին ժամանակներում զինուորական պահանջները համայնքներում (պաշտպանութիւն թշնամիներից և յարձակում) հայրենի համայնքի ամենաուժեղ և ամենաքաջ անդամների ձեռքը իշխանութիւն են տալիս և դարձնում նրանց զօրապետներ։ Այդ զօրապետները կամաց—կամաց հպատակեցնում են իրանց՝ հայրենի համայնքները և նրանց տէրը դառնում։ Նրանք դադարում են իրանց գոյութեան համար միջոցներ հայթայթել, և ապրում են իրանց ռազմիկների հետ այն հարկով, որ վերցնում են նրանք իրանց հպատակներից, նոյնպէս և այն աւարով, որ թալանում են նրանք օտար համայնքներից։ Համայնքների միջև տեղի ունեցող մշտական կռիւները վերջանում են նրանով, որ ամենաուժեղ համայնքների զօրապետը հպատակեցնում է բոլոր թոյլ համայնքները և

նրանց վրայ հարկեր է նշանակում: Այնուհետև ամենից ուժեղ զօրապետները, որոնք հպատակեցրել են թոյլ համայնքները, շարունակում են պատերազմել իրար հետ, մինչև որ վերջի-վերջոյ որոշ շրջանում զօրապետներից մէկը յաղթում է միւս բոլոր զօրապետներին և նրանց համայնքները իրան հպատակ դարձնում: Առաջ է գալիս պետութիւնը, որի գլուխն է կանգնած զօրապետը կամ իշխանը:

Այսպէս առաջ եկաւ և ռուսաց պետութիւնը: Ռուս իշխանները և թագաւորները բաժանում էին իրանց ռազմիկներին, իրանց բօեարներին (նախարարներին) ամբողջ համայնքները: Նախարարները քամում էին համայնքների եկամուտը, բայց հողը մնում էր իբրև համայնական սեփականութիւն և նախարարները չէին խառնւում համայնքների հողային կարգերի մէջ: Իսկ երբ ժողովուրդը շնորհիւ դաժան ճնշումների ըսկսեց փախչել, թագաւորները նրան կապեցին հողի հետ: Բօեարները, կալուածատէրերը գիւղացիների տէրը դառան, իսկ հողը այնուամենայնիւ էլի մնում էր իբրև համայնքի սեփականութիւն: Բայց յետոյ, երբ եկաւ գիւղացիների ազատութիւնը, կալուածատէրերին ճանաչեցին ոչ գիւղացիների հողիների սեփականատէրեր (այդ հակառակ է աստուածային օրէնքներին), այլ այն հողի, որ գիւղացիները մշակում էին դարերից ի վեր:

Դուրս եկաւ համարեա, միևնոյն բանը, որովհետև այն գիւղացիները, որոնք շատ չնչին հողաբաժին էին ստացել, ստիպուած էին կամ հողը կալուածատիրոջից կապալով վերցնել, կամ գնալ կրկին նրա մօտ ճորտութիւն անելու: Կալուածատէրը առաջուայ պէս էլի նստած է գիւղացու մէջքին և ծծում է նրա արիւնը: Այսպէս արտադրող-երկրագործը, որ զրկուեց հողից, «աշխատաւոր ձեռքերը» դառաւ: Արտադրող-արհեստաւորները հաւաքուեցան քաղաքներում: Ով աւելի ճարպիկ ու խելացի է, նա ունի շատ առաւելութիւններ թոյլերի հանդէպ. թոյլերը վաղ թէ ուշ զրկւում են ագրիմնաբերութեան գործիքներից և մտնում են ուժեղների մօտ իբրև բանուորներ:

Առաջ է գալիս մանուֆակտուրան: Բաւական է որ նա առաջ եկաւ և նա մրցումի միջոցով ոչնչացնում է մանր արտադրողներին և անդիմադրելի կերպով ձգտում է իր ձեռքը դցել

արհեստի ամբողջ արդիւնաբերութիւնը: Արդիւնաբերութիւնը լայնացնել և ապրանքները էժանացնել ձգտելով՝ մանուֆակտուրաների մրցումը առաջ է բերում մեքենաներ և գործարանական արդիւնաբերութիւն, որի մէջ մեքենան փոխարինում է մարդկային ճարպիկութեանը, իսկ հասարակ բանուորը՝ արհեստաւորին:

Մրցումի միջոցով գործարանը ոչնչացնում է մանուֆակտուրան և մանր արհեստը, իսկ արդիւնաբերութեան գործիքներից զրկուած արհեստաւորին դարձնում է հասարակ բանուոր, «աշխատաւոր ձեռքեր» մեքենաների համար: Հասարակական կեանքի արշալոյսին աշխատանքի բաժանումը մարդկանց երկու մեծ մասի է բաժանում արտադրող-երկրագործներն և արտադրող արհեստաւորների: Երկար դարեր իւրաքանչիւր մասը կատարում և հանրամարդկային աշխատանքի իրան սահմանած շրջանը: Արտադրող-երկրագործը իր գարեւոր չարչարանքները կրում է նախարարների և կալուածատէրերի ձեռքից, իսկ արտադրող-արհեստաւորը՝ մանուֆակտուրայից և գործարանից: Եւ ահա, վերջի-վերջոյ, այդ երկու արտադրողներն աշխատանքի գործիքներից զրկուած՝ կրկին պատահում են միմիանց գործարանական մեքենայի առաջ: Բայց նրանց մէջ տարբերութիւն չկայ—նրանք միայն «աշխատաւոր ձեռքեր» են,

Սկզբնական ժամանակներում վայրենիները, որոնք ծանօթ չէին աշխատանքի բաժանման հետ, չէին կարող ունենալ այն գիտելիքները, այն մտաւոր զարգացումը, որ ունէր յետոյ երկրագործը և արհեստաւորը: Իսկ երբ երկրագործն ու արհեստաւորը իրանց բոլոր տառապանքները կրելուց յետոյ գործարան ընկան, նրանք արդիւնաբերութեան գործիքների հետ միասին կորցրին և այն գիտելիքները, մտաւոր այն զարգացումը, որ պահանջում էր արդիւնաբերութիւնը:

Այդ բոլորը փոխարինում է մեքենան, իսկ աշխատաւորից ոչ խելք, ոչ գլուխ է պահանջում. մարդ արտադրողը կապիտալիստի համար «աշխատաւոր ձեռքեր» է դառել: Հետևապէս, արտադրողը վերջացնում է նրանով, ինչով որ սկսել էր, այսինքն դառնում է վայրենի: Եթէ ամեն ինչ կապիտալիստի կամքին թողնէիք այդ այդպէս էլ կը լինէր: Բայց ոչ ամեն

բան, բարեբաղդաբար, նրանցից է կախուած։ Զը նայելով որ ամեն ճիգ գործ են դնում կապիտալիստները, սակայն ոչ մի տեղ չեն թագաւորում անպայման նրանց սրտին հաճելի կարգերը։

Ամենուրեք գործարանի կողքին կըպատահեն մանուֆակտուրայ և մանր արհեստ։ Մրցումը դեռ ևս չի զարգացել ինչպէս հարկն է, մանր կապիտալիստն էլ դեռ կուում է անյողդողդ խոշոր կապիտալիստի վայրենի ախորժակի դէմ։ Ծանր է արտադրողի համար իր ազատութիւնից զրկուելը, մարդուց «աշխատաւոր ձեռքեր» միայն դառնալը։ Այդ է պատճառը, որ գիւղացին աշխատում է յաճախ ծղօտի համար, միայն թէ իրան զգայ մարդ, տէր իր սեփական գործի մէջ։

Չնայած դրան, գիւղացիների հողազուրկ լինելը աճում է ոչ օրերով, այլ ժամերով։ Արդէն այժմ մենք ունենք 7 միլիոնի չափ հողազուրկ գիւղացիներ, և եթէ մեր տնտեսական կարգերում ոչինչ յեղափոխութիւն չըլինի, այն ժամանակ մենք կըտեսնենք շուտով այն, ինչ այնքան սրտանց ուզում են կապիտալիստները, որոնք այնքան արցունքներ են թափում Ռուսաստանում «աշխատաւոր ձեռքերի» քչութեան համար,—մենք կըտեսնենք, որ հողազուրկների թիւը կըկրկնապատկուի, կըեռապատկուի և այլն։

Նայենք այժմ, ինչպէս են գործադրում կապիտալիստները այն «աշխատաւոր ձեռքերը», որոնք ընկնում են նրանց իշխանութեան տակ։ Նայենք, ինչպէս են նրանք դուրս քաշում նրանցից այն շահերը, դէպի որը նրանցից ամեն մէկը անյագ ագահութիւն է ցոյց տալիս։

IV

ՅԱՒԵԼԵԱԼ ԱՐԺԷՔ

Իւրաքանչիւր կապիտալիստ, որ ծախսել է կապիտալ որ և է ձեռնարկութեան համար, ի հարկէ աչքի առաջ ունի միմիայն մի նպատակ—շահ ստանալ։ Եթէ այդ շահը չլինէր, ոչ

ՄԻՈՒԹԻՒՆ ԳՐԱԴԱՐԱՆ

մի կապիտալիստ ոչ մի ձեռնարկութիւն չէր սկսիլ։ Իսկ որովհետև մենք տեսնում ենք, որ կապիտալիստական ձեռնարկութիւնները աճում են սունկի նման,—պարզ է, որ կապիտալը քիչ շահ չի տալիս, շահ, որին այնքան սիրահար են կապիտալիստները։ Որտեղից է առաջ գալիս կապիտալի այդ շահը։ Տարածուած կարծիքը ասում է որ շահը առաջ է գալիս առուտուրից,—գնում են էժան, իսկ ծախում թանկ,—այսինքն՝ թէ կապիտալի շահը առաջանում է շուկայում՝ փոխանակութիւնից։ Տեսնենք, որքան այդ ճշմարիտ է։ Դիցուք չթի գործարանատէրը պէտք է գնէ ոստանագործութեան մի շոգեմեքենայ։ Նա դուրս է բերում շուկայ չթեր, որոնք իրանց մէջ պարունակում են 500 օրուայ աշխատանք և որոնց իսկական արժէքը, օրինակ, 500 ռուբլի է։ Արդեօք մի նոր արժէք առաջանում է նրանից, որ գործարանատէրը ունէր 500 ռուբլու ապրանքային արժէք, իսկ գնողը 500 ռուբլու փողային արժէք։ Փոխանակութիւնը կայանալուց յետոյ շուկայում կրկին առաջուայ պէս 1000 ռուբլու արժէք մնաց, և փոխանակութիւնը ոչ մի գրօշ չ՝աւելացրեց այդ 1000 ռուբլուն։ Սակայն որտեղից դուրս եկաւ ֆաբրիկանտի շահը։ Ենթադրենք այժմ, որ իւրաքանչիւր ֆաբրիկանտ ծախում է իր ապրանքը նրա իսկական արժէքից թանկ։ մեր ֆաբրիկանտը իր չթերը ծախում է ոչ թէ 500 ռուբլու, այլ 600 ռուբլու։ Ծախելուց յետոյ այնուամենայնիւ ոչ մի նոր արժէք չի աւելանայ շուկայում։ 1100 ռուբլու արժէք կար 500 ռ. ապրանք ֆաբրիկանտի մօտ, և 600 ռ. փող գնողի մօտ, այդքան էլ մնաց կրկին։ Միայն այժմ ֆաբրիկանտը 600 ռ. արժէք ունի իր ձեռքում, իսկ գնողը 500 ռ.։ Մի գրօշի արժէք անգամ չ՝աւելացաւ, սակայն ֆաբրիկանտը 100 ռ. աւելորդ արժէք ստացաւ։ Դուցէ այդ հենց 100 ռ. ֆաբրիկանտի շահն են կազմում. բոլորովին ոչ։ Եթէ իւրաքանչիւր ֆաբրիկանտ ծախում է իր ապրանքը նրա իսկական արժէքից թանկ, վերջի վերջոյ նրանցից ոչ-ոք ոչինչ շահ չի ստանում։ Մեր ֆաբրիկանտը չթի համար 600 ռ. ստացաւ, մինչդեռ այդ չթեը միայն 500 ռ. արժէր։ Նա ուզում է գնել ոստանագործութեան մի մեքենա, որի արժէքը 500 ռուբլի է։ Բայց մեքենաների ֆաբրիկանտը մեքենան կը ծախէ նը-

բա իսկական արժէքից թանկ, այսինքն ոչ 500 ռուբլով, այլ 600։ Մեր չթի գործարանատէրը, որ 100 ռ. շահ էր ստացել չթի համար, այժմ պէտք է կորցնէ այդ փողը մեքենան գնելու ժամանակ, առանց որին նա չի կարող եօլայ գնալ։

Այսպէս, մենք տեսնում ենք, որ փոխանակութիւնից չեն կարող նոր արժէքներ առաջանալ, որ փոխանակութիւնը չի կարող կապիտալիստին շահ տալ կապիտալի համար։ Այնուամենայնիւ չթի գործարանատէրը պէտք է ախր իր ապրանքը մի տեղ ծախէ և ստանայ իր շահը։ Այլապէս ինչի համար նա պիտի սկսէր այն գործը։ Եւ իրաւ, ֆաբրիկանտը շահը ստանում է իր ապրանքը ծախելու ժամանակ, բայց ոչ ծախելուց (փոխանակութիւնից)։ Ուրեմն կապիտալի համար տրուող շահը առաջանում է ծախելուց կամ փոխանակութիւնից առաջ։ Բայց որովհետև կապիտալիստի գլխին չի կարող աւելորդ արժէքը (շահը) ընկնել երկնքից, մնում է միայն ենթադրել, որ կապիտալի համար ստացուող շահը առաջանում է ապրանքների հենց արտադրութեան ժամանակ։ Բայց ապրանքների արտադրութեամբ պարապում են միայն «աշխատաւոր ձեռքերը», հետևապէս միայն այդ բազմաչարչար ձեռներն են, որ արտադրում են և տալիս են կապիտալիստին շահ։

Տեսնենք թէ ինչպէս է այդ կատարուում։ Կապիտալիստը չթի գործարան էր ուզում շինել։ Նա կառուցեց շինութիւնը, գնեց մեքենաները, բերել տուեց բամբակ։ Բայց նրան հարկաւոր են բացի դրանից «աշխատաւոր ձեռքեր»։ Առանց նրանց թէկուզ բոլոր մեքենաները միասին վերցրած ոչինչ են կապիտալիստի համար։ Մենք արդէն գիտենք, որ «աշխատաւոր ձեռքերը» կարելի է շուկայում ձեռք բերել ճիշտ այնպէս, ինչպէս և մեւս ապրանքները։ Այնտեղ էլ ուղղում է կապիտալիստը իր քայլերը։ Նա վարձում է «աշխատաւոր ձեռքեր»։ Այդ ինչ է նշանակում։ Այդ նշանակում է, որ նա գնում է բանուորներից նրաց աշխատաւոր ոյժը որոշ ժամանակամիջոցով՝ մի օրով կամ մի ամսով և այլն։ Ո՞րքան է նա վճառում այդ ոյժի համար։ Որովհետև աշխատաւոր ոյժը ծախւում է շուկայում և նա ապրանք է, ուստի աշխատաւոր ոյժի արժէքը, ինչպէս և ամեն մի ապրանքի արժէքը չափւած է աշխատանքի այն քանակով, որ անհրաժեշտ է նրա արտադրութեան համար։

Աշխատաւոր ոյժը՝ հակառակ միւս բոլոր ապրանքներին, արտադրւում է մարդու հէնց մարմնի մէջ։ Աշխատաւոր ոյժ ունենալու համար մարդս պէտք է ուտէ, խմէ, շոր ու բնակարան ունենայ. իսկ այդ բոլորը ձեռք բերելու համար անհրաժեշտ է որոշ աշխատանք։ Հետևապէս, աշխատաւոր ոյժի արժէքը չափւում է աշխատանքի այն քանակով, որ անհրաժեշտ է բանուորի կեանքը պահպանելու միջոցների արտադրութեան համար։ Բայց բանուորը անմահ չէ, իսկ աշխատաւոր ոյժը միշտ պէտք է։ Բանուորի մահուան հետ ընդհատւում է և նրա աշխատաւոր ոյժը, իսկ կապիտալիստը կարող է մնալ առանց «աշխատաւոր ձեռքների»։ Ուրեմն, բանուորը պէտք է որ և է փոխարինող ունենայ, որը կապիտալիստին կրտայ անընդհատ աշխատաւոր ոյժ։ Ուստի և աշխատաւոր ոյժի արժէքը չափւում է աշխատանքի այն քանակով, որ անհրաժեշտ է բանուորի և նրա ընտանիքի կեանքը պահպանելու միջոցների արտադրութեան համար։ Այդ արժէքը նա ստանում է աշխատավարձի միջոցով։

Այսպիսով, կապիտալիստը, չթի ապագայ գործարանատէրը, պէտք է վճարէ բանուորներին նրանց աշխատաւոր ոյժի արժէքը։ Ի՞նչ է նա ստանում նրանցից դրա փոխարէն։ Վարձելով շուկայում «աշխատաւոր ձեռքերի» մի մեծ քանակութիւն, նա տանում է նրանց գործարան և ստիպում է աշխատել։ «Աշխատաւոր ձեռքերը» սկսում են արտադրել նրա համար չթի։ Ֆաբրիկանտը պէտք է վճարէ բանուորներին նրանց որոշ ժամանակի աշխատաւոր ոյժի արժէքը, իսկ ինքը ստանում է բանուորների՝ նոյնքան ժամանակի աշխատանքը։

Մենք արդէն գիտենք, որ աշխատանքի բաժանումը աշխատանքը արդիւնաւէտ է դարձնում, այսինքն որ իւրաքանչիւր արտադրող արտադրում է, օրինակ, մի օրուայ մէջ աւելի արդիւնք, քան անհրաժեշտ է նրան մի օրուայ ապրուստի համար։ Բանուորը, ուրիշ խօսքով, աւելի արժէք է արտադրում, քան արժէ նրա մի օրուայ աշխատաւոր ոյժը։ Եթէ կեսակրի, շորի և այդ արտադրութեան համար բանուորը օրա-

կան 6 ժամ պէտք է աշխատի, այդ 6 ժամուայ աշխատանքը անհրաժեշտ աշխատանք կարող ենք անուանել։ Օրական 6 ժամ հարկաւոր է աշխատել բանուորին իրան պահելու, իր աշխատաւոր ոյժի արժէքը ստանալու համար։ Եթէ նա օրական 6 ժամից աւելի է աշխատում, այդ դէպքում նրա աշխատանքը 6 ժամից յետոյ յաւելեալ աշխատանք պէտք է անուանել։ Այսպէս ուրեմն, աշխատանքի օրը պարունակում է իր մէջ անհրաժեշտ (աշխատաւոր ոյժի արժէքը) և յաւելեալ աշխատանք։

Մեր չթի գործարանատէրը վարձում է բանուոր և պէտք է վճարէ նրանց՝ իւրաքանչիւր օրուայ աշխատաւոր ոյժի արժէքը, այսինքն նա վճարում է ամեն օր միմիայն անհրաժեշտ աշխատանքի համար (6 ժամ)։ Եթէ բանուորները օրական միայն 6 ժամ աշխատէին, նրանք կ՚արտադրէին այնքան, որքան արժէ նրանց ապրուստը, և կապիտալիստը ոչ մի շահ չէր ստանայ։ Սակայն նա ստիպում է բանուորներին օրական 12 ժամ աշխատել։ Այսպիսով նա ստանում է բանուորներից օրական 6 ժամուայ աւելորդ աշխատանք, այսինքն 6 ժամուայ յաւելեալ աշխատանք, որի համար նա ոչինչ չի վճարում նրանց։ Ամեն օր բանուորները առաջին 6 ժամուայ ընթացքում արտադրում են իրանց աշխատաւոր ոյժի արժէքը (անհրաժեշտ աշխատանք), որ նրանք ստանում են կապիտալիստից աշխատավարձի միջոցով,—իսկ մնացած 6 ժամուայ յաւելեալ աշխատանքի ժամանակ նրանք արտադրում են այն յաւելեալ արժէքը, որի համար ֆաբրիկանտը նրանց մի գրօշ անգամ չի տալիս։ Այդ յաւելեալ արժէքը կապիտալիստի շահն է։

Վերցնենք մի օրինակ։ Ֆաբրիկանտը վճարում է բանուորներին օրական 50 կոպ։ Իւրաքանչիւր բանուոր օրական կարող է 10 արշ. չիթ գործել, որի արշինը ծախսում է 20-ական կոպէկով։ Ընդունենք, որ մի արշին չթի համար 5 կոպէկի թել է գնում, և որ մեքենաների. շինութեան և այլն ծախսը ամեն մի արշինի վրայ 5 կոպէկ է գնում,—այնպէս որ մի արշին չթի ամբողջ նիւթը (մատերիալ) գործարանատիրոջ համար արժէ 10 կոպ։ Բանուորը սկսեց աշխատել և աշխատեց կէս օր (6 ժամ), և այդ ժամանակուայ մէջ 5 արշ. չիթ գործեց։ Ո՞րպիսի արժէք նա արտադրեց. 5 արշ. չիթ 20-ական

կոպէկով արժէ մի ռուբլի։ Բայց ֆաբրիկանտի վրայ նստել է ամեն մի արշինի նիւթը 10-ական կոպ., իսկ 5 արշ,—50 կոպ։ Ուրեմն կէս օրուայ մէջ բանուորը արտադրնց 50 կոպէկի ժաքուր արժէք։ Այդ հէնց նոյնքան է, որքան նա ստանում է կապիտալիստից իր՝ ամբողջ օրուայ աշխատաւոր ոյժի համար։ Բանուորի աշխատած 6 ժամը նրա համար անհրաժեշտ աշխատանք է։ Նրա արտադրած 50 կոպէկը նրա համար անհրաժեշտ արժէք է։ Եթէ բանուորը 6 ժամից յետոյ գործաթող անէր, ֆաբրիկանտը՝ ոչ մի շահ չէր ստանայ։ Նա ծախսել էր մի ռուբլի (50 կոպ.՝ բանուորներին, 50 կոպ. նիւթ 5 արշինի համար) և կըստանար մի ռուբլի։ Բայց բանուորը 6 ժամ էլի է աշխատում,—այդ նրա յաւելեալ աշխատանքն է, և արտադրում է կրկին 5 արշ. չիթ։ Ո՞րպիսի արժէք նա այժմ արտադրեց. 5 արշ. չիթը 20-ական կոպ. արժէ մի ռուբլի։ Դուրս գալով նիւթի համար ծախսուած 50 կոպ., կը մնայ մաքուր 50 կոպ։ Իր յաւելեալ աշխատանքով բանուորը արտադրեց 50 կոպէկի յաւելեալ արժէք, որը ընկնում է ուղղակի ֆաբրիկանտի ջեբը։ Այդ է հէնց շահը։

Ուրեմն, մեր ֆաբրիկանտը ստանում է օրական իւրաքանչիւր բանուորից 50 կոպէկի յաւելեալ արժէք կամ շահ։ Այժմ մեզ համար հասկանալի է, թէ ինչո՞ւ են լաց լինում կապիտալիստները, երբ «աշխատաւոր ձեռքեր» քիչ ունեն։ «Աշխատաւոր ձեռքեր» նրանց պէտք են յաւելեալ արժէք քաշելու համար։ Յաւելեալ արժէքի մեծութիւնը կախուած է՝ նախ՝ կապիտալիստի համար աշխատող բանուորների քանակից. երկրորդ՝ աշխատաւոր օրուայ երկարութիւնից, և երրորդ՝ աշխատանքի արդիւնաւէտութիւնից։ Որքան աւելորդ զբաղուած «ձեռքեր» ունի կապիտալիստը, այնքան աւելի մեծ է յաւելեալ աշխատանքը, այնքան աւելի մեծ յաւելեալ արժէք կը ստանայ կապիտալիստը։ Եթէ մեր ֆաբրիկանտը մի կերպ կարողացաւ ստիպել բանուորներին աշխատել օրական ոչ թէ 12 ժամ, այլ ամբողջ 18 ժամ, այն ժամանակ իւրաքանչիւր բանուոր կը գործէ օրակար 18 արշ. չիթ, տալով ոչ 6 ժամուայ, այլ 12 ժամուայ յաւելեալ աշխատանք, և կապիտալիստը կը ստանայ ոչ թէ 50 կոպ. այլ մի ռուբլու յաւելեալ արժէք։

Որքան աւելի արդիւնաւէտ է բանուորի աշխատանքը, այնքան քիչ կը լինի նրա աշխատանքը իր համար, այսինքն անհրաժեշտ աշխատանքը, և այնքան աւելի մեծ կը լինի նրա աշխատանքը կապիտալիստի համար, այսինքն յաւելեալ աշխատանքը և յաւելեալ արժէքի արտադրութիւնը: Մեր ֆաբրիկանտի մօտ բանուորը ստանում է օրական 50 կոպ. և գործում է 10 արշ. չիթ. ուրեմն, ամեն մի արշինի համար նրան 5 կոպ. է գալիս: Ֆաբրիկանտը ծախում է չիթի արշինը 20-ական կոպ: Այս գումարից 10 կոպ. պէտք է դուրս գալ նիւթի համար: Մնում է 10 կոպ. ֆաբրիկանտի և բանուորի բաժինը. 5 կոպ. ստանում է բանուորը (աշխատավարձ մի արշինի համար), իսկ 5 կոպ.՝ կապիտալիստը (նրա շահը): Այսինքն ապրանքի մաքուր արժէքը (առանց նիւթի) բաղկացած է աշխատավարձից և կապիտալիստի շահից:

Սրանից կարելի է հետևցնել, թէ որքան աւելի մեծ է աշխատավարձը, այնքան աւելի քիչ է շահը, և ընդհակառակը: Եթէ աշխատավարձը բարձրանար մինչև 70 կոպ. օրական, կապիտալիստի շահը կընկներ մինչև 30 կոպ. մի արշին չիթի մաքուր արժէքից բանուորը կըստանար 7 կոպ. իսկ կապիտալիստը՝ 3 կոպ. Սրանից պարզ երևում է, որ կապիտալիստի և բանուորի միջև շարունակ պիտի տեղի ունենայ անընդհատ կռիւ: Կապիտալիստը ամեն կերպ ձգտում է երկարացնել աշխատանքի օրը և պակասեցնել աշխատավարձը, իսկ բանուորը՝ կարճացնել աշխատանքի օրը և աւելացնել աշխատավարձը:

Յետոյ մենք կըտեսնենք, ինչ առաւելութիւններ ունի կապիտալիստը բանուորի հետ ունեցած իր այդ կռիւի մէջ, առաւելութիւններ, որոնք շղթայում — կաշկանդում են բանուորի ձեռքն ու ոտքը և դցում կապիտալիստի իշխանութեան տակ: Բիչ առաջ մենք ասացինք, թէ որքան աւելանում է աշխատավարձը, նոյնքան էլ պակասում է ֆաբրիկանտի շահը: Բայց գուցէ նա կարող է կորցրածը յետ բերել, եթէ բարձրացնէ ապրանքի գինը և ծախէ, դիցուք, չիթի արշինը 22 կոպէկով: Ո՛չ, կապիտալիստի առաջ սահման է դրուած: Եթէ նա ուզենայ իր չիթի գինը բարձրացնել, այդ դէպքում ուրիշ ֆաբրիկանտների մրցումը թոյլ չի տայ նրան այդ անելու: Սրանք կը ծախեն

չիթը 20-ական կոպէկով, իսկ մեր ֆաբրիկանտը պէտք է բաւականանայ այն շահով, որ մնում է նրան ապրանքի մաքուր արժէքից, դուրս եկած աշխատավարձը և այլ ծախսերը:

Այժմ մենք տեսնում ենք, որ ֆաբրիկանտը իր շահը ստանում է ոչ իր ապրանքի վաճառքից: Շահը արտադրւում է վաճառքից առաջ, շուկայից դուրս առաջանում է բանուորի յաւելեալ աշխատանքը յաւելեալ արժէքի ձևով: Սակայն միայն ապրանքը ծախելու ժամանակ է երևան գալիս կապիտալիստի շահը: Միայն այժմ է յայտնւում այն, որ ֆաբրիկանտը իր ապրանքների միջոցով վաճառում է բանուորների՝ որոշ ժամանակամիջոցում գործադրած աշխատանքը. իսկ բանուորներին նա վճարեց ոչ թէ այն ամբողջ աշխատանքի համար, որ նա ստացաւ նրանցից, այլ միայն այնքան աշխատանքի համար, որ անհրաժեշտ է նրա ապրուստի համար, այսինքն աշխատաւոր ոյժի արժէքը:

«Աշխատաւոր ձեռքերից» յաւելեալ արժէք դուրս կորզելու այս դէպքը, որ մենք քննեցինք վերևում, ամենախիստ և ամենապարզ ձևն է այն շահագործման, որ կապիտալիստները կատարում են բանուորների վերաբերմամբ: Եւ իրաւ, ինչ կարող է սրանից աւելի պարզ լինել. մի կողմից—կապիտալիստը, որի տրամադրութեան տակ են գտնւում արդիւնաբերութեան բոլոր միջոցները: Հասկանալի է, որ դաժան անհրաժեշտութիւնը դցում է բանուորին կապիտալիստի ճանկը, կապիտալիստի, որը քամում է նրանից, ինչ որ կարելի է: Որքան էլ դաժան, անարդար լինէր իրերի այսպիսի դրութիւնը, իրողութիւնը սակայն այն է, որ նրա ժամանակ կապիտալը ներգործական և ուղղակի դեր է կատարում արդիւնաբերութեան մէջ. կապիտալի օգնութեամբ են գործարաններ շինւում, մեքենաներ գնւում, հում նիւթ է պատրաստւում, բաժանւում է աշխատանքը, ապրանքները ծախելու համար շուկայ է փնտռւում,— և կապիտալն է, որ ձգտում է աւելացնել աշխատանքի արդիւնաւէտութիւնը. Որքան որ կապիտալի տէրը ուղղակի կերպով մասնակցում է արդիւնաբերութեան մէջ, այնքան էլ նա, ինչպէս և բանուորը, իրաւունք ունի ընդհանուր աշխատանքով արտադրած աշխատանքից բաժին ստանալու: Սակայն ցաւն

այն է, որ շնորհիւ իր դիրքին կապիտալիստը կարող է վերցնել իր համար առւեծի բաժինը։

Բայց կան կապիտալիստի՝ բանուորներին շահագործելու այնպիսի ձևեր, երբ ինքը կապիտալիստը ոչինչ առնչութիւն չունի դէպի արտադրութեան պրոցէսը, որը սակայն ամենևին չի խանգարում նրան ստանալ բանուորների աշխատանքով արտադրած յաւելեալ արժէքը։

Ինչպէս վերևում ասացինք, Ռուսաստանում կան ամբողջ գիւղեր, որոնք տնայնագործութեամբ են պարապում։ Տնայնագործները մանր արհեստաւորներ են՝ փականագործներ, կօշկակարներ և այլն, որոնք աշխատում են իրանց տանը, ունեն իրանց գործի համար անհրաժեշտ գործիքները, բայց մեծ մասամբ միջոցներ չունեն հում նիւթ՝ երկաթ, կաշի և այլն ձեռք բերելու, հում նիւթ, որից նրանք իրանց արդիւնքներն են արտադրում։ Այստեղ հէնց երևան է գալիս կապիտալիստը 'ի դէմս քաղաքային վաճառականի կամ գիւղական վաշխառուի։ Նա ասում է չարաբաստիկ տնայնագործին. «Դու ունես աշխատելու գործիքներ, բայց չունես հում նիւթ, որից կարողանայիր բան շինել։ Ես քեզ կըտամ հում նիւթ գնելու համար փող, բայց դրա փոխարէն, ինչ ուզում ես արա, միայն ապրանքդ ձեռնտու գնով ինձ տուր»։ Դառն փորձից գիտէ տնայնագործը, թէ ինչ է նշանակում «ձեռնտու» գինը։ Սա լաւ գիտէ, որ իր ապրանքի համար նա կըստանայ միքիչ աւել, քան արժէ հում նիւթը. բայց ինչ արած. ճարահատեալ նա վերցնում է վաճառականից փողը, գնում է հում նիւթը և առ ժամանակ կարծես դառնում է ինքնուրոյն—արտադրող։ Սակայն այդ բաղդի դառն հեգնանքն է միայն. երբ նա իր ապրանքը կըշինէ-վերջացնէ և կըտանի վաճառականի մօտ, որին նա պարտք է,—դուրս կըգայ, որ նրա եկամուտը ոչնչով էլ աւել չի լինի (եթէ ոչ պակաս) առաջին պատահած գործարանական բանուորից, որը ոչինչ չունի բացի իր «ձեռքերը»։

Մեր վաճառականը արտադրութեան պրոցէսին բոլորովին չէր մասնակցում։ Նրա ինչ գործն է, թէ ինչ գործիքներով է բանում տնայնագործը և որքան ժամանակ է կորցնում փականագործը մի կողպէք շինելու համար, կամ որքան ժամանակուայ

ԳՐԱԴԱՐԱՆ

ընթացքում է կօշկակարը մի զոյգ կօշիկներ կարում։ Նա կարիք չունի գլուխ կոտրելու արդիւնաբերութիւնը կատարելագործելու և աշխատանքը աւելի արդիւնաւէտ դարձնելու համար։ Նա գիտէ, որ իր բաժինը կըստանայ։ Եթէ գործարանական մրցման շնորհիւ կողպէքների գինը իջաւ, նա աւելի կը սղմէ տնայնագործին և նրանից կըքամէ ոչ միայն նրա աշխատանքով արտադրած յաւելեալ արժէքը, այլ և անհրաժեշտ արժէքի մի մասը։

Ինչ դրութեան մէջ որ է տնայնագործը վաճառականի վերաբերմամբ, ճիշտ նոյն վիճակի մէջ է և գիւղացի-երկրագործը կալուածատիրոջ վերաբերմամբ։ Մենք արդէն առաջ յիշատակեցինք, որ գիւղացիների՝ դարերից ի վեր մշակած հողը կալուածատիրոջ սեփականութիւն դառաւ, և որ ճորտութիւնը վերջանալուց յետոյ գիւղացիներին տուին այնպիսի հողաբաժիններ, որոնք բաւական չէին նրանց ընտանիքների ապրուստի համար։ Այդ բանը արին այն նպատակով, որպէս զի գիւղացիները ստիպուած լինեն կալուածատէրերի հողով օգտուել, և օգտուել, ի հարկէ, ոչ ձրիաբար։

Կալուածատէրը տալիս է հողը գիւղացուն կամ կապալով կամ բերքի մի մասի փոխարէն։ Գիւղացին վարում է հողը իր գութանով, իր անասուններով, ցանում է իր հացահատիկները, պարարտացնում է հողը, երբ պէտք է. մի խօսքով՝ կատարում է իր պատասխանատուութեամբ այն բոլոր գործողութիւնները, որոնցից է կախուած հացի արտադրութիւնը։ Կալուածատէրը ամենևին չի խառնւում այդ արտադրութեան մէջ. բայց նրա գործն է աշխատավարձի կամ բերքի մի մասի միջոցով ստանալ երկրագործի արտադրած յաւելեալ արժէքը։

Մեր ասածից պարզ է, որ կապիտալը դուրս է քաշում արտադրողից յաւելեալ արժէքը ոչ միայն այն ժամանակ, երբ վերջինս արդէն զրկուել է արդիւնաբերութեան միջոցներից և «աշխատաւոր ձեռքեր» դառել, այլ և այն ժամանակ, երբ արտադրողը կիսախինքնուրոյն տիրոջ դրութեան մէջ է գտնւում։ Այն կապիտալիստը, որը բանեցնում է «աշխատաւոր ձեռքերը», ինքը պէտք է կարգի բերէ արդիւնաբերութիւնը և աշխատի նրա յաջողութեան ու կատարելագործման համար։ Ճիշդ

է, որ այդ դէպքում նա աչքի առաջ ունի իր սեփական շահը, և անաստուածօրէն ճնշում է բանուորին. սակայն այնուամենայնիւ իր կամքի հակառակ նա օգուտ է բերում հասարակութեան նրանով, որ անհրաժեշտութիւնից ստիպուած նա շարունակ բարելաւում է արդիւնաբերութեան ձևերը և դրանով աւելացնում աշխատանքի արդիւնաւէտութիւնը. բացի դրանից նա սովորեցնում է բանուորներին ընդհանուր բարդ աշխատանքի—հասարակական արդիւնաբերութեան: Իսկ երբ կապիտալիստը քամում է կիսաինքնուրոյն արտադրողներից նրանց վերջին հիւթերը, արդիւնաբերութեան պրոցէսի մէջ «անգործ-մեղուի» դերը կատարելով,—այդ արդէն ոչ այլ ինչ է, եթէ ոչ հասարակական-կազմակերպուած մի աւազակութիւն, որ ոչնչով արդարացնել չի կարելի:

Ինչ ձևով էլ որ դուրս քաշուի բանուոր դասակարգից յաւելեալ արժէքը, նա միակ աղբիւրն է կապիտալիստական ձեռնարկութիւնների տուած շահի: Իւրաքանչիւր ձեռնարկութեան մէջ կապիտալիստի ստացած շահի չափը ուղղակի կախուած է այն բանուորների քանակից, որոնք զբաղուած են ապրանքների արտադրութեամբ. — որքան աւելի շատ են բանուորները, այնքան աւելի յաւելեալ աշխատանք է նա ստանում, այնքան աւելի մեծ է նրա շահը:

Երևակայենք մի այսպիսի դէպք: Մի վաճառականի երկու որդիները ստացան ժառանգութիւն — իւրաքանչիւրը 10,000 ռուբլի: Սիրելի եղբայրները մի բանում համաձայն էին իրար հետ, նրանում, որ կապիտալը անհրաժեշտ է շրջանառութեան մէջ պահել և բազմապատկել, մինչդեռ նրանց ճաշակները տարբեր էին: Մէկը խաղաղ բնաւորութեան տէր մարդ էր և հնութեան պինդ կպած. իսկ միւսը նորասէր ու հանդգնոտ և մտածում էր միայն այն բանի մասին, թէ ինչպէս մի նոր, ձեռնտու գործ սկսէ... Ահա առաջինը ձեռք բերեց խոշոր կաշեգործարան, որի վրայ էր վաղուց նրա աչքը, և որի մէջ ամեն ինչ կատարւում էր ըստ պապենական սովորութեան—մեքենաներ չկային, շինութիւնները այնքան էլ մեծ չէին, այնպէս որ կարելի էր ամեն ինչ էժան գնով կարգի դցել: Ճիշտ է, գործը այնպիսիներից էր, որ շատ բանուորների՝ ամբողջ 50 հոգու

կարիք կար, բայց մեր հնասէրը դրանից չըվախեցաւ,—նա արդէն եղել էր գործի մէջ և գիտէր, որ դժուար բան չէ կապիտալ եղած տեղը «բանուորից չուաններ գործելը»: Եւ այսպէս իր ամբողջ 10000 ռ. նա գործադրեց:

Միւս եղբայրը, իմանալով, որ Ամերիկայում կօշիկներ կարելու մեքենայ են հնարել, ասաց ինքն իրան. «լաւ կըլինի, եթէ ես մեղանում կօշիկների մեքենական մանուֆակտուրայ բաց անեմ»: Այդպէս էլ արաւ: Նա բերել տուեց արտասահմանից հարկաւոր մեքենաները, կառուցեց յարմարաւոր շինութիւն, գնեց կաշի, վարձեց բանուորներ և սկսեց կօշիկներ արդիւնաբերել: Իր եղբօր նման նա գործի մէջ դրեց իր ամբողջ 10,000-ը. բայց քանի որ նա մեքենաներ ունէր, նրան 30 բանուորն էլ բաւական էր: Երկու եղբայրների գործն էլ լաւ գընաց, և նրանց փողը սկսեց փող ծնել: Այսպէս ուրեմն երկու եղբայրներն էլ գործի մէջ դրին հաւասար դրամագլուխ — 10,000 ռ.: Բայց մէկի արդիւնաբերութիւնը այնպէս է, որ այդ դրամագլխով 50 հոգի կարելի է պահել, իսկ միւսը գործադրում է միմիայն 30 հոգի: Սրանցից ո՞րը աւելի կըշահուի:

Որովհետև մենք գիտենք, որ յաւելեալ արժէքի և ուրեմն շահի չափը մեծանում է բանուորների քանակի հետ,—ըստ երևոյթին դուրս է գալիս, որ կաշեգործը աւելի կըշահուի, քան «կօշիկների մեքենական մանուֆակտուրայի» տէրը, որովհետև առաջինը ունի 50 բանուոր, մինչդեռ վերջինը 30: Այդպէս էլ իրօք պէտք է լինէր, եթէ գործի մէջ չըխառնուէր մեզ արդէն ծանօթ տնտեսական երևոյթը, որի անունն է մրցում:

Եթէ իրաւ կաշեգործը աւելի շահ ստանար, քան նրա եռանդոտ ու նորասէր եղբայրը, յամենայն դէպս հազիւ թէ նա երկար կարողանար օգտուել իր դրութիւնից: Ինչու: Այն պատճառով, որ լաւ շահի սիրահարներ շատ կան, և քիչ չեն գտնուի այնպիսի կապիտալիստներ, որոնք կաշեգործութեան վրայ կըծանրանան այն յուսով, որ այստեղ կարելի է աւելի շահուել քան մի ուրիշ գործում: Վերջիվերջոյ դուրս կըգայ, որ կաշի արտադրուած է սաստիկ շատ, առաջարկը կուժեղանայ, վաճառողների միջև մրցում տեղի կունենայ, կաշուի վաճառանոցային գինը կընկնի նրա իսկական արժէքից ցածր, և կաշե-

գործի շահը կըպակասի,—յաւելեալ արժէքի մի մասը, որ նա քաշել էր բանուորներից, նրա ձեռքից կերթայ, Այդ կը շարունակուի մինչև այն ժամանակ, երբ կաշեգործութեան տուած շահը կըհաւասարուի «կօշիկների մեքենական մանուֆակտուրայի» տուած շահի հետ, կամ մի ուրիշ գործի, որի մէջ հաւասար դրամագլխով համեմատաբար աւելի քիչ բանուորներ են զբաղուած և համեմատարար աւելի շատ է ծախսուած մեքենաների, շինութիւնների և այլոց վրայ։ Եթէ կաշուի գինը ընկնի աւելի ցածր, այն ժամանակ կաշեգործների մի մասը կըթողնէ այդ արդիւնաբերութիւնը և կըզբաղուի այնպիսի գործով, որ նրան կըտայ դէթ այնքան, որքան տալիս է «կօշիկների մեքենական մանուֆակտուրան»։ Արտադրութեան պակասելուց կըբարձրանայ կաշուի վաճառականոցային գինը, և մեր խաղաղասէր-կաշեգործը նորից կըսկսէ աւելի շահ ստանալ, բայց ոչ աւելի, քան նրա խորամանկ եղբայրը, որովհետև մըրցումը ուշի-ուշով հետևում է նրան և գնում սահման եթէ ոչ նրա նախանձոտ աչքերին, գէթ նրա ագահ ձեռներին։

Այսպիսով մրցումը հաւասարեցնում է շահը կապիտալիստական արդիւնաբերութեան բոլոր ճիւղերում։ Այդ բանը առաջանում է նրանից, որ այն ճիւղերում, որոնք ըստ իրանց էութեան կարող էին շատ աւելի շահ տալ քան միւսները, կապիտալիստները դրուած են իրանց համար դառն անհրաժեշտութեան տակ, ստիպուած են ծախել իրանց ապրանքները վերջիններիս իսկական արժէքից ցածր և դրանով ձեռքից թողնել շահի մի մասը, որպէս զի կարողանան ստանալ միւս մասը։

Իսկ մի՞թէ վարձատրւում է երբ և է աշխատաւոր ժողովրդի ամբողջ աշխատանքը։ Ի՞նչ է ստանում նա պետութիւնից իր վճարած տուրքերի և հարկերի փոխարէն։ Այդ փողերի մեծ մասը գնում է իշխանաւորների ապրուստի համար։ Այդ փողերի միւս մասը ծախսւում է զօրքի վրայ, որի համար աշխատաւորի ընտանիքներից խլում են ամենաուժեղ և ամենաառողջ երիտասարդներին, այդ ընտանիքների նեցուկներին։ Պակաս փող չէ գնում զանազան սնանկացած կալուածատէրերին և ագահ ֆաբրիկանտներին օգնելու համար։ Եւ միայն ինչ-որ ողորմելի փշրանքներ՝ սովեալների հոգատարութեան համար, էժանագին

տարրական դպրոցներ, բժշկական օգնութիւն և այլն միայն դառնում են բանուոր մարդու բաժինը. բաւական չէ, որ կալուածատէրը և ֆաբրիկանտը բանուորից դուրս են քաշում առանձին-առանձին նրա յաւելեալ աշխատանքը, նրանք բոլորը միասին պետութեան օգնութեամբ դուրս են քաշում նոյն յաւելեալ աշխատանքը միայն ընդհանուր ոյժերով։

Ձրի աշխատանքը, յաւելեալ արժէքը ամեն ձևով—ահա բոլոր հարուստ դասակարգերի բարօրութեան հիմքը։ Այժմ կարելի է ոչինչ չ'անել, եթէ միայն փող ունես.—բաւական է փողերդ գանձարանը դնես, և հանգիստ կերպով կը ստանաս տոկոսները։ Փողը փող է ծնում։ Սակայն այդ ի՞նչ հրաշագործ ծնունդ է և ո՞վ է մանկաբարձուհին այդ ծնունդի ժամանակ։ Պարզ է, որ նոյն վաճառականը, նոյն ֆաբրիկանտը, նոյն կալուածատէրը, որ բանուորից քաշում է յաւելեալ արժէքը, նրանք կարող են նրանից ձրի աշխատանք քաշել միայն այն պատճառով, որ մերկ ձեռքերով ոչինչ չի կարելի անել—պէտք է հող, նիւթեր, գործիքներ, մեքենաներ, իսկ այդ բոլորը ձեռք բերելու համար հարկաւոր է փող։ Բաւական է ճարպիկ մարդու ձեռքը փող ընկաւ, և նա իսկոյն և եթ կը սկսի քաշել բանուորից ձրի աշխատանք։ Բայց կան անշնորհք մարդիկ, որոնք չգիտեն. ի՞նչ անեն իրանց ունեցած փողի հետ։ Նրանց համար է, որ ստեղծուած են զանազան բանկեր և խնայողական գանձարաններ։ Թափեցէք այստեղ ձեր փողերը, անշնորհք և ծոյլ պարոններ. ճարպիկ ու գործունեայ մարդիկ կը վերցնեն ձեր փողերը և գործի մէջ կըդնեն, իսկ ստացած շահը կը բաժանուի. մի մասը կը տան դրամատիրոջը, միւս բանկի տիրոջը. և մնացածով կ'օգտուի այս կամ այն գործարանատէրը։

Եւ այսպէս բանուոր մարդկանց մէջքի վրայ բարձրանում ջն- զանազան աղանների մի ամբողջ սանդուխք—կապալառուներ վաշխառուներ, վաճառականներ, կալուածատէրեր, գործարանատէրեր, ֆաբրիկանտներ, բանկիրներ և զանազան «կապիտալով ապրող» երկոտանիներ.....—նրանք բոլորը կազմում են կեղեքողների, ուրիշի աշխատանքի գողերի մի վիթխարի դա-

սակարգ, իսկ նրանց դէմուդէմ կանգնած է աշխատաւորների անհամեմատ աւելի վիթխարի դասակարգը։

VII

ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Իւրաքանչիւր մարդ, որին մի առանձին «աստուածային ողորմածութիւն» հնարաւորութիւն չի տալիս ապրել ուրիշի աշխատանքով, դրուած է անախորժ անհրաժեշտութեան մէջ՝ ինքն իր համար ապրուստի միջոցներ հայթայթելու։ Իսկ դրա համար նա պէտք է աշխատի։ Ի՞նչ է նշանակում աշխատել։ Աշխատել—նշանակում է գործադրել իր աշխատաւոր ոյժը բնութեան առարկաների վրայ՝ նրանցից օգտակար բաներ դուրս բերելու համար։ Երկրագործը իր ոյժը գործադրում է հողի վրայ և վերջիվերջոյ ստանում է նրանից օգտակար բան—հաց. հանքահանը փորում է գետինը և դուրս է բերում նրա միջից օգտակար բաներ—պղինձ, արծաթ և այլն։ Սրանից պարզ երևում է, որ մարդը իրան ապրուստի միջոցներ հայթայթելու համար պէտք է ունենայ նախ և առաջ աշխատաւոր ոյժ, և երկրորդ՝ բնութեան այն առարկաները, որոնց վրայ նա պէտք է գործադրէ իր ոյժերը, այսինքն արդիւնաբերութեան միջոցներ։ Հին ժամանակներում հէնց այդպէս էր. և ով որ աշխատաւոր ոյժ ունէր, նա ունէր, և արդիւնաբերութեան միջոցներ։ Սակայն այդ ժամանակից ի վեր մարդկութիւնը ուրիշ կարգերի է հասել։ Մենք արդէն տեսանք, թէ ինչպէս էր անցնում արտադրողը իր փշոտ ճանապարհը, ինչպէ՞ս նա իր կրած տառապանքների հետ կորցրեց արդիւնաբերութեան միջոցները։

Առաջ արտադրողը և արդիւնաբերութեան միջոցները մի ամբողջութիւն էին կազմում, ինչպէս մի ամբողջութիւն են կազմում ձուկը և ջուրը, որի մէջ նա ապրում է։ Իսկ այժմ արտադրողը երկու մասի է բաժանուած,—նրան թողել են նրա

աշխատաւոր ոյժը (գուցէ միայն այն պատճառով, որ նրանից չի կարելի այդ ոյժը դուրս քաշել), իսկ արդիւնաբերութեան միջոցները կապիտալիստների ձեռքը ընկան։ Աշխատաւոր ոյժը որքան էլ նա մեծ լինի, չի կարող ապրուստի միջոցներ ստեղծել դատարկ տեղից։—Նրան հարկաւոր են արդիւնաբերութեան միջոցներ, իսկ սովը ստիպում է նրան անդիմադրելի կերպով փնտրել նրանց։ Այստեղ հէնց կապիտալիստը իր թակարդի մէջն է գցում նրան, թշուառականին, և ստիպում աշխատել իր համար։

Նախորդ գլխում մենք տեսանք, թէ ի՞նչպէս կապիտալիստը քամում է աշխատաւոր ոյժից յաւելեալ արժէքը—իր շահը—տալով բանուորներին աշխատաւոր ոյժի միմիայն անհրաժեշտ արժէքը։ Այժմ մօտկից տեսնենք այս անհրաժեշտ արժէքը, որ բանուորները ստանում են աշխատավարձ անուան տակ։

Բանուորը դուրս է բերում շուկայ իր աշխատաւոր ոյժը, որտեղ գնում է նրան կապիտալիստը։ Շուկայում աշխատաւոր ոյժը հաշւում է ապրանք, ուստի և նրա արժէքը որոշւում նոյնպէս, ինչպէս և միւս բոլոր ապրանքների արժէքը։

Մենք արդէն տեսանք, որ աշխատաւոր ոյժի արժէքը որոշւում է աշխատանքի այն քանակով, որ հարկաւոր է նրա արտադրութեան համար, այսինքն ապրուստի միջոցների այն քանակով, որ անհրաժեշտ է բանուորի և նրա ընտանիքի համար։ Այդ միջոցների արժէքը կամ այսպէս անուանուած անհրաժեշտ արժէքը բանուորները ստանում են աշխատավարձ անուան տակ։ Որքան աւելի քիչ է բանուորի ապրուստի միջոցների արժէքը, այնքան աւելի փոքր է նրա աշխատավարձը, և ընդհակառակը։ Հետևապէս, աշխատավարձի աւելանալը դեռ բոլորովին չի ապացուցում, որ բանուորի վիճակը բարւոքուեց։ Պէտք է ի նկատի ունենալ ապրուստի միջոցների արժէքը և ըստ այնմ դատել։ Եթէ, զօրօրինակ, 15 տարուայ ընթացքում աշխատավարձը 2 անգամ աւելացաւ, բայց ապրուստի միջոցները առաջուանից 4 անգամ աւելի թանկացան, այդ դէպքում բանուորների դրութիւնը ի հարկէ աւելի վատացած կըլինի, թէև ըստ երևոյթին աշխատավարձը աւելացել է։

Ապրուստի միջոցների քանակը կամ բանուորների ստա-

ցած աշխատավարձի չափը կախուած է նրանց սովորութիւն-
ներից, կլիմայից, որի մէջ նրանք ապրում են։ Անգլիական
ճանուորը առանց մսի և սուրճի չի կարող եօլա գնալ և խը-
ժում է շատ գարեջուր։ Նա այնքան է ընտելացել նրանց, որ
այդ արդիւնքները անհրաժեշտ են դարձել նրա գոյութեան
համար և առանց նրանց նա լաւ չի կարող աշխատել։ Այնպէս
որ անգլիական բանուորի աշխատավարձը, ի միջի այլոց։
պէտք է պարունակէ իր մէջ և այդ արդիւնքների արժէքը,
արդիւնքների, որոնց մասին մեր ռուս բանուորը միայն լսած
կը լինի։

Մեր բանուորի աշխատավարձը տալիս է նրան հնարա-
ւորութիւն կերակրուել կերակրով, հացով, կվասով, թթու կա-
ղամբով և բողկով։ Անգլիական բանուորները կապիտալիստնե-
րին ջարդ ու փշուր կանէին նրանց գործարանների հետ, եթէ
նրանց աշխատավարձը հերիք անէր միայն այդպիսի կերակրի
համար, որով փրկութիւն էին փնտրում սուրբ ճգնաւորները...
Իսկ մերոնք բաւականանում են դրանով։

Որքան աւելի կրթուած ու զարգացած են բանուորները,
այնքան աւելի միջոցներ են հարկաւոր նրանց ժարդավարի
ապրելու և լաւ աշխատելու կարողութիւն ունենալու համար։

Անգլիայի և Գերմանիայի բանուորը երբէք այնպիսի
շնաբների մէջ չի ապրի, ինչպէս մեր բանուորը։ Բացի այդ՝
նրանց պէտք է երբեմն գիրք, նրանք լրագրներ են կարդում,
երբեմն և թատրոն են գնում, նրանց աշխատավարձը պէտք է
բաւի և այդ պահանջների համար։ Այլապէս գործարաններում
շարունակ անկարգութիւններ տեղի կունենան և գործը վատ
կերթայ։

Կլիման նոյնպէս ազդեցութիւն ունի աշխատավարձի վրայ։
Իտալացի բանուորը, որը տաք և բարեբեր կլիմայում է ապ-
րում, կարող է այնպիսի շորով բաւականանալ, որ ծածկում է
միայն նրա մերկութիւնը։ Ինչ վերաբերում է բնակարանին,
եթէ նա կայ,—լաւ, իսկ եթէ՝ ոչ, այդ էլ փոյթ չէ, նա կ՚անց-
կացնի գիշերը օտարի տան դրան առաջ կամ ուղղակի փողո-
ցում։ Իսկ ռուս բանուորին հարկաւոր է «քուրք», ձմեռուայ
հաստ ոտնաժաններ, տաք բնակարան։ Բացի այդ՝ ռուս բանու-

որին պէտք է մի գաւաթ արաղ, որովհետև սաստիկ ցրտերի
ժամանակ և շնորհիւ վատ սնունդի դժուար է եօլա գնալ ա-
ռանց այդ տաքացնող միջոցի։ Իտալացի բանուորի հետ հա-
մեմատած, ռուս բանուորը աւելի մեծ աշխատավարձ է ստա-
նում, բայց դա բոլորովին չի նշանակում, որ վերջինների դրու-
թիւնը աւելի լաւ է, որովհետև նա ստիպուած է այնպիսի ար-
դիւնքների վրայ փող ծախսել, առանց որոնց հեշտութեամբ եօ-
լա կը գնար նա, եթէ ապրէր տաք կլիմայում։

Այսպէս ուրեմն, աշխատավարձը պէտք է այնպիսի մե-
ծութիւն ունենայ, որ կախուած է բանուորների սովորոյթ-
ներից, նրանց մտաւոր զարգացման աստիճանից և այն կլիմայից,
որի մէջ ապրում են նրանք։ Աշխատավարձը սովորական պայ-
մաններում չի կարող երկար ժամանակ այդ մեծութիւնից բար-
ձրը կամ ցածր լինել։ Շուտով մենք կըտեսնենք թէ ինչու։

Մանուֆակտուրային բանուորները միշտ աւելի մեծ աշ-
խատավարձ են ստանում, քան գործարանականները։ Մանու-
ֆակտուրայում բանում են արդիւնաբերութեան միջոցներից
զրկուած արհեստաւորները. նախ քան լաւ արհեստաւոր դառ-
նալը, պէտք է աշխատանք գործադրել սովորելու համար։ Սո-
վորելու վրայ գործադրած այդ աշխատանքն է, որ բարձրաց-
նում է արհեստաւորի աշխատաւոր ոյժի արժէքը։ Վերցնենք մի
օրինակ։ Ենթադրենք, որ փականագործը մինչև որ իր արհես-
տը սովորի, պէտք է ծախսէ իր ապրուստի նիւթերի և գործիք-
ների փչացնելու համար և վարպետին վճար—900 ռուբլի։ Մի-
ևնոյն է, ունի՞ արդեօք փականագործը այդ 900 ռուբլին և այդ
փողը ուղղակի ծախսում է, թէ մտնում է որ և է վարպետ փա-
կանագործի մօտ սովորելու։ Այդ դէպքում նա պէտք է աշխա-
տի իր տիրոջ համար մի քանի տարի—կամ մինչև սովորելը
կամ սովորելուց յետոյ։

Մի խօսքով, փականագործի արհեստը սովորելու համար նա
պէտք է 900 ռուբլու արժէքներ ծախսէ—կամ արդիւնքներով
կամ աշխատանքով։ Եթէ իւրաքանչիւր փականագործը սովորե-
լուց յետոյ կարող է միջին թուով 30 տարի աշխատել, նրա-
սովորելու ծախսերը աշխատանքի ամեն մի տարուայ վրայ
կաւելացնեն 30 ռուբլի։ Եթէ սովորական աշխատաւոր ոյժի,

(այսինքն բանուորի և նրա ընտանիքի ապրուստի միջոցների) անհրաժեշտ արժէքը տարեկան 150 ռուբլի է, այդ դէպքում մանուֆակտուրիստը, որ վարձել է արհեստաւորին, պէտք է վճարէ նրան ոչ միայն այդ 150 ռուբլին, այլ այն 30 ռուբլին ևս, որոնք ծախսուել են սովորելու համար և որոնք ընկնում են մի տարուայ աշխատանքի վրայ: Հետևապէս, արհեստաւորի աշխատանքի ոյժի արժէքը պարունակում է իր մէջ ոչ միայն ապրուստի անհրաժեշտ միջոցների արժէքը, այլ և այն միջոցների արժէքը, որոնք ծախսուած են նրա արհեստագիտական ուսման համար:

Որքան մարդ աւելի երկար ժամանակ պէտք ունենայ սովորելու իր արհեստը, այնքան աւելի մեծ է նրա աշխատաւոր ոյժի արժէքը, այնքան աւելի մեծ է նրա աշխատավարձը: Փականագործը աւելի մեծ աշխատավարձ է ստանում, քան դարբինը, ժամագործը՝ աւելի մեծ, քան փականագործը, իսկ այն արհեստաւորը, որը զանազան բարդ գործիքներ՝ հեռադիտակներ, մանրադիտակներ է շինում, ստանում է աւելի մեծ աշխատավարձ:

Աշխատաւոր ոյժի արժէքը քննելուց յետոյ դիմենք այժմ նրա վաճառականոցային գնին: Մենք տեսանք, թէ ինչքան է պէտք բանուորին. այժմ նայենք, թ՞ինչքան է նա իրօք ստանում իր աշխատաւոր ոյժի համար:

4-րդ գլխից մենք արդէն գիտենք, որ ապրանքի վաճառականոցային գինը լինում է մերթ աւելի բարձր, մերթ աւելի ցածր նրա իսկական արժէքից: Երբ պահանջը մեծանում է, մուշտարիների մէջ տեղի է ունենում մրցում, և ապրանքի գինը բարձրանում է. երբ առաջարկն է մեծանում, մրցումը տեղի է ունենում վաճառողների մէջ, և ապրանքի գինը ընկնում է: Իսկ առհասարակ մրցումը ձգտում է ապրանքի վաճառականոցային գինը ժամեցնել նրա իսկական արժէքին: Այդ բոլորը նոյնքան վերաբերում է աշխատաւոր ոյժին, որքան և ամեն մի ապրանքի: Եթէ աշխատաւոր ոյժի պահանջը մեծանում է, դիցուք, շնորհիւ նոր կապիտալիստական ձեռնարկութիւնների երևան գալուն, այդ ժամանակ տեղի է ունենում մրցում մուշտարիների (կապիտալիստների) միջև, և աշխատա-

վարձը բարձրանում է աշխատաւոր ոյժի անհրաժեշտ արժէքից վեր: Մենք գիտենք, որ երբ մեծանում է որ և է ապրանքի պահանջը, մեծանում է շուտով և այդ ապրանքի արդիւնաբերութիւնը և նրա առաջարկը: Սակայն ինչպէ՞ս է մեծանում աշխատաւոր ոյժի արդիւնաբերութիւնը և առաջարկը նրա պահանջը աւելանալուց յետոյ: Ահա թէ ինչպէս:

Երբ բարձրանում է աշխատավարձը անհրաժեշտ արժէքից վեր, այսինքն աւելի բարձր, քան անհրաժեշտ է բանուորին իր գոյութիւնը պահպանելու համար,—բանուորների դրութիւնը լաւանում է: Այդ բարւոքումը արտայայտւում է նրանով, որ բանուորները սկսում են աւելի լաւ սնուել, ապրում են աւելի լաւ բնակարաններում և այլն: Շնորհիւ դրան կարիքը և հիւանդութիւնները աւելի քիչ զոհեր են տանում վաղաժամ գերեզման, քան առաջ: Կենդանի են մնում այնպիսի բանուորներ, որոնք ուրիշ աւելի վատ հանգամանքներում կը մեռնէին, և այդ պատճառով հենց բանուորները ամենից առաջ մեծացնում են աշխատաւոր ոյժի առաջարկը: Բացի այդ՝ շնորհիւ բանուորի դրութեան բարւոքման աւելանում է և նրանց ամուսնութիւնների թիւը և ծնւում են աւելի երեխաներ, քան առաջ:

Երեխայ—դեռահասները, աւելի լաւ հանգամանքներում ապրելով, աւելի քիչ են ենթակայ մահուան, քան եթէ աւելի վատթար պայմաններում ապրէին՝ օրինակ, մեղնում, ուր բանուորի չորս երեխայից հազիւ մէկը հասնում է բանուոր լինելու հասակին. Եւ այսպէս, շնորհիւ աշխատավարձի բարձրանալուն, պակասում է բանուորների և նրանց երեխաների մահացութիւնը, իսկ այդ միևնոյնն է թէ աւելանում է ազգաբնակութիւնը, աւելանում է և ուղղակի, շնորհիւ ամուսնութիւնների թւի մեծանալուն, այսինքն աշխատավարձի՝ անհրաժեշտ արժէքից վեր բարձրանալու հետ աւելանում է աշխատաւոր ոյժի արտադրութիւնը (ազգաբնակութեան անուղղակի և ուղղակի աւելանալը) և նրա առաջարկը: Այդ հանգամանքը իր կողմից յարուցանում է վաճառողների (բանուորների) մրցում, և աշխատավարձը պէտք է ընկնի: Եթէ աշխատավարձը ընկնում է անհրաժեշտ արժէքից ցածր, պէտք է աշխատաւոր

ոյժի առաջարկը պակասի, ինչպէս այդ պատահում է իւրաքանչիւր ապրանքի հետ։ Երբ ապրանքի վաճառանոցային գինը ընկնում է նրա իսկական արժէքից ցածր, այդ ապրանքի արտադրութիւնը կրճատւում է և նրա առաջարկը պակասում է։ Բայց ինչպէս կարելի է կրճատել աշխատաւոր ոյժի արտադրութիւնը և նրա առաջարկը։ Քանի որ իրանք բանուորներն են արտադրում աշխատաւոր ոյժը, վերջինիս արտադրութիւնը կրճատելու համար պէտք է ոչնչացնել աւելորդ բանուորներին...

Իրօք այդպէս էլ լինում է։ Երբ աշխատավարձը անհրաժեշտ արժէքից ցածր է ընկնում (այսինքն աւելի ցածր է, քան պէտք է բանուորի ապրուստի համար), սովը իր օգնական—մահուան հետ տիրում է ամենուրեք։ Աշխատավարձի ընկած դրութեան ժամանակ բանուորները չեն կարող լիովին բաւարարութիւն տալ իրանց պահանջներին,—մնում են քաղցած, ապրում են կեղտոտ և խոնաւ բներում, նրանց շորերը շատ վատ են պաշտպանում նրանց ցրտից ու խոնաւութիւնից։ Ով աւելի թոյլերից է, նա չի կարող երկար տանել այդ դժոխային կեանքը։ Սովը մահ է ուղարկում, և ժահը սկսում է քայլել բանուորների բնակարաններում և կտրել թոյլերի ու փոքրերի կեանքի թելը։ Բացի այդ՝ բանուորների համար այդքան աղէտաբեր ընկած դրութեան ժամանակ պակասում է ամուսնութիւնների և ծնունդների քանակութիւնը։

Եւ այսպէս, աշխատավարձի աւելանալու հետ ազգաբնակութիւնը նոյնպէս աւելանում է անուղղակի—բանուորների երկարակեցնութիւնը աւելացնելով, և ուղղակի—ամուսնութիւնների թիւը մեծացնելով. ընդհակառակը, աշխատաւարձի պակասելու հետ ազգաբնակութիւնը պակասում է ուղղակի՝ «աւելորդ» բանուորների մահուան շնորհիւ, և անուղղակի՝ ամուսնութիւնների թիւի պակասելով։ Այսպիսի միջոցներով պակասում է աշխատաւոր ոյժի արտադրութիւնը (բանուորների դիակները խօս չեն կարող նրանց արտադրել) և նրա առաջարկը։ Իսկ երբ պակասում է առաջարկը, նորից մրցում է տեղի ունենում կապիտալիստների միջև, աշխատավարձը աւելանում է։ Այսպիսով, իրանց բանուորների համար աշխատավարձի բարձրանալը, եթէ միայն նոր ձեռնարկութիւններ չեն բացւում,

կարող է ձեռք բերել միմիայն մահուան և ուրիշ բանուորների սոսկալի տառապանքների գնով։

Այսպիսի զարհուրելի կապանքներում է, որ գտնւում է բանուոր դասակարգը, շնորհիւ այն հանգամանքին, որ աշխատաւոր ոյժը (իսկ նրա հետ և իր՝ բանուորի անձնաւորութիւնը) ապրանք են դարձել։

Ինչպէս որ մրցումը ապրանքների վաճառանոցային գինը հաւասարեցնում է նրանց անհրաժեշտ արժէքի հետ, նոյնպէս և աշխատավարձը մրցման միջոցով հաւասարւում է աշխատաւոր ոյժի իսկական արժէքի հետ։ Եթէ շնորհիւ պահանջի և աշխատավարձի ժամանակաւոր բարձրանալուն ժամանակաւորապէս բարւոքւում է և բանուորների կացութիւնը, սակայն այնուհետև սովը և մահը պատժում են նրանց դաժան կերպով նրանց կարճատև բարօրութեան համար։

Այդ սոսկալի շղթաները գերմանացի սոցիալիստ Լասսալը առաջարկեց նոյնիսկ անուանել աշխատավարձի երկաթէ օրէնք, որը սարսափելի ճնշող ոյժ ունի այն պատճառով, որ բանուորները զրկուած են արդիւնաբերութեան միջոցներից և ստիպուած են ծախել իրանց աշխատաւոր ոյժը, ինչպէս սովորական ապրանք։ Ուստի նրանց մէջ տեղի պէտք է ունենայ մրցում, ինչպէս և ապրանք վաճառողների միջև։ Մի խօսքով, աշխատավարձի երկաթէ օրէնքը և սովի զարհուրելի իշխանութիւնը գոյութիւն ունեն ուղղակի շնորհիւ կապիտալիստական տնտեսութեան ներկայ կարգերին։

Մենք տեսնում ենք սակայն, որ այդ երկաթէ օրէնքը միմիայն այն պատճառով և միմիայն այն ժամանակ է երկաթէ, քանի որ բանուորների միջև տիրում է մրցումը։ Ի հարկէ, եթէ բանուորները բոլորն էլ առանձին են դեգերում և գործում են «ամեն մարդ իր համար, միայն Աստուած բոլորի համար» առացուածքի հիման վրայ,—այդ դէպքում նրանք իրանք անխուսափելի կերպով աշխատավարձը այնքան ցածր են իջեցնում, որ հազիւ հազ մարդ կարող է ցամաք հացով ու կվասով եօլա գնալ։ Եւ մինչև որ բանուորները չըհասկանան, որ մէկը միւսին և բոլորը մէկին պէտք է պաշտպանեն, բանուորները չեն կարողանայ ազատուել այդ տաժանակիր կեանքից. ոչ թէ

միմիանց խանգարել, ոչ թէ միմիանց հրել ու ճնշել, այլ ընդհանուր ոյժերով կռուել ընդհանուր թշնամի—գործատիրոջ դէմ և ստիպել նրան զիջումներ անելու,—ահա թէ ինչ է իւրաքանչիւր աշխատաւորի պարտքը:

Միայն այդ ժամանակ կոչնչանայ հիմնովին կապիտալիստական տնտեսութիւնը, կ'անհետանայ իսպառ մրցումը բանուոր մարդկանց միջև, և ուրեմն կ'անհետանայ «երկաթէ օրէնքի» սպառնալից ուրուականը: Բայց և այժմ բանուորների դրութիւնը անյուսալի չէ: Բանուորական միութիւնները, գործադուլները, ընդհանուր ինտերեսների համերաշխ պաշտպանութեան ամեն տեսակ ձևերը կարող են եթէ ոչ իսպառ վերացնել մրցումը բանուորների միջից, գէթ ընդունակ են բաւականաչափ թուլացնելու նրա ոյժը: Իսկ երբ թուլանում է մրցումը բանուորների մէջ, բարձրանում է և աշխատավարձը:

Հետևապէս, եթէ մի քանի սոցիալիստներ աշխատավարձի օրէնքը անուանում էին «երկաթէ», այդ խօսքերը չը պէտք է վհատեցնեն բանուորներին և զրկեն նրանց արիութիւնից: Թող այդ օրէնքը երկաթէ լինի, բայց երբ բանուոր մարդիկ գործեն համերաշխ, կըստեղծուի մի այնպիսի վիթխարի ոյժ, որի ճնշման տակ կըծռուի և երկաթը: Եւ ոչ միայն կըծռուի, այլ և կը կոտրուի: Մղելով անընդհատ կռիւ տէրերի հետ, բանուորները այժմ էլ կարող են գէթ միքիչ ծռել սովի երկաթէ շղթաները: Բայց կըգայ ժամանակ, երբ բանուոր ժողովուրդը իսպառ կ'ոչնչացնէ այդ շղթաները և ջարդ ու փշրուր կանէ նրանց. իսկ այդ նպատակին հասնելու համար պէտք է վերջ տալ կապիտալիստական տնտեսութեան:

Այժմ մենք քննենք կապիտալիստական տնտեսութիւնը իր ամբողջութեամբ. նայենք թէ ի՞նչ ազդեցութիւն է գործում նա բանուոր դասակարգի վրայ և ի՞նչպիսի դեր է խաղում նա մարդկութեան վիճակի համար...

VIII

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Խօսելով հինգերորդ գլխում մանուֆակտուրայի ծագման մասին, մենք կապիտալիստ անուանեցինք «խելքը գլխին» փականագործին, որը մանուֆակտուրայ բացեց իր մօտ. իսկ նրա մանուֆակտուրան մենք անուանեցինք կապիտալիստական ձեռնարկութիւն: Սակայն որո՞նք են կապիտալիստական ձեռնարկութեան յատկանիշները և ի՞նչ է կապիտալը: Նախ քան աղքատացած փոխանագործներին իր լուծի տակ գցելը, «խելքը գլխին» փականագործը պէտք է ունենայ գործարան, գործիքներ, նիւթեր,—մի խօսքով արդիւնաբերութեան միջոցներ:

Արդիւնաբերութեան այդ միջոցները (նիւթերը և գործիքները) ի հարկէ երկնքից չեն ընկնում, այլ նոյնպէս աշխատանքով են արտադրւում: Վարելահողի համար մաքրած դաշտինը, անասունները, գութանը, գործիքները, ամեն տեսակ շինութիւնները, մի խօսքով այն ամենը, որ հարկաւոր է խելացի աշխատանքի համար, այդ բոլորը մարդկային աշխատանքի արդիւնքներ են: Նախընթաց աշխատանքի այդ արդիւնքները, առանց որոնց անհնար է յետագայ աշխատանքը, գտնւում են մասամբ իրանց արտադրողների ձեռքում, իսկ մասամբ էլ այն անձինքների ձեռքում, որոնք իրանք չեն գործադրում նրանց, այլ ստիպում են ուրիշներին աշխատել այդ արդիւնքների միջոցով:

Եթէ արդիւնաբերութեան միջոցները իրանց արտադրողների ձեռքումն են գտնւում, այդ դէպքում վերջիններս կարող են, եթէ ուզեն, գործադրելով նրանց՝ արտադրել միայն անհրաժեշտ աշխատանք, միմիայն անհրաժեշտ արժէքը, իրանց գոյութիւնը և գործիքները նախկին դրութեան մէջ պահպանելու համար: Այսպէս, օրինակ, երկրագործը կարող է մշակել միայն այնքան հող, որքան հարկաւոր է նրան՝ իր և իր ընտանիքի ապրուստի, գործիքները սարքելու և անասունները կերակրելու համար: Փականագործը նոյնպէս կարող է միայն այնքան աշխատել, որ բաւական լինի նրա և նրա ընտանիքի

ապրուստի ու նրա գործիքները և արհեստանոցը կարգին գը-
լուխեան մէջ պահելու համար։ Մի խօսքով՝ այն արտադրողը,
որը աշխատանքի միջոցներ և նիւթ ունի, կարող է չ'արտա-
դրել յաւելեալ աշխատանք և չստեղծել յաւելեալ արժէք, որով-
հետև նա հնարաւորութիւն ունի առանց նրանց էլ եօլա գնալ։

Բոլորովին այլ բան է, եթէ արդիւնաբերութեան միջոց-
ները պատկանում են այնպիսի մարդկանց, որոնք նրանց չեն
գործադրում, այլ ուրիշի աշխատանքի միջոցով շրջանառու-
թեան մէջ են դցում նրանց։ Արդիւնաբերութեան միջոցների
այդպիսի տէրերը չեն կարող բաւականանալ նրանով, որ
բանուորները միայն անհրաժեշտ աշխատանք գործադրեն և
անհրաժեշտ արժէք արտադրեն, որովհետև այդ դէպքում նրանց
բաժին չի մնայ, և հաշիւ էլ չի լինի գործ սկսել։ Նրանք չեն
կարող եօլա գնալ առանց յաւելեալ աշխատանքի և յաւելեալ
արժէքի, որը նրանց շահն է կազմում և որի համար նրանք
սկսում են որ և է գործ։

Աշխատանքի գործիքների այդպիսի տէրերին կապիտա-
լիստներ են անուանում, իսկ գործիքները՝ կապիտալ. կապիտա-
լիստը ծախսում է կապիտալը, բայց միայն այն դիտաւորու-
թեամբ, որպէս զի կապիտալը վերադառնայ նրա մօտ աւելա-
ցած, այսինքն շահի հետ։

Այսպէս ուրեմն, կապիտալ է մարդկային աշխատանքի
արդիւնքների այն մասը, որի տէրերը դցում են նրան շրջա-
նառութեան մէջ ուրիշի աշխատանքի միջոցով շահ ստանալու
համար։ Եւ որովհետև մարդկային աշխատանքի բոլոր արդիւնք-
ները իրանց արժէքը արտայայտում են փողով, այդ պատճա-
ռով փողն էլ կապիտալ է, եթէ նա շրջանառութեան մէջ է ընկ-
նում շահ բերելու համար։ Կապիտալի այդ ձևակերպութիւնից
երևում է, որ կապիտալիստական տնտեսութիւնը կարող է
սկսուել միայն այն ժամանակ, երբ մարդկային աշխատանքի
արդիւնաւէտութիւնը որոշ աստիճանի է հասել։ Եթէ բանուորը
կարող էիր աշխատանքով միայն անհրաժեշտ արժէքը արտադրել
(այսինքն արտադրել այնքան, որքան պէտք է նրա ապրուստի
համար), այդ դէպքում կապիտալիստը չի կարող յաւելեալ աշ-
խատանք կամ շահ ստանալ։ Բացի այդ՝ կապիտալիստական

ՄԱՏԵՆԱՐԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՈՒՆ ԳՐԱԳԱՐԱՆ

տնտեսութեան համար հարկաւոր են «աշխատաւոր ձեռքեր»,
այսինքն այնպիսի արտադրողներ, որոնք զրկուած են արդիւ-
նաբերութեան միջոցներից, և սովից ստիպուած են իրանց աշ-
խատաւոր ոյժը կապիտալիստներին ծախել։

Կապիտալիստական տնտեսութիւնը դեռ ոչ մի տեղ չէ
վերացրել խսպառ մանր արտադրողների տնտեսութիւնը, և ամե-
նուրեք գոյութիւն ունեն երկու ձևի տնտեսութիւններն էլ կողք
կողքի։ Մեզ մօտ Ռուսաստանում մանր տնտեսութիւնը պահ-
պանուում է աւելի յամառութեամբ, քան ուրիշ երկիրներում։
Զբխսելով արդէն մանր գիւղացու մասին, Ռուսաստանում դեռ
գոյութիւն ունեն հարիւր հազարաւոր տնայնագործներ, այսինքն
արդիւնաբերութեան միջոցներից դեռ ոչ բոլորովին զրկուած
մանր արհեստաւորներ։ Բայց մեզանում կապիտալիստական
տնտեսութիւնը աւելի և աւելի է տարածուում՝ շնորհիւ այն հանգա-
մանքի, որ մեծ չափերով ուքանակութեամբ գիւղացիները հող-
զուրկ են լինում և կալուածատիրոջ համար «աշխատաւոր ձեռքեր»
դառնում։ Երկու խօսք ասենք այդ մասին։ Թէև մանր տնտեսու-
թեան ժամանակ ինքը արտադրողը ստանում է ոչ միայն անհրա-
ժեշտ արժէքը և յաւելեալը, որը այդ կապիտալիստական տնտե-
սութեան մէջ մտնում է կապիտալիստի դրպանը,—այնուամենայ-
նիւ մանր երկրագործ-արտադրողի դրութիւնը ոչնչով էլ լաւ
չէ, որովհետև համարեա նրա բոլոր արտադրածը ծախսուում է
հարկերի, հողաբաժինը յետ գնելու վճարումների և կալուածա-
տիրոջ հողի կապալավարձի համար, հողի, առանց որին նա չի
կարող եօլա գնալ շնորհիւ իր հողաբաժնի փոքրութեան։

Ամենանպաստաւոր պարագաներում արտադրող—երկրա-
գործի ձեռքում մնում է միայն անհրաժեշտ արժէքը, այսինքն
իր ինքնուրոյն տնտեսութիւնից նա ստանում է ոչ աւել, քան
ստանում է հասարակ մշակը կալուածատիրոջ մօտ։ Եթէ մենք
տեսնում ենք, որ գիւղացիները յամառօրէն պահպանում են
իրանց տնտեսութիւնը, դրա պատճառը այն չէ, որ նրանց
մնում է իրանց արտադրած յաւելեալ արժէքի գէթ չնչին մա-
սը, այլ այն, որ նրանց համար խիստ ծանր է զրկուել ազա-
տութիւնից և կապիտալիստի մօտ ընկնել աշխատաւոր անա-
սունի վիճակի մէջ։ Բայց լինում է և այնպէս, որ այդ բոլոր

հարկերն ու վճարումները կլանում են ոչ միայն ամբողջ յաւելեալ արժէքը, որ արտադրում է երկրագործը իր տնտեսութեան մէջ, այլ նոյն իսկ և անհրաժեշտ արժէքի մի մասը։ Ապրուստի միջոցները չեն բաւականացնում արտադրողին, որովհետև խլում են նրա բերանի հացը։ Նա խառնուած հաց է ուտում. բայց այդ դրութիւնը երկար տևել չի կարող։ Եթէ նրա տնտեսութիւնը քայքայւում է՝ նա թողնում է իր հողը և գնում բանելու կալուածատիրոջ մօտ կամ գործարան, որտեղ նա աշխատավարձի միջոցով գէթ անհրաժեշտ արժէք է ստանում։

Շնորհիւ գիւղական հողաբաժնի պակասութեան, շնորհիւ գանձարանին տրուող անագին վճարումներին և հողի կապալի սաստիկ բարձրութեան, գիւղացիները չեն կարող երկար պահպանել իրանց տնտեսութիւնը, որովհետև կառավարութիւնը և կալուածատէրերը նրանցից վերցնում են ոչ միայն յաւելեալ արժէքը, այլ և անհրաժեշտ արժէքի մի մասը։ Սրանք են պատճառները, որ գիւղացիները հողազուրկ են լինում։ Ինչպէս տեսնում էք, հողազուրկ լինելը ամենևին կախուած չէ տնտեսական պատճառներից, ինչպէս օրինակ արհեստաւոր—արտադրողի արդիւնաբերութեան միջոցներից զրկուելը կախուած է նրանցից շնորհիւ մանուֆակտուրայի մրցման։ Մրցումը զուտ տնտեսական երևոյթ է, իսկ մեզանում գիւղացիները զրկւում են հողից առանց որ և է մրցման խոշոր տէրերի կողմից (ընդհակառակը, իրանք գիւղացիք իջեցնում են նրանց մօտ գները, երբ ծախում են չնչին գնով իրանց հացը՝ վճարումներից առաջ), այլ ուղղակի բռնի ոյժի շնորհիւ։

Ինչ վերաբերում է արհեստաւոր—արտադրողներին, որոնք սեփական գործիքներով են աշխատում,—նրանք էլ, ինչպէս ասացինք, կամաց-կամաց զրկւում են իրանց յաւելեալ արժէքից, շնորհիւ մանուֆակտուրայի մրցման. իսկ երբ շնորհիւ նոյն մրցման նրանց ազատ աշխատանքը սկսում է վարձատրուել անհրաժեշտ արժէքից ցածր, այդ ժամանակ նրանք զրկւում են իրանց տնտեսութիւններից և կապիտալիստի համար «աշխատանքի ձեռքեր» դառնում։

Կապիտալիստական տնտեսութիւնը մանուֆակտուրայից

է սկսւում։ Մանուֆակտուրան, ինչպէս մենք ասացինք 5-րդ գլխում, երևան է գալիս քաղաքներում, երբ հասարակութեան մէջ տեղի է ունենում աշխատանքի լայն բաժանումը, այսինքն երբ բանուորի աշխատանքը այնքան արդիւնաւէտ է դառնում, որ ոչ միայն կարող է կերակրել իրան բանուորին, այլ և շահ տալ կապիտալիստին։ Մանուֆակտուրան մի կապիտալիստի իշխանութեան տակ հաւաքում է արդիւնաբերութեան միջոցներից զրկուած արհեստաւորների որոշ քանակութիւն և աշխատանքը դարձնում է աւելի արդիւնաւէտ, քան մանրարհեստ—արդիւնաբերութեան ժամանակ։ Այդ հանգամանքը ծագում է նրանից, որ մանուֆակտուրային արդիւնաբերութեան ժամանակ արհեստանոցի և գործիքների համար աւելի քիչ է ծախսւում, իսկ աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը աւելացնում է աւելի ևս նրա արդիւնաւէտութիւնը։

Աշխատանքի մանուֆակտուրային բաժանման ժամանակ իւրաքանչիւր աշխատաւոր գործում է ամբողջ արդիւնքի միայն մի մասը, մինչդեռ աշխատանքի հասարակական բաժանման դէպքում իւրաքանչիւր մարդ արտադրում է ամբողջ արդիւնքը։

Մենք արդէն գիտենք, թէ ինչ ազդեցութիւն ունի մանուֆակտուրան մանր արհեստաւորների վրայ։ Նայենք այժմ, թէ ինչ է անում նա այն «աշխատաւոր ձեռքերի» հետ, որոնց չար ճակատագիրը նրա զոհն է դարձրել։

Մանուֆակտուրայի գլխաւոր ոյժը աշխատանքի մանուֆակտուրային բաժանման մէջն է։ Գործատիրոջ սուր հայեացքը տեսնում է այդ բաժանման բոլոր առաւելութիւնները և նա աշխատում է մտցնել նրան իր մանուֆակտուրայի մէջ ամենամեծ չափով։ Թէ մինչև որ աստիճանի է հասնում մանուֆակտուրայում աշխատանքի բաժանումը, այդ կարելի է տեսնել նրանից, որ, օրինակ, ասեղների մանուֆակտուրայում իւրաքանչիւր ասեղ 72 բանուորի ձեռքից է անցնում, մինչև որ վերջնականապէս պատրաստ լինի։ Այդ 72 բանուորներից ամեն մէկը կատարում է ամբողջ գործի միայն մի մասը,—մէկը երկաթէ թելն է քաշում, միւսը գլուխներն է ծակում, երրորդը ծայրերն է սրում և այլն։ Իւրաքանչիւր բանուոր իր մասնակի աշխատանքի «սամթն է առնում» և կատարում է

նրան աւելի արագ ու լաւ, քան եթէ նա ստիպուած լինէր ամբողջ ասեղը պատրաստել։ Մանուֆակտուրայի այդ 72 բանուորը միասին նոյն ժամանակի ընթացքում շատ աւելի ասեղներ կարտադրեն, քան 72 ինքնուրոյն արհեստաւորներ։ Սակայն արդիւնքի ամբողջ արդիւնաբերութեան յարմարումը արդիւնքի մի չնչին մասին՝ թանկ է նստում բանուորի վրայ։ Մտնելով մանուֆակտուրայի մէջ, արհեստաւորը, որը գիտէ ամբողջ ասեղ շինել, ստանում է այդ գործի միայն մի մասը, օրինակ, ասեղների ծայրերը սրելը։ Նա շարունակ զբաղուած է միայն ծայրեր սրելով։ Նրա ձեռները այնպէս են ընտելանում այդ միօրինակ գործին, որ, վերջիվերջոյ, դառնում են բոլորովին անընդունակ ուրիշ աշխատանքի։ Արհեստաւորը խոպառ մոռանում է իր արհեստը։

Երբ արհեստաւորը արտադրում է ամբողջ արդիւնքը, նա յաճախ ստիպուած է խորհել, ինչպէս աւելի լաւ սկսել գործը, որպէս զի աւելորդ ժամանակ չկորչի, կամ որպէս զի արդիւնքը աւելի լաւ արտադրէ։ Ամբողջ արդիւնքի արտադրութեան ժամանակ նրա գլուխը աշխատում է նոյնպէս. մինչդեռ երբ բանուորը արդիւնքի միայն որոշ մասն է արտադրում, նրա ձեռքերը մեքենաբար կատարում են այդ աշխատանքը, նրա միտքը քնած է մնում, և նա կամաց-կամաց յոգնեցնող և անվերջ միօրինակ աշխատանքից խոպառ բթանում է։ Այդպիսով աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը հաշմանդամ է դարձնում բանուորի մարմինը, յարմարեցնելով նրան շարժումների մի չնչին քանակութեան և բթացնում նրա միտքը, զրկելով նրա աշխատանքը որ և է իմաստից։ Եթէ մանուֆակտուրան, որը հաշմանդամ է դարձրել բանուորին և սովորեցրել նրան գործի մի «մասի», պատահմամբ փակուի, ուր գնայ այդ հաշմանդամը։ Նրա դրութիւնը աւելի վատ է, քան հասարակ բանուորի դրութիւնը. նա կարող է գործ գտնել միայն այնպիսի մանուֆակտուրայում, որտեղ նրա «մասի» համար պահանջ կայ։

Հաշմանդամ դարձած արհեստաւորը նոյնքան է կապած մանուֆակտուրային, որքան տաժանակիր աշխատանքի դատապարտուած կալանաւորը իր սայլին։

Այդպիսի դրութիւնը տալիս է կապիտալիստ—գործատի-

րոջը ահագին իշխանութիւն մանուֆակտուրային բանուորների վրայ։ Ազատ արհեստաւորները իրանց ապրանքների արդիւնաբերութեան վերաբերմամբ մրցումից զոկ ուրիշ ոչինչ իշխանութիւն չեն ճանաչում։

Իսկ մանուֆակտուրայում կապիտալը դնում է բանուորների վրայ իր երկաթէ թաթը, ընկճում, հաշմանդամ է անում նրանց, որպէս զի դրանով աւելի հեշտ լինի նրանցից իր շահը քամել։ Բայց շուտով երևան է գալիս, որ կապիտալիստին բաւական չէ և այն իշխանութիւնը, որ նա ունի մանուֆակտուրային բանուորների վրայ։ Զէ՞ որ մանուֆակտուրան պահպանում է բացառապէս բանուորների վարպետութեամբ,

Շուկայում «աշխատաւոր ձեռքերի» մէջ արհեստաւորներ քիչ կան, ընտրութիւնը մեծ չէ։ Արհեստաւորները գիտեն իրանց գինը և հիմնելով իրենց անձնական յատկութիւնների վրայ, ամեն կերպ կուում են կապիտալիստների ճնշումների դէմ։

Կապիտալիստը գործ ունի նրանց հետ որպէս մի ոյժի, որը խանգարում է նրան անվերջ աւելացնել իր կապիտալը։ Բայց այդ արհեստաւորների աշխատավարձը բարձր է հասարակ բանուորի վարձից։

Կապիտալիստների միջև ծագող մրցումը ստիպում է նրանցից ամեն մէկին իր ապրանքը ուրիշներից էժան ծախել. իսկ այդ հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ այդ ապրանքի արտադրութեան համար անհրաժեշտ աշխատանքը պակասել է։ Այդ պատճառով իւրաքանչիւր մանուֆակտուրիստ ձգտում է իր արդիւնաբերութեան մէջ աւելորդ դարձնել արհեստաւորների վարպետութիւնը, արհեստաւորների, որոնք այնքան էլ հանգիստ չեն տանում տիրող լուծը,—նա ձգտում է աշխատանքը աւելի հասարակ, աւելի հեշտ դարձնել։ Երևան են գալիս մեքենաները։ Ամեն մի մեքենայ բաղկացած է շարժիչ մասից և աշխատող մեքենայից։ Եթէ մարդ ուշադրութեամբ դիտելու լինի աշխատող մեքենան, շատ հեշտ կերպով նա կըտեսնի, որ այն աշխատանքը, որ կատարում է արհեստաւորը գործիքի միջոցով, մեքենայի մէջ կատարւում է նոյն գործիքով, միայն թէ այդ գործիքը այստեղ շարժւում է մե-

խանիզմի միջոցով։ Կարելի է ասել, որ գործիքը վերցրել են արհեստաւորի ձեռքից և տուել մեխանիզմին՝ նոյն աշխատանքը կատարելու համար։ Փայտ սղոցելու մեքենայի մէջ սղոցները շարժում են երկու լծակներ, որոնք նման են ձեռքերի և կատարում են նոյն շարժումը, ինչպէս և սղոցների ձեռքերը։ Նոյնը կարելի է նկատել և գայլիկոնող (բուրղուով ծակող) մեքենայի մէջ։ Տաշելու մեքենայի մէջ մետաղէ տախտակները տաշելու համար ահագին խարաբուղը (ռանդան) շարժւում է «երկաթէ հիւսնի միջոցով»։

Մի խօսքով, մեքենան կատարում է մեքենական աշխատանք, որը աշխատաւորից պահանջում է երկար արհեստագիտական պատրաստութիւն. մեքենան փոխարինում է արհեստագիտական աշխատանքին։

Մեքենաները կապիտալիստներին տալիս են ահագին օգուտներ։

Նախ և առաջ, փոխարինելով արհեստագիտական աշխատանքին, մեքենաները աւելորդ են դարձնում բանուորների համար արհեստ սովորելը։ Մենք արդէն տեսանք, որ արհեստ սովորելը աւելացնում է աշխատաւոր ոյժի արժէքը։ Ուրեմն աւելորդ դարձնելով բանուորների համար արհեստ սովորելը, մեքենաները պակասեցնում են աշխատաւոր ոյժի արժէքը կամ աշխատավարձը, իսկ այս հանգամանքը շահաւէտ է կապիտալիստի համար։

Երկրորդ՝ մանուֆակտուրայում ամբողջ արդիւնաբերութիւնը կախուած է բանուորների ճարպիկութիւնից, ուրեմն բացառապէս կախուած է առանձին անձնաւորութիւններից։ Իսկ այս հանգամանքը խախուտ է դարձնում մանուֆակտուրային արդիւնաբերութիւնը, թոյլ չի տալիս նրա տիրոջը անել իր բանուորների հետ ինչ որ քէֆն է ուզում, որպէս զի նրանցից որքան կարելի է շատ շահ քամէ։ Մեքենական արդիւնաբերութեան մէջ գործը բոլորովին այլ ընթացք է ստանում։ Բանուորը գալիս է գործարան և արդիւնաբերութեան ամբողջ հիմքը (կմախքը) պատրաստ գտնում,—նրան հարկաւոր է միայն իր ոյժը գործադրել առանց որ և է հունարի։ Մանուֆակտուրայում գործիքները ծառայում են բանուորին, իսկ բանուորը ամբողջ գործի գլուխն է, մինչդեռ գործարանում բանուորը ծառայում է մեքենային։ Մեքենան անում է ամեն բան, իսկ նա կարծես միայն կազմում է մեքենայի մի մասը։ Այդ հանգամանքը գործարանատիրոջ ձեռքը տալիս է մեծ իշխանութիւն բանուորների վրայ, արդիւնաբերութիւնը աւելի կայուն ու հաստատուն է դարձնում։ Ֆաբրիկանտն ասում է. «Թող լինեն մեքենաներ, իսկ ձեռներ միշտ կըգտնուեն»։ Եւ նա ճիշտ է ասում։

Երրորդ՝ մեքենաները աւելացնում են աշխատանքի արդիւնաւէտութիւնը, այսինքն մեքենական արդիւնաբերութեան ժամանակ բանուորը արտադրում է միևնոյն ժամանակի ընթացքում աւելի արդիւնքներ, քան մանուֆակտուրայինի դէպքում։ Մենք գիտենք, որ կապիտալիստական տնտեսութիւնը հիմնուած է աշխատանքի արդիւնաւէտութեան վրայ. որքան բանուորի աշխատանքը աւելի արդիւնաւէտ է, այնքան պակաս է անհրաժեշտ աշխատանքը (ապրուստի միջոցների արտադրութեան համար հարկաւոր աշխատանքը), այնքան աւելանում են յաւելեալ աշխատանքը և յաւելեալ արժէքի արտադրութիւնը կապիտալիստի համար։

Մեքենական արդիւնաբերութեան՝ մանուֆակտուրայինի վերաբերմամբ ունեցած առաւելութիւնների մասին մենք խօսեցինք հինգերորդ գլխում։ Նայենք այժմ, ինչ ազդեցութիւն ունի մեքենական արդիւնաբերութիւնը այն բանուոր ձեռքերի վրայ, որոնք մեքենաների վրայ են աշխատում։ Մեր դարը մեքենաների դար են կոչում։ Եւ իրաւ, չը կայ արդիւնաբերութեան ոչ մի շրջան, որտեղ չըգործէին մեքենաները։ Հողագործութեան համար կան շոգեգութաններ, կան հնձելու, կալսելու, ցանելու և ցորեն մաքրելու մեքենաներ։ Չը կայ այժմ ոչ մի արհեստ, որ կարելի չըլինէր փոխարինել մեքենայով։ Մի խօսքով, որտեղ որ մարդը պէտք ունի իր աշխատաւոր ոյժը գործադրելու ընութեան առարկաների վրայ, նա ամենուրեք հանդիպում է մեքենայի, որը պէտք է զգալի կերպով նրա աշխատանքը պակասեցնէ և հեշտացնէ։ Պէտք էր սպասել, որ մեքենաների ներմուծելու հետ բանուորի աշխատանքի քանակը կը պակասի. եթէ նա առանց մեքենայի օրական 12 ժամ էր աշխատում, մե-

քենայի վրայ նա կարող է արտադրել 8 ժամուայ մէջ նոյնքան արդիւնքներ, որքան և առաջ, ուստի նրա աշխատաւոր օրն էլ պիտի տևէր 8 ժամ։ Իսկ իրականութեան մէջ բոլորովին այլ բան է դուրս գալիս,—մեքենայի ներմուծելու հետ աշխատանքի օրը երկարացնւում է առանց չափ ու սահման ճանաչելու։

Արդ, ո՞րտեղ են այդ աչք ծակող հակասութեան պատճառները։ Ենթադրենք, որ և է ճարպիկ վաճառական մանուֆակտուրայ է բաց անում մեխեր շինելու համար. նա այնքան կապիտալ ունի, որ կարող 30 մարդու աշխատանք տալ։ Իւրաքանչիւր բանուոր արտադրում է օրական 2 պուդ մեխ. 1 պուդ մեխը ծախւում է 2 ռուբլով։ Ամեն մի բանուորից գործարանատէրը ստանում է 50 կ. յաւելեալ արժէք. հետևապէս 30 բանուորից օրական նա կըստանայ 15 ռուբլի։ Բայց ահա մարդիկ հնարեցին պատրաստելու մեքենայ, և մեր ճարպիկ մանուֆակտուրիստը շտապեց ձեռք բերել նրան։ Այդ մեքենան կրկնապատկեց աշխատանքի արդիւնաւէտութիւնը, և այժմ նոյն 60 պուդը կարող են արտադրել փոխանակ 30-ի՝ 15 բանուորներ։ Մեխերի մաքուր արժէքը պակասեց կիսով չափ, որովհետև ամեն մի պուդի արտադրութեան համար այժմ պէտք է երկու անգամ պակաս աշխատանք։ Եթէ նիւթի արժէքը 1 ռուբլի էր, և եթէ առաջ մաքուր արժէքը 1 ռուբլի էր, այժմ մաքուր արժէքը կը լինի 50 կոպ., իսկ մեքենական մեխերի մի պուդի արժէքը կը լինի 1 ռուբլի 50 կոպ. (1 ռուբլի նիւթն է և 50 կոպ. մաքուր արժէքը)։ Բայց մեր գործարանատէրը այնքան էլ յիմարներից չէ և ծախում է մեխերը նոյն գնով, ինչպէս և առաջ, այսինքն պուդը 2 ռուբլով։ Այսպիսով նա կը ստանայ 15 բանուորի աշխատանքի համար նոյնքան, որքան առաջ ստանում էր 30 բանուորի համար, այսինքն նա ոչ միայն կըստանայ նրա մօտ աշխատող 15 բանուորի յաւելեալ արժէքը, այլ և իր մօտ չաշխատող 15 բանուորի անհրաժեշտ արժէքը։ Այս կըտևէ այնքան ժամանակ, մինչև որ մանուֆակտուրիստները նոյնպէս մեքենաներ ձեռք կըբերեն և մրցման միջոցով մեխերի գինը կիջեցնեն մինչև նրանց իսկական արժէքը—1 ռուբլի 50 կոպ.։ Այդ եռուն և կապիտալիստի համար հաճելի ժամանակը, որի ընթացքում նա մենակ է օգտւում նոր հնարած մեքենայով

ՄԵՍՐՈՊԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

և իր ջերն է գնում առագին շահեր,—այդ ժամանակն է հէնց այն գրաւիչ ոյժը, որ ստիպում է կապիտալիստին մեքենաներ ձեռք բերել։

Սակայն ինչ եղան մեր նախկին մանուֆակտուրիստի և այժմեան մեխերի գործարանատիրոջ բանուորները։ Իր կապիտալով նա կարող էր միայն մի մեքենայ ձեռք բերել և 15 բանուորի գործ տալ այդ մեքենայի վրայ։ Նա շատ կ'ուզէր մի երկրորդ մեքենայ էլ ձեռք բերել մնացած 15 բանուորի համար. այն ժամանակ 30 բանուորի աշխատանքի համար նա նոյնքան կը ստանար, որքան ուրիշ մանուֆակտուրիստներ առանց մեքենաների ստանում են 60 բանուորի աշխատանքի համար։ Բայց ինչքան էլ նա ուզենայ այդ խոշոր շահը ստանալ, նա ստիպուած է բաւականանալ մի մեքենայով և 15 բանուորներով, իսկ մնացածները նրա համար աւելորդ են դառնում և նա նրանց հաշիւ է տալիս ու դուրս անում։

Մինչև որ մրցումը մեխերի գինը չէ իջեցրել, հաւասարեցնելով նրանց իսկական արժէքին, մեր նոր թխած ֆաբրիկանտի գործերը լաւ են գնում։ Նա ստանում է շահ այն բանուորներից, որոնք նրա մօտ էին աշխատում։ Բայց այդ երկնային ժամանակը կը վերջանայ այն ժամանակ, երբ մեխերի գինը կիջնի մինչև 1 ռուբլի 50 կոպէկ։ Նա այժմ պէտք է բաւականանայ այն յաւելեալ արժէքով, որ նա դուրս է քաշում իր մօտ աշխատող 15 բանուորներից։ Այստեղ միայն նա սարսափով գլխի է ընկնում, որ խաբուած է։

Մենք գիտենք, որ կապիտալիստի ստացած յաւելեալ արժէքի քանակը կախուած է նախ և առաջ՝ աշխատաւոր օրուայ երկարութիւնից, երկրորդ՝ նրա մօտ աշխատող բանուորների թուից, երրորդ՝ աշխատանքի արդիւնաւէտութիւնից։ Մինչև մեքենայի ներմուծելը՝ մեր ֆաբրիկանտը բանուորներից ստանում էր 15 ռ. յաւելեալ արժէք։ Մեքենայի ներմուծելուց յետոյ աշխատանքի արդիւնաւէտութիւնը աւելացաւ, անհրաժեշտ արժէքի մեծութիւնը փոքրացաւ, իսկ յաւելեալ արժէքը աւելացաւ. ամեն մի բանուորից այժմ ֆաբրիկանտը ստանում է 60 կոպ. օրական։ Բայց նրա մօտ մնաց 15 բանուոր, և նրանցից նա ստանում է օրական 9 ռ., մինչդեռ առաջ նա ստանում էր 15

ռ.։ Մեքենան միայն սկզբում գրաւեց նրան իւղոտ շահերով, իսկ յետոյ այդ շահերը երազի նման չքացան։ Ի՞նչ անէ։ Բանուորների թիւը աւելացնել նա չի կարող, որովհետև նրա կապիտալը չի բաւականանում. աւելացնել աշխատանքի արդիւնաւէտութիւնը աւելի կատարելագործուած մեքենայի միջոցով,— առայժմ նա անկարող է նոյնպէս։ Մնում է ուրեմն միայն մի ելք յաւելեալ արժէքը աւելացնելու համար,—երկարացնել աշխատաւոր օրը։ Այդպէս էլ անում է։ Բայց դեռ մեխերի գինը 1 ռուբլի 50 կոպ. չիջած, նա արդէն երկարացրեց աշխատաւոր օրը։ Իրա մօտ մնացած 15 բանուորներին նա ստիպում է ուժերից վեր աշխատել, որպէսզի կարողանայ նրանցից ստանալ որքան կարելի է շատ ապրանք և օգտուել այն եռուն ժամանակից, քանի դեռ ուրիշները մեքենաներ չեն ձեռք բերել։

Սակայն ի՞նչն է տալիս ֆաբրիկանտին այդպիսի իշխանութիւն աշխատանքի օրը երկարացնելու։ Ահա թէ ինչ։ Երբ արդիւնաբերութեան որ և է ճիւղի մէջ ներմուծւում է մեքենան, «աշխատաւոր ձեռքերի» մի մասն աւելորդ է դառնում, «աշխատաւոր ձեռքերի», որոնք առաջ այդ արտադրութեամբ էին զբաղւում։ Այդ աւելորդ «ձեռքերը» առանց այլևայլութեան գործարանից դուրս են շպրտւում, և իհարկէ պէտք է ընկնեն շուկայ։ Այնտեղ նրանք մեծացնում են աշխատանքի առաջարկը։ Առաջարկի մեծանալու շնորհիւ մրցում է տեղի ունենում բանուորների միջև, և այդ մրցումը հնարաւորութիւն է տալիս ֆաբրիկանտներին ոչ միայն պակասացնել աշխատավարձը, այլ և աշխատաւոր օրը չափից դուրս երկարացնել։ Աւելորդ «ձեռքեր» շատ կան և կարիք չկայ այնքան էլ անհանգիստ լինելու, որ անբաւարար վարձից և ծայրայեղ աշխատանքից բանուորները ճանճի նման մեռնում են։ Բայց այդքանը դեռ բոլորը չէ։ Մեքենաների ներմուծելու հետ աւելորդ է դառնում ոչ միայն բանուորների արհեստաւորական ճարպիկութիւնը, այլ և նրանց ֆիզիքական ոյժը։ Մեքենայի վրայ թոյլ մարդը կարող է աշխատել նոյնքան աջողութեամբ, որքան և ուժեղ։ Շնորհիւ այդ հանգամանքին մեքենաների ներմուծելը առաջ է բերում կանանց և երեխաների աշխատանքը կապիտալիստի համար։ Այդ աւելի ևս մեծացնում է աշխատանքի առաջարկը և մրցումը բանուորների միջև։

Մենք տեսանք, որ աշխատավարձը պէտք է պարունակէ իր մէջ բանուորի և նրա ընտանիքի ապրուստի միջոցների արժէքը։ Մանուֆակտուրային արդիւնաբերութեան ժամանակ մի բանուորի աշխատանքը պահում է նրա ամբողջ ընտանիքը։ Շնորհիւ կանանց և երեխաների աշխատանքի առաջ գալուն մեքենական արդիւնաբերութեան ժամանակ ընտանիքի տիրող աշխատավարձը պէտք է իջնի ճիշտ այնքան, որպէս զի կնոջ ու երեխաների աշխատավարձի հետ միասին կարելի լինի պահել ամբողջ ընտանիքը։ Այսպիսով մեքենաների ներմուծելու հետ բանուոր ընտանիքի ամբողջ աշխատանքը վարձատրւում է նոյն աշխատավարձով, որով մանուֆակտուրային արդիւնաբերութեան ժամանակ վարձատրւում է միայն ընտանիքի տիրող աշխատանքը։ Մեքենայի հետ կապիտալիստին տրւում է հնարաւորութիւն երկարացնել աշխատանքի օրը։

Մենք արդէն տեսանք, թէ ինչպէս աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը բանուորների վրայ կորստաբեր ազդեցութիւն է անում նրանով, որ կապում-կաշկանդում է նրանցից ամեն մէկին մի չնչին գործի վրայ, հաշմանդամ ու անընդունակ է դարձնում նրան որ և է աշխատանքի համար։ Ոչ պակաս վատթար ազդեցութիւն ունեն բանուորների վրայ և մեքենաները։

Ինքնուրոյն արտադրող-արհեստաւորը ստիպուած է ձեռք բերել ոչ միայն արհեստաւորական ճարպիկութիւն իր արդիւնքները արտադրելու համար, այլ և որոշ մտաւոր զարգացում, որ հնարաւորութիւն է տալիս նրան հասկանալ ամբողջ արդիւնաբերութիւնը և անել նրա մէջ ամեն տեսակ բարեփոխումներ։ Այդ մտաւոր զարգացումը արհեստաւորը ստանում է ոչ միայն արհեստը սովորելու ժամանակ, այլ և այդ արհեստը գործադրելու ընթացքում։ Երբ արհեստաւորը ընկնում է մանուֆակտուրայի մէջ, որտեղ գոյութիւն ունի աշխատանքի լայն բաժանում, նա արդէն կորցնում է աշխատանքի ամբողջ արդիւնաբերութեան մասին իր ունեցած հասկացողութիւնը,—նա արտադրում է արդիւնքի միայն մի մասը, իսկ ամբողջ ար-

տադրութեան մասին գիտէ միայն մանուֆակտուրայի տէրը։ Բայց, երբ բանուորը մտնում է գործարան և բանում է մեքենայի վրայ, նա կորցնում է իր հասկացողութիւնը ոչ միայն ամբողջ արդիւնաբերութեան, այլ և նրա մի մասի մասին։ Նա չը գիտէ, թէ ինչ արդիւնք և ինչպէս պէտք է արտադրուի նրա աշխատանքով։ Բանուորի ամբողջ գիտութիւնը, ամբողջ խելքը մնցնում է մեքենային, իսկ ինքը բանուորը մեքենայի միայն մի մասն է կազմում։

Այսպիսով կապիտալիստական տնտեսութիւնը, զրկելով բանուորին արդիւնաբերութեան միջոցներից, միևնոյն ժամանակ արդիւնաբերութեան մասաւոր կողմը բաժանում է ֆիզիքականից։ Մասաւոր կողմը և կապիտալը (գիտութիւն, մեքենաներ) կենդրոնանում են կապիտալիստների ձեռքին, իսկ ֆիզիքական կողմը (աշխատաւոր ոյժը) բանուորի մօտ։ Պարզ է, թէ որպիսի սարսափելի իշխանութիւն է տալիս այդ հանգամանքը կապիտալիստին բանուորի վրայ, մանաւանդ եթէ աչքի առաջ ունենանք և միւս առաւելութիւնները։

Բանուորների մարմնի վրայ մեքենան ազդում է սաստիկ ֆնասակար կերպով։ Դեռ մանուկ հասակից բանուորը ստիպուած է լինում կատարել մի որևէ գործ մեքենայի վրայ, իր շարժումները յարմարեցնել մեքենայի՝ մեռցնելու չափ միապաղաղ շարժումներին։ Պարզ է, որ այդ մեքենայից ջոկ նա ոչ մի ուրիշ աշխատանք կատարելու ընդունակ չէ։ Օրինակ, արագաշարժ տպարանական մեքենաների վրայ ստիպուած են աշխատել 13—14 տարեկան երեխաներ, որոնց ամբողջ աշխատանքը թղթերը մամուլի տակ դնելու մէջն է կայանում. և այդ աշխատանքը տևում է օրական 12 ժամ։ Զարմանալի էլ չի ընաւ, որ այդ դժբաղդ արարածները իսպառ կորցնում են իրենց մարդկային կերպարանքը։ Բայց ամենից վատն այն է, որ ջարդելով ու դժբաղդացնելով բանուորին մի մեքենայի վրայ աշխատելու շնորհիւ, կապիտալիստը յանկարծ նրան փողոց է շպրտում։ Տեսնենք թէ ինչն է ստիպում կապիտալիստին անել այդ քայլը։

Յաւելեալ արժէքի մեծանալը հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ մեծանում է բանուորների թիւը, երկարանում

է աշխատաւոր օրը և աւելանում աշխատանքի արդիւնաւէտութիւնը։ Մեքենաների մտցնելուն պէս ֆաբրիկանտի մօտ աշխատող բանուորների թիւը կրճատւում է և պակասում է նրա յաւելեալ արժէքը։ Հետևապէս յաւելեալ արժէքը մեծացնել նա կարող է աշխատանքի օրը երկարացնելու միջոցով։ Մենք տեսանք, որ կապիտալիստը անխիղճ կերպով է օգտւում իր զրութեամբ և երկարացնում է աշխատանքի օրը առանց չափ ու սահման ճանաչելու։ Այժմ տեսնենք, թէ ինչպէս է նա աւելացնում՝ մեքենաները ներմուծելուց յետոյ՝ իր շահը, աշխատանքի արդիւնաւէտութիւնը մեծացնելու միջոցով։

Բաւական է, որ մեքենան մտնի արդիւնաբերութեան որևէ ճիւղի մէջ, և զրանից յետոյ աշխատանքի արդիւնաւէտութիւնը կարելի է մեծացնել միայն կամ մեքենաներ մտցնելով արդիւնաբերութեան այն բոլոր ճիւղերի մէջ, որտեղ դեռ չը կայ մեքենայ, կամ փոխարինելով մտցրած մեքենան նոր, աւելի կատարելագործուած մեքենայով։ Իսկ որովհետև աշխատանքի արդիւնաւէտութիւնը մեծացնել կապիտալիստի համար անհրաժեշտ պահանջ է,—շահը խօսք հարկաւոր է նրան—նա շարունակ մտցնում է նորանոր մեքենաներ։ Մանուֆակտուրայում եթէ աշխատանքի բաժանումը հասցրած է որոշ աստիճանի, արդիւնքի արտադրութեան ձևը արդէն դառնում է անփոփոխ, քարանում է։ Այդ ձևը անցնում է մի սերնդից միւսին, հօրից որդուն, ինչպէս այդ լինում է համքարութիւնների մէջ։ Իսկ գործարանային արդիւնաբերութեան մէջ կապիտալիստի ձգտումը՝ որքան կարելի է աւելի շահ ունենալ՝ ստիպում է նրան կատարելագործել աշխատանքը, գործադրել նորանոր մեքենաներ և այդպիսով յաճախ փոփոխել արտադրութեան ձևը։

Մեքենաների այդօրինակ գործադրութիւնը դէպի վաճառանոց է շպրտում աւելորդ դարձած շատ «ձեռքեր»։ Այդ «ձեռքերը» պէտք է մի կերպ սովորեն ուրիշ մեքենաների վրայ գործել, իսկ այդ նրանց համար դժուար է անել մանաւանդ այն պատճառով, որ ամեն մի մեքենայ պահանջում է այնպիսի բանուորներ, որոնք ընտելացել են նրան և հաշմանդամ դարձել նրան յարմարուելու շնորհիւ։ Այսպիսով գործարանային արդ-

դիւնաբերութիւնը շարունակ նորանոր մեքենաներ մտցնելով և գտնուելով անընդհատ շարժման մէջ, յաճախ շպրտում է դէպի վաճառանոց «աշխատաւոր ձեռքերը» և պահանջում նրանցից աշխատելու ընդունակութիւն, ինչ մեքենայ էլ լինի։ Կրկին մեր առաջն է կապիտալիստական տնտեսութեան ապադակող հակառակութիւնը, որի հետևանքը լինում է բանուոր դասակարգի սոսկալի տառապանքները։ Ֆաբրիկանտների դէպի շահը ունեցած ագահութիւնը ստիպում է նրանց մտցնել նորանոր մեքենաներ։ Բայց կան այն տեսակ մեքենաներ, որոնք շատ թանգ արժեն և նրանց մտցնել կարող են միայն խոշոր կապիտալիստները։ Եթէ մի խոշոր կապիտալիստ այդ տեսակ թանգ մեքենայ մտցրեց իր արդիւնաբերութեան մէջ, այդ դէպքում մանր կապիտալիստի հետ ունեցած մրցման մէջ նա յաղթող կը հագիսանայ, որովհետև նրա նոր մեքենան աւելացնելով աշխատանքի արդիւնաւէտութիւնը, հնարաւորութիւն է տալիս խոշոր կապիտալիստին ապրանքը աւելի էժան ծախել, քան մանր կապիտալիստը։ Ինչպէս որ մանուֆակտուրան ջախջախում է առանձին արտադրողներին, այսպէս էլ աւելի խոշոր մանուֆակտուրան ջախջախում է աւելի մանրը. ինչպէս որ գործարանը յաղթահարում է խոշոր մանուֆակտուրան, այսպէս էլ խոշոր գործարանը պէտք է մրցման միջոցով յաղթահարէ մանր գործարանը։ Մի խօսքով, մրցումը ձգտում է ամբողջ արդիւնաբերութիւնը հետզհետէ գցել խոշոր կապիտալիստների ձեռքը։

Միայն խոշոր կապիտալիստը կարող է մեծ կատարելագործումներ անել իր արդիւնաբերութեան մէջ, աշխատանքը ամենից շատ արդիւնաւոր դարձնել։ Կապիտալիստական տնտեսութեան բնորոշ յատկութիւնն է հէնց խոշոր կապիտալի և խոշոր արդիւնաբերութեան տիրապետութիւնը։

Խոշոր ֆաբրիկանտները որոշակի չը գիտեն, թէ ինչքան ապրանք է պէտք վաճառանոցի համար. բայց շնորհիւ այն հանգամանքին, որ նրանք ձգտում են որքան կարելի է մեծ շահ ստանալ, նրանք ստիպուած են որքան կարելի է շատ ապրանք արտադրել։ Այդ պատճառով յաճախ պատահում է, որ վաճառանոցները լցուում են ապրանքներով, որոնք մնում են

անշարժ։ Մեքենայի ներմուծումը փողոց է շպրտում «աւելորդներին» և իջեցնում է գործող բանուորների աշխատավարձը։ Շնորհիւ դրան բոլոր բանուորները ստիպուած են կրճատել բոլոր ապրանքների սպառումը, և ապրանքների պահանջը այդպիսով պակասում է։ Մինչդեռ, թէև ճիշտ է, որ պահանջը քըչացել է, սակայն նոր ներմուծած մեքենաները շատ աւելի ապրանք են արտադրում, քան առաջ և աւելի ևս մեծացնում են առաջարկը։ Այս երևոյթը կրկին կապիտալիստական տընտեսութեան հակասութիւններից մէկն է, և սրա հետևանքն է արդիւնաբերութեան ժամանակաւոր դադարումը, կամ ինչպէս ասում են—ճգնաժամը։

Վաճառանոցը ապրանքներով լցուած լինելու և բանուորների թշուառ դրութեան շնորհիւ, ապրանքի պահանջը ընդհատուում է, և այդ պատճառով այդ ապրանքների արտադրութիւնը պէտք է պակասի։ Խոշոր ֆաբրիկանտները ստիպուած են կրճատել արդիւնաբերութիւնը կամ բոլորովին ընդհատել այն. շնորհիւ այդ բանի կրկին փողոց է շպրտուում բանուորների մի անհամար քանակ, որոնց միակ վիճակն է սովամահ լինելը։ Այդպիսով խոշոր արդիւնաբերութիւնը երկու կողմից հարուածուում է խեղճ բանուորին։ Մի անգամ՝ մեքենաներ մտցնելով և բանուորների մի մասը «աւելորդ» դարձնելով, միւս անգամ՝ գործարանը փակելով։ Եւ այդ դրութիւնը կրկնուում է անդադար, որովհետև ինքը կապիտալն էլ անդադար շարժման մէջ է։

Այժմ ամփոփ գաղափար տանք կապիտալիստական տընտեսութեան մասին։

Կապիտալիստական տնտեսութիւնը սկսւում է այնտեղ, ուր աշխատանքի հասարակական բաժանումը դարձրել է աշխատանքը արդիւնաւէտ, և ուր բանուորները զրկուած են արդիւնաբերութեան արտադրութեան միջոցներից։ Կապիտալիստական տնտեսութեան հիմքն է վարձու աշխատանքը և կապիտալի աճումը՝ բանուորների արտադրած յաւելեալ արժէքի հաշվին։ Մանուֆակտուրան վատացնում է մի կողմից ինքնու-

ըոյն ժանը արտադրողների դրութիւնը, միւս կողմից հաշմանդամ է դարձնում բանուորներին, աշխատանքի մանուֆակտուրային անսահման բաժանման միջոցով։ Մանուֆակտուրայի մրցումը առաջ է բերում մեքենաներ։ Մեքենաները փոխարինում են արհեստաւորների ուժին և ճարպիկութեանը. մի կողմից նրանք դուրս են շպրտում աւելորդ «աշխատաւոր ձեռքերը», միւս կողմից կապիտալիստների օգտին աշխատելու հաժար գործարան են քաշում կանանց և երեխաներին։ Բանուորների սոսկալի մրցումը մեքենաների ներմուծման շնորհիւ տալիս է կապիտալիստին անսահման իշխանութիւն բանուորների վրայ։ Այդ իշխանութիւնը արտայայտւում է աշխատաւոր օրուայ անսահման երկարանալու և աշխատավարձի պակասելու մէջ։ Աշխատավարձի պակասելը ստիպում է բանուորին ծախել կնոջ ու երեխաների աշխատաւոր ոյժը կապիտալիստին։ Աշխատաւոր ամբողջ ընտանիքի աշխատանքը վարձատրւում է այնպէս, ինչպէս մանուֆակտուրայում վարձատրւում է միայն ընտանիքի տիրոջ աշխատանքը։ Մեքենական արդիւնաբերութիւնը հաշմանդամ է դարձնում բանուորին, նրա մարմինը յարմարեցնելով մեքենային, և բթացնում է բանուորի խելքը, բաժանելով արդիւնաբերութեան ժտաւոր կողմը ֆիզիկականից։ Մեքենաների ներմուծելուց յետոյ կապիտալիստը պէտք է ժտածէ աշխատանքի արդիւնաւորութիւնը աւելացնելու մասին։ Նա պէտք է շարունակ նորանոր մեքենաներ մտցնէ։ Այստեղից առաջ են գալիս փոփոխութիւններ արդիւնաբերութեան մէջ։ Կապիտալիստական տնտեսութիւնը կործանում է բանուորի հոգին, բոլորովին հպատակեցնելով նրան կապիտալին, որը ոչ արդարութիւն գիտէ, ոչ նամուս, ոչ բարութիւն. նրա համար գոյութիւն ունի միայն մի օրէնք—շահը։

Սակայն դրանով չի սպառւում այն ամբողջ չարիքը, որ բղխում է կապիտալիստական տնտեսութիւնից։ Կապիտալիստական կարգերը իրանց ծանրութեամբ ընկճում են ոչ միայն քաղաքային բանուորներին և մանր արհեստաւորին, այլ նրանցից ոչ պակաս չափով ճնշում է և գիւղացին։

Շնորհիւ մանուֆակտուրային և ապա գործարանային արդիւնաբերութեան՝ շատ առարկաներ, որ գիւղացին

ԳՐԱԴԱՐԱՆ ԿՈՂ. № 2

տանն էր պատրաստում, աւելի ձեռնտու դարձաւ վաճառանոցում գնել։ Առաջ գիւղացին իր սեփական նիւթից էր պատրաստում իր բոլոր շորերը։ Այժմ գործարանային և մանուֆակտուրային գործուածքները իրանց էժանութեամբ աւելորդ են դարձնում գիւղացու այդ աշխատանքը։ Հազուագիւտ բան է, որ գիւղացին այժմ տանը մահուդ գործէ և դրա համար գիւղուք 20 օր գործադրէ, մինչդեռ նոյն մահուդը և դուցէ էլ աւելի լաւն ու գեղեցիկը վաճառանոցում կարելի է ձեռք բերել տասը օրուայ աշխատանքի գնով։ Նոյնը կարելի է ասել և ուրիշ առարկաների մասին, որ գիւղացիները մի ժամանակ իրանք իրանց համար էին արտադրում, իսկ այժմ գնում են շուկայում։ Շնորհիւ դրան՝ գիւղացու տնտեսական աշխատանքը սաստիկ կրճատուել է։ Առաջ նա զբաղուած էր ամբողջ տարին, ամառը՝ հողագործութեամբ, ձմեռը՝ տնային աշխատանքով։ Այժմ շատ տեղերում ձմեռը տանը աշխատելու բան չունի։ Իր տնտեսութեան համար նա այժմ շատ աւելի քիչ ժամանակ պէտք է գործադրէ, քան առաջ։ Բայց մենք արդէն գիտենք, որ ինչքան պակաս ժամանակ գործադրէք արդիւնաբերութեան մէջ, այնքան աւելի քիչ արժէքներ կը ստեղծէք։ Հետևապէս այժմ գիւղացին իր տնտեսութեան մէջ շատ աւելի քիչ է արտադրում, քան առաջ, և ուրեմն շատ աւելի քիչ եկամուտ է ստանում։

Բացի այդ՝ նա ստիպուած է այժմ գնել շուկայում այն առարկաներից շատերը, որ առաջ ինքն էր արտադրում. և ոչ միայն այդ առարկաները, այլ և շատ ուրիշները, որոնք ժամանակի ընթացքում մարդու համար անհրաժեշտ դարձան—նաւթ, թէյ, շաքար, լամպեր, գրքեր և այլն։ Այդ առարկաները գնելու համար նա պէտք է ծախսէ իր՝ առանց այն էլ պակասած եկամուտի մի մասը։ Քանի գնում, այնքան աւելի ու աւելի պահանջ է զգացւում, մինչդեռ փող ձեռք բերելը աւելի ու աւելի դժուարանում է։ Կապիտալիստական տնտեսութիւնը գիւղացու աշխատանքի զգալի մասը բոլորովին աւելորդ է դարձրել ճիշտ այնպէս, ինչպէս նա աւելորդ է դարձնում քաղաքային բանուորների աշխատանքի զգալի մասը, նոր մեքենաներ մտցնելու շնորհիւ։

Աւելի զգալի վնասներ է հասցնում կապիտալիզմը գիւղացուն նրանով, որ մտնում է նաև գիւղատնտեսութեան շրջանը։ Օրինակ, Ամերիկայում խոշոր կապիտալիստները և կապիտալիստական ընկերութիւնները իրանց ձեռքը գցեցին ամենալաւ, դեռ չվարած հողերի անագին տարածութիւններ, մշակում են նրանց գիւղատնտեսական ամենալաւ մեքենաներով և ուրիշ կատարելագործուած միջոցներով, որով մեծապէս տնտեսում են մարդկային աշխատանքը։ Նրանք լցնում են վաճառանոցը էժան հացով և սաստիկ իջեցնում են գները։ Հացը օրէցօր էժանանում է։ Եթէ առաջ գիւղացուն բաւական էր մի փութալիւր շուկայ բերել, որպէսզի նա ձեռք բերէր փող և՛ հարկերի, և՛ տնտեսութեան ամեն կարիքների համար,—այդ բանի համար այժմ հինգ փութն էլ հերիք չէ։ Եթէ գիւղացին գրագէտ լինէր և Ջիբերումը աւելորդ մի քանի կոպէկ ունենար, նա էլ կարող էր բարելաւել մշակումը, պարարտացումը, ձեռք բերել աւելի լաւ սերմեր, մեքենաներ։ Սակայն նրան տգիտութեան մէջ են պահում և ոչխարի նման խուզում են, հէնց որ հնարաւորութիւն կայ։ Եւ ահա նա զոր է տալիս իր հողին, և շարունակ վարելով ուժասպառ է անում նրան։ Գիւղացին եզի նման աշխատում է, բայց նրա օգուտը չնչին է։ Ուրիշ խօսքով՝ գիւղացու աշխատանքը կորցնում է իր գինը, և գիւղացու բարօրութիւնը, որ նրա սեփական աշխատանքի վրայ է հիմնուած, պէտք է կամաց-կամաց ընկնի։

Գիւղացիների ընդհանուր բարօրութեան անկումը, որը գլխաւորապէս առաջ է գալիս գիւղացու աշխատանքի գինը կորցնելուց, տալիս է այն հետևանքը, որ նրանց գնելու ոյժը ընկնում է, այսինքն աւելի և աւելի դժուար է դառնում նրանց համար գնել ժամանակակից գործարանային արդիւնաբերութեան այնքան առարկաներ, որքան նրանց հարկաւոր է։ Կապիտալիստների գործերը սպառնում են կանգ առնել, յետևից նկատելի է դառնում ճգնաժամի ուրուականը։ Այդ հեռացնելու համար կապիտալիստները սկսում են հոգալ, որպէսզի իրանց ապրանքների համար զրսում մուշտարի գտնեն, կամ, ինչպէս ասում են, գտնեն արտաքին շուկայ. դրա համար փնտրում են, թէ ում հետ կարելի է պատերազմ սկսել,

զօրով հող ձեռք բերել, օտար ժողովրդներ հպատակեցնել։ Եթէ այդ յաջողուեց, կապիտալիստների գործը լաւ է։ Նոր նուաճուած երկիրը նրանք կարող են առանց հարկի, առանց մաքսի ուղածներին չափ ապրանք տանել, իսկ եթէ օտարերկրացի վաճառական գնայ այնտեղ, նա ստիպուած է կամ մեծ տուրք տալ սահմանի վրայ, կամ պէտք է «փասա-փուսան» քաշէ...

Մեծացնելով իրանց զօրքերը՝ զօրեղ պետութիւնները ստիպում են աւելի թոյլերին ստորագրել այնպիսի պայմանագրեր, որոնց հետևանքն նրանք պարտաւորուում են, դիցուք, ռուսաց ապրանքների ներմուծումը թոյլ տալ աւելի ձեռնտու պայմաններով, քան ուրիշ պետութիւնների ապրանքները, և ամեն կերպ նպաստել ռուսաց առևտրին՝ իրանց հպատակների մէջ։ Վերջապէս, մեծ և մշտական զօրքը անհրաժեշտ է բուրժուազիային նրա համար, որպէս զի երկիւղի և հպատակութեան մէջ պահուի ժողովուրդը, որը իր աշխատանքով հայթայթում է նրա համար անհրաժեշտ յաւելեալ արժէքը։

Ահագին զօրք, պաշտօնեաներ, ամեն տեսակ ոստիկանութիւն պահել, առանց որոնց չի կարելի երևակայել կապիտալիստական տնտեսութիւնը, իր ամբողջ ծանրութեամբ ընկնում է աշխատաւոր ժողովրդի, մանաւանդ գիւղացիութեան վրայ։ Գիւղացին համարւում է ինքնուրոյն տնտեսութեան տէր։ Առաջին հայեացքից թւում է, թէ նա իր աշխատանքից ստանում է ոչ միայն նրա ամբողջ արժէքը, ինչպէս այդ լինում է նպաստաւոր պայմաններում գործարանական բանուորի հետ, այլ և այն յաւելումը, այն յաւելեալ արժէքը, որ վարձու բանուորը պէտք է գործի տիրոջ տայ։

Գիւղացիների տնտեսութեան քայքայումը ձեռնտու չէ և բանուորի համար։ Աշխատանքի յետևից ընկած գիւղացիները լցնում են քաղաքները, համաձայնելով աշխատել ամենաչնչին գնով, հպատակուելով ամեն տեսակ անպատկառ վերաբերմունքի և կամայականութեան՝ տէրերի կողմից։ Տէրերը օգտուում են դրանից, որպէս զի փոխարինեն ըմբոստ բանուորներին, գործադուլ անողներին՝ քաղցած ու հնազանդ աղքատ—գիւղացիներով։ Բանուորներին հարստահարելը օրէցօր աւելանում է, տէրերը հրճուանքի մէջ են։ Գիւղացիների աղքատա-

նալը նպաստում է բանուորների աղքատանալուն։ Սովը գիւղացուն և բանուորին կապում է սարկական աշխատանքի տաժանակիր սայլակին՝ յօգուտ կապիտալիստների, կառավարութիւնների և ամեն մարդակեր վաշխառուների։

Ահա թէ ինչու ուրիշի աշխատանքով չ՚օգտուող հողագործ—գիւղացիների և վարձու բանուորների թշնամիները միևնոյն մարդիկ են։

Եւ իրաւ, ո՞ր դժբախտութեան, ո՞ր չարիքի պատճառը կապիտալիստական տնտեսութիւնը չէ. ո՞րը պարտական չէ նրան իր գոյութեամբ և իր զօրութեամբ։ Աշխարհիս երեսին չկայ չարիք, որը առաջացրած չըլինէր կապիտալիզմը, բացի մահուանից, որ արդէն ճակատագիրն է դրօշմել բոլորիս ճակատին։ Բայց չէ՞ որ մահն էլ, ինչպէս յայտնի է, աղքատ բանուորների թաղերում աւելի յաճախակի հիւր է, քան քաղաքների այն մասերում, որտեղ հարուստներն են ապրում։ Մանաւանդ այդ վերաբերում է երեխաներին. շնորհիւ ծնողների աղքատութեան՝ թողնուած բախտի կամքին, զրկուած լաւ, առողջարար սնունդից, կարգին շորերից,—աղքատների երեխաները մեռնում են ճանճի նման։ Ամեն տեսակ հիւանդութիւններ, մանաւանդ փոփոխականները, ամենից առաջ բուն են դնում քաղաքների ամենախիտ մասերում, որտեղ կեղտոտութեան ու անձկութեան մէջ քարշ են տալիս իրենց ողորմելի գոյութիւնը աղքատները՝ գետնափորների, կիսախարխուլ տների մէջ, որտեղ մարդիկ լցուած են իրար վրայ որպէս ձկները տակառում։ Նոյն բանը, միայն քիչ ուրիշ ձևով, կատարւում է գիւղում,—անձկութիւնը, կեղտոտութիւնը, վատ սնունդը, տգիտութիւնը—այդ բոլորն էլ բաց են անում հիւանդութիւնների, այլանդակութիւնների և դժբախտութիւնների դուռը։ Իսկ երբ սովը սովի յետևից ուժասպառ է անում գիւղը, սկսւում են հիւանդութիւնները—տիֆը և ամեն տեսակ ցաւեր գետին են գլորում սովից ուժասպառ եղած գիւղացուն։ Իսկ խոշոր քաղաքներում, սովի այդ ոսկեզօծ մայրաքաղաքներում, նրանց մութ ու խոնաւ գետնափորների մէջ, որտեղ կուչ է գալիս աղքատութիւնը, որտեղ բանուորների ընտանիքները առանց լոյսի ու օդի, կեղտոտութեան ու խոնաւութեան մէջ

անց են կացնում իրանց կեանքը,—այնտեղ մահն ու ցաւերը իրանց խրախճանքն են կատարում։ Այնտեղ, այդ վիթխարի գործարանների ֆաբրիկաների մէջ, որտեղ աշխատաւոր ժողովուրդը իր տուրքն է տալիս սովին իր երակների վերջին նիւթով, այնտեղ են մարդիկ ուժասպառ լինում, այնտեղ են փչանում նրանց թոքերը, կուրանում աչքերը և այնտեղ է կըրճատւում հալումաշ եղած կանանց ու երեխաների կեանքը։ Ուրեմն, նոյնիսկ այնպիսի բնական չարիքներ, ինչպիսիք են մահը, ծերութիւնը և վատառողջութիւնը, կիսով չափ ուժեղանում են՝ ծնորհիւ կապիտալիստական տնտեսութեան և նրանից կախուած ժողովրդական աղքատութեան։

Ուրիշ ցաւերի մասին, որոնք առաջ են գալիս մարդկանց վարմունքներից, կարիք էլ չկայ խօսելու,—նրանց բոլորի էլ ընդհանուր պատճառը, հիմքը կապիտալիստական տնտեսութիւնն է, հարստի՝ աղքատի վրայ, ուժեղի՝ թոյլի վրայ ունեցած առաւելութիւնն է։ Այդ պարզաբանելու համար կանգ առնենք մի քանի փաստերի վրայ։

Հազարաւոր մարդիկ նստած են մեզանում բանտերում. 30 հազարի չափ մարդիկ ամեն տարի դատի են ենթարկւում, և նրանց կէսը համարեա ուղարկւում է Սիբիր՝ տաժանակիր աշխատանքի կամ այնտեղ բնակուելու համար։ Մեղապարտների այդ անագին բանակը պահելու համար մեզանում ծախսում են տարեկան համարեա 15 միլիոն ռուբլի,—այդ փողը ծախսւում է բանտերի շինութեան, բանտարկեալների շորերի, շղթաների, կօնվոյի, բանտարկեալներին մի տեղից միւսը փոխադրելու, զանազան վերակացուների, տնտեսների վոհմակի վրայ։ Ո՞րտեղից է «թշուառների» այդ ամբոխը։ Սովը,—ահա թէ ինչն է քշում մարդկանց։ Այսօր չը գտաւ աշխատանք, վաղը՝ նոյնպէս, և մարդը յուսահատութիւնից գիժում է վատ գործի։ Անբերրիութիւնը անբերրիութեան յետևից, սովը սովի յետևից,—իսկ օգնութիւն ոչ մի տեղից էլ չկայ,—երեխաները ճանճի նման մեռնում են, և անասելի ցաւից ստիպուած հայրերն ու մայրերը պատրաստ են ամեն տեսակ վատ գործ կատարել, գէթ չը լսեն իրանց երեխաների լացն ու աղաղակը։

Նկատուած է, որ սովի տարիներում բանտերը լիքը լըց-

ուած են լինում։ Ձմեռը մեծ քաղաքներում հարիւրաւոր մարդիկ յանցանք են գործում բոլորի աչքի առաջ, միայն թէ մի կերպ բանտը ընկնեն։ Արխանգելսկում, օրինակ, մարդիկ ամեն տարի իրանք են գալիս ոստիկանութեան յայտնելու իրանց ոճիրների մասին, որպէս զի նրանց «տաք ու կուշտ» տան մէջ նստեցնեն, այսինքն բանտ։ Եւ ամենից շատ այնտեղ նստած են գիւղացիներն ու բանուորները, որոնք աշխատանք չեն կարողացել գտնել։ Իսկ այնտեղ մարդիկ սովորում են հեշտ կեանքի, և առաջի «մեղքից» յետոյ սկսում են աւելի յաճախ ու յաճախ մեղք գործել։ Սակայն սովից-ցրտից կատարած ամենափոքր յանցանքի համար անգամ մեր օրէնքները խիստ պատիժ են տալիս, մինչդեռ մեծ յանցանքների մասին մենք շատ քիչ գիտենք։ Ձափից ուրս հարստութիւնը անգործութիւնը նոյնպէս առաջ են բերում շատ ոճիրներ, աւելի զազրալի, քան անհուն աղքատութիւնն է կատարում։ Կապիտալիզմը տանում է դէպի անառակութիւնը, մահ... Ոճրագործները նստած են բանտերում։ Այնտեղ կանայք քիչ կան։ «Սովը» սրանց փողոց է քշում և դցում անառականոցները—որանք ընկնում են քաղաքներում անառակութեան ու հիւանդութիւնների մէջ, ծախելով իրանց մարմինը։ Միայն Մոսկուայում անառակութեամբ աղատ պարապող կանանց թիւը հասնում է 20 հազարի, իսկ գաղտնի պարապողները—անթիւ, անհամար։ Նոյնն է և Պետերբուրգում և մանաւանդ առևտրական քաղաքներում՝ Օդեսայում, Ռիգայում և մասամբ Վարշավայում, որտեղ անառակութիւնը աւելի ուժեղ է ու տարածուած, քան ուրիշ տեղերում։ Աղքատութիւնը քշում է ջահել աղջիկներին այս քաղաքները, և նրանք ընկնում են հարուստ և անառակ ազատների և նրանց որդիների ձեռքը, որոնք դժբաղդացնում են նրանց հազարներով։ Ամեն տարի ուղղիչ տներ են ընկնում հազարաւոր երեխաներ (միայն Մոսկուայի ուղղիչ տան մէջ 18 հազար երեխայ կայ), իսկ քանի՞ քանիսը սրանցից մեռնում են։ Ո՞վ է մեղաւորը։ Նորից նոյն կապիտալիզմը, որը իր ագահ բերանով լափում է մարդկանց և փչացնում նրանց, իր դարշելի, թունաւոր շնչով։ Եւ դժուար է դրա հետ կռուել՝ շնորհիւ այն դրութեան, որ ստեղծուել է կապիտալիզմի և կամայականութեան ճնշման տակ։

Արդ, ո՞րտեղ կարող է մարդկային բնութիւնը զարգանալ և ուղղուել, եթէ կեանքի կռիւը տիրել է մարդուս բոլոր մըտքերին։ Բայց նայեցէք ձեր շուրջը և կըտեսնէք, որ հասարակութեան բոլոր խաւերում ամեն բոպէ տեղի ունի անընդհատ կռիւ մարդկանց միջև, բոլորի կռիւը բոլորի դէմ, կռիւ հարստութեան, իշխանութեան, պատուի և ամենից շատ մի կտոր սև հացի համար։ Կռիւը, որի ժամանակ մարդիկ կորցնում են ճշմարտութեան ու ստի պատուի ու անպատուութեան մէջ եղած զանազանութեան հասկացողութիւնը, գցում է նրանց սոսկալի անառակութեան, անգթութեան, գազանութեան ու անսահման դժբաղդութեան դիրքը։

Գիւղում գիւղացիք կռւում են միմիանց հետ հողի այն չնչին բաժինների համար, որ թողել են նրանց կալուածատէրերը և գանձարանը, և թրջվում են նրանք ճանճերի նման սարդոստայնի մէջ, որ բացել են նրանց համար գիւղի զանազան սարդեր՝ վաշխառուները, մարդակեր վաճառականները։ Քաղաքում բանուորները խլում են միմիանցից աշխատանքը, մէկը միւսից էժան գնով ծախում են իրանց աշխատաւոր ոյժը ագահներին, որոնք անխիղճ կերպով օգտուում են նրանց չքաւորութեամբ և ստիպում նրանց ամենաչնչին վարձով աշխատել օրական 10, 12 և նոյնիսկ 14 ժամ։ Նոյն արհեստով պարապող մանր արհեստաւորները պատրաստ են միմիանց մի գդալ ջրի մէջ խեղդել, որպէսզի ազատուին աւելորդ մրցակցից, մուշտարուն իրանց մօտ քաշելու համար։ Նոյնը շարունակ տեղի ունի մանր խանութպանների միջև՝ մուշտարու համար։ Մանր արհեստաւորի և խանութպանի գլխին թանձր ամպի նման կախուած է խոշոր ֆաբրիկանտների և խոշոր առևտրականների մրցումը, որ ամեն օր թոյլ մրցակցին հասցնում է մուրացկանութեան, ստիպում է գործակատար, վարձու արհեստաւոր կամ նոյնիսկ հասարակ բանուոր դառնալ նոյն հրէշների մօտ, որոնք խլեցին նրա ձեռքից ինքնուրոյն կեանքի վերջին նշոյլը անգամ։ Բայց այդ խոշոր, ագահ հրէշներն էլ գործում են հաւասարաշիս միայն այն ժամանակ, երբ հարկաւոր է պինդ աղմել

այն չուանը, որ գցել են նրանք ստրուկ բանուոր դասակարգի վզին։ Նրանք շարունակ շահի համար իրար միս են ուտում։ Կալուածատէրերը, ֆաբրիկանտները և վաճառականները նոյնպէս կռուում են միմիանց հետ և ամէն կերպ ձգտում իրար ձեռքից խլել այն որսը, որ նրանք գողացել են աշխատաւոր ժողովրդից։

Ի՞նչ է տուել այդ բոլորի տեղ կապիտալիստական տնտեսութիւնը։ Նա անասելի չափերի է հասցրել աշխատանքի արդիւնաւէտութիւնը։ Վերջինիս մեծանալու շնորհիւ կրճատուեց բանուորների ոչ-աշխատաւոր ժամանակը, բայց ժողովրդի աշխատանքի հաշուով ապրողների թիւը բազմապատկուեց։ Հին ժամանակներում այն բոլոր հարկերն ու աւարը, որ իշխանները ձեռք էին բերում իրանց հպատակ համայնքներից, հաղիւ էին բաւականանում իշխանի և նրա ռազմիկների, գուցէ նաև փոքրիկ դասակարգի—հոգևորական մարդկանց ապրուստի համար։ Ուրիշի աշխատանքով ապրող մարդկանց շատանալու շնորհիւ շատերը, ազատ լինելով մի կտոր հացի մասին մտածելու անհրաժեշտութիւնից, սկսեցին իրանց ազատ ժամանակը գործադրել մտաւոր աշխատանքի վրայ։ Նրանք էին, որ բոլոր գիտութիւնները և արուեստները այն բարձրութեան հասցրին, որը մարդկութիւնը բոլոր արարածներից բարձր է դարձնում։ Բայց այդ բոլորը գնուած է բանուոր մարդկանց միլիոնաւոր կեանքերի թանկ գնով։ Ճիշտ է, մարդկային միտքը, գիտութիւնները, ամէն տեսակ արուեստները բարձր են կանգնած, բայց դրանցից ի՞նչ օգուտ բանուորներին, եթէ նրանց համար այդ բոլորը անմատչելի է, եթէ այդ բոլորը գոյութիւն ունի ապրուստի կողմից ազատով, ուրիշի աշխատանքով ապրող մի բուռը մարդկան համար միայն։

Ճակատագիրը հրամայում է բանուորներին աշխատել, անվերջ աշխատել և արիւն քրտինք թափել մի կտոր սև հաց ձեռք բերելու համար։ Թէ ի՞նչ գնով են գնուած մարդկութեան յաջողութիւնները,—այդ գիտէ միայն մայր սև հողը, որին միայն վիճակուել է տեսնել մարդկային բոլոր տառապանքները և թախիծը։ Բանուորների մէջքի վրայ են կառուցուած այդ յաջողութիւնները։—ժամանակ է, որ բանուորները իրանք

էլ օգտուեն նրանցից։ Աշխատանքի արդիւնաւէտութիւնը այժմ անագին է, թող բանուորներն էլ ունենան ազատ ժամանակ մտաւոր պարապմունքների համար, և թող նրանց ձեռքից չըխլեն հացի այն կտորը, որ նրանք իրանց բերնին են մօտեցնում։ Այժմ մեզ համար հասկանալի կը լինեն կեանքի այն բոլոր երևոյթները, որոնք առաջին անդամից ապշեցնում են մեզ իրանց այլանդակութեամբ։ Մենք այժմ գիտենք, թէ ո՞վ է աշխատում և ով ոչ, թէ ո՞վ է քաղցած մնում և ո՞վ փարթամ կեանք վարում։ Մենք գիտենք, թէ ի՞նչպէս է այդ տեղի ունենում։ Մեզ համար հասկանալի է այժմ, թէ ի՞նչու բանուորը մի կտոր սև հացի յետևից ընկած չքաւորութեան մէջ անվերջ տառապում է։ Վերջապէս պարզ է, թէ ի՞նչ դեր է խաղում սովը այժմեան կարգերի մէջ։ Սովը իր իշխանութիւնը և զօրութիւնը գտնում է կապիտալիստական տնտեսութեան մէջ, որը առաջ է բերել ընդհանուր կռիւ, բոլորի մրցում ի դէմ բոլորի, որը դարձրել է մարդուն իր նմանի թշնամին։ Այժմ տեսնենք թէ ինչպէս կարելի է հիմնել մարդկային տնտեսութիւնը ուրիշ սկզբունքների վրայ, որոնք կոչնչացնեն կապիտալիստական տնտեսութեան բոլոր հրէշաւոր տառապանքը...

IX

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Մարդկային ցեղը հալածող բոլոր դժբաղդութիւններից մի քանիսը կախուած են զուտ բնական պատճառներից (օրինակ մահ ծերութիւնից), իսկ միւսները առաջ են գալիս հասարակական կարգերից, մարդկային յարաբերութիւններից։ Առաջիններին, որպէս բնութեան օրէնքներ, չի կարելի ոչնչացնել, այլ միայն թուլացնել, իսկ վերջիններին կարելի է և պէտք է ոչնչացնել։ Կապիտալիստական տնտեսութեան կողմնակիցները նրա անձեռնմխելութիւնը պաշտպանելու համար աշխատում են ամէն կերպ ապացուցանել, թէ դա մարդկային բնութեան օրէնքն է, թէ կապիտալիստական տնտեսութիւնը

նոյնպէս անկարելի է ոչնչացնել, ինչպէս և մահը։ Ուստի, ասում են նրանք, թող բանուորները իրանց խաչը տանեն, իսկ կապիտալիստները իրանց խաչը։ Ի հարկէ, կապիտալիստների խաչը սաստիկ թեթև է և բացի հաճոյքից նա ուրիշ ոչինչ չէ պատճառում նրանց. ուստի և նրանց գլխում հաստատուել է այն միտքը, թէ կապիտալիստական տնտեսութիւնը բնութեան օրէնք է, և «հաւար» են բղաւում, երբ բանը հասնում է ներկայ կարգերը փոխելուն։

Այդ ըմբռնողութեանը աշխատաւոր դասակարգի պաշտպանները իրաւացի կերպով պատասխանում են, թէ բնութիւնը չի ստեղծել մի քանի ձեռքեր մշտական անգործութեան համար, իսկ միւսները՝ մշտական աշխատանքի համար, մէկի փորը՝ ամեն տեսակ անուշ կերակուրների, միւսինը՝ ցամաք հացի համար. բնութիւնը չի ստեղծում կապիտալիստներ և բանուորներ. նա ստեղծում է միայն սոսկ մարդիկ,—ուստի կեանքի մէջ էլ մարդիկ պէտք է հաւասար լինեն։ Իսկ եթէ կեանքում մենք հակառակն ենք տեսնում, դրանում բնութիւնը գործ չունի։ Ոչ թէ բնութիւնն է ստեղծել կապիտալիստական տնտեսութիւնը, այլ իրանք մարդիկ. ուստի մարդիկ կարող են և պէտք է փոխեն նրան, եթէ նա ծանր խաչ է մարդկութեան մեծամասնութեան համար։ Սրանից հետևցնելով սոցիալիստները ասում են, որ անհրաժեշտ է ստեղծել տնտեսութեան նոր կարգ—սոցիալիստական տնտեսութեան կարգը, որ անհնար կը դարձնէ կապիտալիստական տնտեսութիւնից առաջացած բոլոր չարիքները։

Կապիտալիստական տնտեսութեան և նրա հետ միասին բանուոր դասակարգի բոլոր դժբախտութիւնների հիմքը կազմում են վարձու աշխատանքը և մրցումը։ Մենք արդէն տեսանք, որ կապիտալիստական տնտեսութիւնից առաջ տիրապետում էր մանր արտադրողների տնտեսութիւնը, որի ժամանակ ամեն մի արտադրող ունէր արդիւնաբերութեան միջոցներ։ Այնուհետև ամեն տեսակ բռնութեամբ և ոնարդարութեամբ արտադրողները զրկուեցին արդիւնաբերութեան միջոցներից. մի կողմից կազմուեց կապիտալիստների դասակարգը, միւս կողմից՝ «աշխատաւոր ձեռքը»։ Մենք տեսանք արդէն իրերի այդ կարգի բոլոր սարսափելի հետևանքները։ Ուստի, սոցիալիստական տնտեսութեան առաջին և գլխաւոր հիմքը պէտք է լինի վարձու աշխատանքի բացակայութիւնը։ Աշխատաւոր ոյժը և նրա հետ միասին բանուորի ենթակայութիւնը ապրանքի տեղ չը պէտք է ծախուի։ Բայց որպէս զի բանուորը հնարաւորութիւն ունենայ իր աշխատաւոր ոյժը չը ծախել, նա պէտք է իր արտադրութեան տակ ունենայ արդիւնաբերութեան միջոցները։ Այսպիսով, ըստ երևոյթին, մարդկութիւնը պէտք է վերադառնայ դէպի այն կարգը, որից նա սկսել է,—ինչպէս որ հինաւուրց տնտեսութեան մէջ արտադրողը և արդիւնաբերութեան գործիքները կազմում էին մի ամբողջութիւն, նոյնպէս և նոր սոցիալիստական տնտեսութեան մէջ արտադրողը արդիւնաբերութեան գործիքներից բաժանուած չը պէտք է լինի։

Բայց կայ խորը տարբերութիւն մանր արտադրողների տնտեսութեան և սոցիալիստական տնտեսութեան մէջ։ Աշխատանքի հասարակական բաժանման ժամանակ իւրաքանչիւր արտադրող իր տնտեսութեան մէջ արտադրում է մի արդիւնք, բացի դրանից առանձին արտադրողները (փականագործները, կօշկակարները և այլն) չեն կազմում միութիւն իրանց վիճակը և արդիւնաբերութիւնը բարւոքելու համար։ Այսպիսով, մանր տնտեսութիւնը զուրկ է աշխատակցութեան և աշխատանքի մանուֆակտուրային բաժանման բոլոր առաւելութիւններից, և մենք արդէն տեսանք, թէ ինչպիսի վիթխարի չափերի է հասցնում աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը նրա արդիւնաւէտութիւնը։ Եթէ այժմ մարդկութիւնը միանգամից վերադառնար մանր տնտեսութեան, նա անագին ՁՆասներ կրկրէր։ Նախ և առաջ՝ կը պակասէր աշխատանքի արդիւնաւէտութիւնը. երկրորդ՝ կապիտալիստական տնտեսութեան ժամանակ ստեղծած արդիւնաբերութեան բոլոր գործիքները, բոլոր ֆաբրիկաները և մեքենաները պէտք կըլինէր թողնել, որովհետև նրանց չի կարելի ոչ բաժանել մանր արտադրողների միջև, ոչ էլ գործադրել նրանց խմբական աշխատանքի։ Ահա թէ ինչու նոր տնտեսութիւնը չը պէտք է լինի առանձին մանր արտադրողների տնտեսութիւն, որի ժամանակ իւրաքանչիւր արտադրող

առանձին իր համար ունենայ արդիւնաբերութեան գործիքներ։

Նոր տնտեսութիւնը կըլինի հասարակական (սոցիալիստական) տնտեսութիւն, որի ժամանակ արտադրողները պէտք է օգտուեն աշխատակցութեան և աշխատանքի մանուֆակտուրային բաժանման առաւելութիւններից։ Միստ թանկ գնով է ձեռք բերել մարդկութիւնը կապիտալիստական տնտեսութեան տուած բոլոր կատարելագործութիւնները, ամբողջ քաղաքակրթութիւնը, որպէսզի նա կարողանար բոլորովին հրաժարուել նրանցից և վերադառնալ նախնական դրութեան։ Կապիտալիստական տնտեսութիւնը հաւաքում է բոլոր բանուորներին միևնոյն արդիւնաբերութեան մէջ, մի գործարանում, ստիպում է նրանց աշխատել խմբով, դարձնում է նրանց աշխատանքը հասարակական, սրանով էլ մեծացնում է աշխատանքի արդիւնաւէտութիւնը։ Մեքենաների ներմուծումը պէտք է հեշտացնէ և կրճատէ բանուորների աշխատանքը։ Կապիտալիստական տնտեսութեան ժամանակ մեքենաների ներմուծումը չի կրճատում բոլոր բանուորների աշխատանքը, այլ մի մասը բոլորովին զրկում է աշխատանքից և փողոց շպրտում, իսկ բանուորների միւս մասի համար երկարացնում է չափից դուրս աշխատաւոր ժամանակը։ Մեքենաները կրճատում և հեշտացնում են բանուորների աշխատանքը, այնինչ կապիտալիստական տնտեսութեան ժամանակ մեքենաները բանուորների ամենակատաղի թշնամիներն են։

Սոցիալիստական տնտեսութեան ժամանակ արդիւնաբերութիւնը մնում է նոյնը, ինչպէս որ կար կապիտալիստական տնտեսութեան ժամանակ, այսինքն բանուորների աշխատանքը կըլինի խմբական, հասարակական, որովհետև միմիայն հասարակական աշխատանքը հնարաւորութիւն է տալիս գործադրել մեքենաները և առհասարակ խոշոր կատարելագործումները, որոնք չափազանց արդիւնաւէտ են դարձնում մարդկային աշխատանքը։ Սակայն, որովհետև արդիւնաբերութեան գործիքները կը պատկանեն ամբողջ հասարակութեան, այսինքն իրանց բանուորներին, այդ պատճառով էլ նրանց արտադրած յաւելեալ արժէքը նոյնպէս նրանց կը պատկանէ։ Սրա մէջ է կայանում սոցիալիստական տնտեսութեան ամբողջ էութիւնը։ Կապիտալիստներ այլևս չեն լինի, և արդիւնաբերութեան նպատակը կը լինի ոչ թէ շահը, այլ սոսկ մարդկային պահանջներին բաւարարութիւն տալը։ Հետևապէս՝ սոցիալիստական տընտեսութեան ժամանակ մեքենաների ներմուծումը «աւելորդ աշխատաւոր ձեռքերը» փողոց չի շպրտի, իսկ միւսների համար չի երկարացնի աշխատաւոր օրը, այլ ընդհակառակը նա կը հեշտացնէ աշխատանքը։ Եթէ որևէ գործարանում բանում են 100 մարդիկ, և նոր հնարած մեքենան կարող է 50 մարդով էլ եօլա գնալ, այդ դէպքում սոցիալիստական տնտեսութեան ժամանակ մեքենայի ներմուծումը ոչ թէ այդ աւելորդ 50 բանուորին դուրս կը շպրտի, այլ բոլոր 100 բանուորի աշխատաւոր օրը երկու անգամ կը պակասի։

Այսպէս ուրեմն, կապիտալիստական կարգի, ապրանքային տնտեսութեան և մրցման բոլոր չարիքներից ազատուելու համար անհրաժեշտ է ոչնչացնել արդիւնաբերութեան գործիքների և միջոցների մասնաւոր սեփականութիւնը և նրանց բոլոր աշխատաւորների ընդհանուր սեփականութիւնը դարձնել։ Անհրաժեշտ է ոչնչացնել առանձին մասնաւոր տնտեսութիւնները և փոխարինել նրանց մի ընդհանուր վիթխարի տնտեսութեամբ, որի մէջ բոլորն էլ կ՚աշխատէին ընդհանուր օգտի համար։ Անհրաժեշտ է ոչնչացնել ապրանքային տնտեսութիւնը, առևտուրի արդիւնաբերութիւնը, և փոխարինել նրան արդիւնաբերութեամբ ընդհանուր սպառման համար։

Մի խօսքով, անհրաժեշտ է մտցնել սոցիալիստական կարգը։

Սակայն հնարաւոր է արդեօք մտցնել սոցիալիստական տնտեսութիւնը։ Իրաւ է, որ հասարակութիւնը, վերցնելով իր վրայ հոգսը ընդհանուր աշխատանքի մասին ընդհանուր բարօրութեան համար, կը կարողանայ ամենքին էլ բաւարար վիճակ ապահովել։

Բիւրգերական գիտնականները պնդում են ամեն կերպ, որ եթէ ամբողջ աշխարհի հարստութիւնները հաւաքենք և հաւասար չափով բաժանենք բոլորի միջև, այդ դէպքում ամենքն էլ հազիւ թէ կարողանային ծայրը ծայրին հասցնել։ Սրանից նրանք եզրակացնում են, որ աղքատութիւնը և չքաւորու-

թիւնը բնական մի բան է, անխուսափելի մի չարիք։ Այժմ, ասում են այդ գիտնականները, գոնէ մի քանիսը ուրիշի աշխատանքով ապահովուած են և կարող են առաջ մղել գիտութիւնները, արուեստները, նոր գիւտեր անել, որոնք աւելացնում են աշխատանքի արդիւնաւէտութիւնը։ Ստիպեցէք, ասում են նրանք, բոլորին էլ հաւասար չափով աշխատել, և կը տեսնէք, որ գիտութիւնը և աշխատանքի արդիւնաւէտութիւնը կանգ կառնեն, ազգաբնակութիւնը առաջուայ պէս կաճի, և շուտով կը տիրէ ընդհանուր չքաւորութիւն և մարդիկ կըսկսեն մի կտոր հացի համար իրար միս ուտել ամենախայտառակ ու վայրենի կերպով։ Ճիշտ է, այժմեան անհաւասարութիւնը մեզ տալիս է շատ տանջանքներ, բայց ինչ արած— այդպէս է ստեղծուած աշխարհը. իսկ ընդհանուր հաւասարութիւնը իր հետ անպատճառ պիտի բերէր մահ աշխարհին։

Տեսնենք, արդեօք ճի՞շտ է այս բոլորը։ Հաշուել են, որ Եւրոպայի և աշխարհի մի քանի մասերի զարգացած երկիրներում տարեկան 89.630 միլիոն ռուբլու ամեն տեսակ արդիւնքներ և ապրանքներ են արտադրւում, որ ամեն մի մարդու տարեկան 208 ռուբլի կը դայ, իսկ 5 հոգուց բաղկացած ընտանիքի վրայ—1040 ռ.։ Այդ այնքան էլ քիչ չէ։ Բայց մենք հաշուեցինք այդ բոլոր երկիրները միասին. վերցնենք աւելի զարգացած երկիրները։ Անգլիայում մի ընտանիք կըստանար 1685 ռ., իսկ Ամերիկայում 1950 ռ.։ Այդ արդէն բոլորովին լաւ է։

Բայց մի՞թէ սոցիալիզմը կայանում է նրա մէջ, որ հաւասէ բոլոր այժմեան եկամուտները և բաժանէ մարդկանց համահաւասար։ Ամենևին ոչ։ Այժմ շատ-շատերը մնում են առանց աշխատանքի, անգործ, իսկ շատերն էլ զբաղուած են անօգուտ և նոյնիսկ վնասակար գործերով։ Խաղաղ ժամանակ առողջ աշխատաւոր ազգաբնակութեան 100-ից 3-ը կամ 4-ը, իսկ պատերազմի ժամանակ նոյնիսկ 10 հոգի կտրուած են օգտակար աշխատանքից զինուորական ծառայութեան համար. դրանք բոլորն էլ ամենալաւ աշխատաւոր ոյժերն են և փոխանակ նրանք իրանց աշխատանքով ազգաբնակութիւնը պահելու, ազ-

գաբնակութիւնն է ստիպուած իր աշխատանքով նրանց պահելու։

Այժմ երկրագործութեամբ և արհեստներով պարապում է ազգաբնակութեան 3/4-ը, մնացած քառորդից նշանաւոր մասը զբաղուած է առևտուրով, վաշխառութեամբ և դրա նման պարապմունքներով, որոնք երկրի հարստութեան վրայ մի գրօշի բան չեն աւելացնում։ Ո՞րքան մարդիկ են զբաղուած նրանով, որ ծառայութիւններ են անում զանազան անգործ ազնների, նրանց քմահաճոյքներին բաւարարութիւն տալու համար։ Մենք արդէն տեսանք, թէ որքան յաճախ են կրկնւում իրերի ներկայ դրութեան մէջ առևտրական-արդիւնագործական ճգնաժամերը։ Ո՞րքան մարդիկ այդ ժամանակ նստած են լինում առանց աշխատանքի։ Ո՞րքան ապրանք է փչանում գնող չը գտնելով։ Հաշուել են, միմիայն կրիզիսների ժամանակ կատարուող սնանկութիւնները երկրի վրայ նստում են 5 ր. իւրաքանչիւր 100 ռ. փողին։ Իսկ որքան ի զուր տեղը կորչում են աշխատաւոր օրեր գործադուլների ժամանակ, որոնք անխուսափելի են այժմեան կարգերի մէջ։ Ռուսաստանում 1901 թ. գործադուլների ժամանակ՝ ֆինանսների մինիստրութեան տուած տեղեկութիւնների համաձայն, համարեա 100, 000 աշխատաւոր օր է կորել (99548 օր.)։ Ո՞րքան մարդիկ սովորական ժամանակ անգործ նստած են լինում։ Ո՞րքան ժամանակ են կորցնում ձմեռը Ռուսաստանում գիւղացիները, որոնք այնքան դժուարութեամբ են ձեռք բերում լրացուցիչ աշխատանքներ։ Պարզ է, որ աշխատանքների քիչ-շատ խելացի կազմակերպութեան ժամանակ ամեն մի երկրի եկամուտները պէտք է ամենաուժեղ կերպով մեծանան։ Կապիտալիստական կարգը վնասակար է մարդկութեան համար. և նրա գոյութեան ամեն մի աւելորդ օրը ահագին կորուստների պատճառ է դառնում։

Իսկ աշխատանքի արդիւնաւէտութիւնը։ Մի՞թէ սոցիալիստական կարգերի ժամանակ նա չէր մեծանայ շատ և շատ անգամ։ Կապիտալիստական կարգերը, ինչպէս մենք արդէն տեսանք, շատ դէպքերում արգելք են հանդիսանում աշխատանքի արդիւնաւէտութեան զարգացման։ Վերցնենք թէկուզ հողագործութիւնը։ Նա առաջ է ընթանում կրիայի քայլով, և

գրանում ոչինչ զարմանալի բան չկայ։ Ո՞վ պէտք է բարուոքէ հողագործութիւնը։ Մեր գիւղացին ընկճուած է, անգրագէտ է և աղքատ։ Հէնց որ նրա ջիրը մտնում է մի աւելորդ կողէկ, իսկոյն հարկահանները կամ զանազան տեսակի ազրուկները և վաշխառուները շտապում են նրա ջիրը դատարկել որ և է խաբերայութեան միջոցով։ Ե՞րբ կարող է նա մտածել արդիւնաբերութեան ձևերը բարուոքելու մասին։ Ո՞րտեղից նա պէտք է վերցնէ դրա համար անհրաժեշտ միջոցները։ Նա քչփորում է մեծ մասամբ իր նահապետական արօրով չը պարարտացրած և շարունակ վարելուց ուժասպառ եղած հողը, գցում է նրա մէջ վատ տեսակի հացահատիկ և սպասում է, թէ ի՞նչ կը տայ եղանակը։ Ոտքն ու ձեռքը հարկերով, սակաւահողութեամբ, բարձր կապալավարձով, մշտական փողազրկութեամբ կապուած, չափից դուրս մեծ տոկոսներով ճնշուած, պարտքերի տակ ընկճուած գիւղացին ծախում է ամեն ինչ չնչին գնով և գնում է երեք անգամ աւելի տալով. այսպիսի պայմաններում պարզ է, որ նա չի կարող կարգի բերել իր տնտեսութիւնը և ազատուել հողի իշխանութիւնից. նրա դրութիւնը շարունակ մազից է կախուած, նա կախուած է բնութեան ամեն տեսակ պատահարներից և քմահաճոյքներից։

Միւս կողմից խոշոր սեփականատէրերին յաճախ ձեռնտու չէ այս կամ այն բարուոքումները կատարել, որովհետև նրանք թանկ են նստում և պահանջում են սովորած բանուորի ճարպիկ ձեռքեր նրանց հետ զգուշութեամբ վարուելու համար։ Իսկ երբ այդ տեսակ բանուոր չը կայ, և երբ ամենաչնչին գնով կարելի է վարձել հարևան գիւղացուն, որը պատրաստ է մշակել կալուածատիրոջ հողերը իր անասուններով, իր արօրով, իր տափանով, կամ երբ անհոգ կերպով կարելի է երեք անգամ թանկ գնով կամ բերքի մի մասով հողը տալ մշակելու նոյն բանուորին, ուրեմն ագա-կալուածատիրոջ ինչին է պէտք մտածել աշխատանքի արդիւնաւէտութեան մասին, քանի որ նա ընդունակ չէ ոչ մի լուրջ գործի, քանի որ նա ընունակ է միայն փող վատնելու և ոչ թէ աշխատելու։ Սարսափելի է մտածել անգամ, թէ որպիսի ահագին վնաս է գալիս մարդկութեանը այդ տեսակ կարգերից։ Բայց աշխատանքի այդքան

ՀԱՅԿ. ԳՐԱԴԱՐԱՆ

չնչին արդիւնաւէտութեան ժամանակ անգամ ագա-գործատէրերը գանգատւում են հացի գերարտադրութեան (չափից դուրս արտադրութեան), ցածր գների վրայ և շատ արգամ դիմում են վարելահողերը կրճատելուն։

Այն մի քանի օրհնեալ երկիրներում ու անկիւններում, որտեղ կամ հողագործը հնարաւորութիւն է ունեցել ազատ շունչ քաշելու, բարձրացնելու իր ընկճուած գլուխը, ինչպէս հարկ է պարապելու իր արհեստի բարուոքմամբ, կամ ուրիշ կալուածատէրերը հնարաւորութիւն չեն ունեցել կողոպտելու գիւղացուն, այլ ստիպուած են եղել ուշադրութիւն դարձնել մշակման կատարելագործուած եղանակների վրայ,—այդպիսի անկիւններում մենք այժմ արդէն տեսնում ենք մարդկային մտքի և ձեռքերի իսկական հրաշքներ։

Սովորական մարգագետինների վրայ ներկայումս կովեր կերակրելու համար իւրաքանչիւր կովին միջին թւով 3 դեսեատին է պէտք։ Մարգագետինների արուեստական ոռոգման շնորհիւ յաջողւում է մի դեսեատինից նոյնիսկ պակաս հողի վրայ կերակրել մի անասուն. ուրիշ միջոցներով մի քանի տեղերում արդէն այժմ յաջողեցրել են 5 հատ անասուն պահել մի դեսեատինի վրայ. իսկ աւելի լաւ հողերի վրայ, գործադրելով կերակրի համար եգիպտացորեն և փոսերի մէջ առանձին կերպով սղմելով նոր հնձած խոտը, կարողանում են մի դեսեատինի վրայ 8—10 կով պահել։

Այն ժամանակ, երբ մեր գիւղացու համար դեսեատինից 5—6 չետվերտ ստացուող բերքը նախանձելի է նկատւում, հիւսիսային Ֆրանսիայում կան երկրագործներ, որոնք ստանում են 15-ից մինչև 19, իսկ երբեմն, աւելի նպաստաւոր պայմաններում և բարուոք տնտեսութիւնների մէջ, նոյնիսկ 26—28 չետվերտ. այսպիսով մի դեսեատին հողի վրայ կարող են 12 մարդ կերակրուել։ Ի հարկէ նրանք մշակում են հողը աւելի կատարելագործուած միջոցներով, երբեմն նոյնիսկ շոգեգութանով, երկրորդ անգամ են հերկում և տափանում, սերմացուն վերցնում են մեքենայի միջից, որը բաժանում է հացահատիկները տեսակների, սերմացուն չեն գցում ուղղակի ձեռքով գետնի վրայ, այլ առանձին մեքենաների օգնութեամբ շարքերով են ցանում, հո-

ղը ոռոգում են և պարարտացնում այնպիսի նիւթերով, որոնց մասին մեր ռուսաստանցի գիւղացին ամենևին լսած չի և գուցէ դեռ երկար ժամանակ չը լսէ...

Պարիզի մօտ բանջարանոցապահները յաճախ մի դեսեատին հողի համար վճարում են կապալարավարձ 700—1000 ր։ Ի՞նչպէս են նրանք կարողանում այդ ահագին գումարը դուրս բերել այդ հողից—միմիայն աշխատանքի արդիւնաւէտութիւնը անասելի չափերի հասցնելով։ Նրանք, կարելի է ասել, որ իրանք են ստեղծում հողը և եղանակը։ Պարարտացնելով և փընտրուն դարձնելով հողը՝ նրանք ստանում են մի առանձին թեթև հող, որ հող չէ, այլ ոսկի է։ Ամենալաւ տնտեսութիւնների մէջ բանջարանոցապահները կապալի միջոցը լրանալուց յետոյ տանում են իրանց հետ իրանց հողը։ Նրանք ցանում են ապակու տակ, բոյսերը ծածկում են ապակեայ շրջանակներով, առանձին միջոցով տաքացնում են հողը և այլն։ Մի բանջարանոցապահ համարեա մի դեսեատին հողի վրայից ստանում է տարեկան 670 պուդ գազար (բուրջուլուխ), 6000 գլուխ հասարակ կաղամբ, 3000 գլուխ «գունաւոր» կաղամբ, 5000 կողով պօմիդօր և այլն և այլն, ընդամենը 7500 պուդի չափ զանազան պտուղներ ու բանջարներ։

Ճիշտ է, մենք խօսում ենք բացառիկ, առանձնապէս նըպաստաւոր դէպքերի մասին։ Բայց սրանք բացառիկ և հազուագիւտ են այժմ։ Իսկ սոցիալիզմի նպատակն էլ կայանում է հէնց նրանում, որպէս զի բոլոր մարդկանց համար լինեն աշխատանքի այդ նպաստաւոր պայմանները, որոնց ժամանակ այդ բացառիկ դէպքերը ընդհանուր կը դառնան, և բոլոր մարդիկ կը վայելեն բարօրութիւն և երջանկութիւն։

Մարդկային մտքի և հնարագիտութեան այդպիսի հրաշքներ տեսնելուց յետոյ կարելի է ծիծաղել միայն այն մարդկանց վրայ, որոնք ասում են, թէ աղքատները այն պատճառով են շատ, որ խիստ շատացել են մարդիկ աշխարհիս երեսին, և որ այժմ աշխարհը նեղ է մարդկանց համար։ Ո՛չ, ցաւեր ու դժբաղդութիւններ այսքան շատ կան այն պատճառով, որ ներկայ կարգերը բթացնում են մարդկանց չքաւորութեան, տգիտութեան, ստրկական տաժանակիր աշխատանքի միջոցով. նրանց

անասուններ են դարձնում, հնարաւորութիւն չեն տալիս նրանց բնութեան տէրը դառնալ։ Եւ սա նկատելի է ոչ միայն երկրագործութեան մէջ,—այլ նոյնը գուցէ աւելի պակաս չափով տեսնում ենք գործարանական արդիւնաբերութեան մէջ։ Այնտեղ էլ կապիտալիստական կարգերը բաւարար ազատութիւն չեն տալիս աշխատանքի արդիւնաւէտութիւնը բարձրացնելու համար։ Ռուսաստանում, օրինակ, կապիտալիստներին ձեռնտու չէ շատ մեքենաներ մտցնել, որոնք արդէն սովորական են դառել Անգլիայում։ Ինչու։ Որովհետև մեզանում աշխատաւոր ձեռքերը աւելի էժան են, քան այնտեղ։ Սոցիալիստական կարգերի ժամանակ կարելի կը լինէր միանգամից մտցնել շատ նոր մեքենաներ, որոնք այժմ չը կան և չեն էլ կարող լինել։ Եթէ մեքենան տնտեսում է աւելի աշխատանք, քան պէտք է նրան շինելու համար, ուրեմն նա ձեռնտու է սոցիալիստական ռեժիմի ժամանակ։ Բայց այժմ այդպէս չէ։ Այժմ կապիտալիստի համար կարևորը այն չէ, թէ որքան աշխատանք տնտեսեց մեքենան, այլ այն, թէ որքան հատուցուած (վճարուած) աշխատանք տնտեսեց նրա համար։ Իսկ վճարում է նա իր բանուորների աշխատանքի միայն մի մասի համար։ Կապիտալիստը մեքենան գնում է նրա իսկական արժէքով, իսկ բանուորների աշխատանքը կէս-արժէքով։ Ահա թէ ինչու կապիտալիստական տնտեսութիւնը արգելք է հանդիսանում շատ մեքենաների տարածման և գործադրութեան, խանգարում է աշխատանքի արդիւնաւէտութեան զարգացման։ Եւ միայն սոցիալիստական կարգը կարող է լիովին ազատութիւն տալ նրան։

Իսկ քանի քանի ընդունակ մարդիկ կորչում են իզուր տեղը, ընկճուած չքաւորութիւնից և կրթութեան ու ուսման բացակայութիւնից։ Հասարակ ժողովրդի միջից դուրս եկած այն մի քանի ինքնուսները, որոնց յաջողւում է որ և է հրաշքով ճանապարհ բաց անել դէպի գիտութիւնը, աշխարհ են զարմացնում իրանց գիւտերով։ Նրանց վրայ զարմանում են, նրանց գովում են և չեն մտածում, որ դրանցից էլ շատ աւելի մեծ ընդունակութիւններով օժտուած մարդիկ գուցէ կորչում են յաւիտեան, բոլորովին ընկճուած տաժանակիր աշխատան-

քից մի բուռը անպէտք ու անընդունակ անգործ պորտաբոյծ-ների համար։

Եւ միմիայն սոցիալիզմը կըկարէ այն կապանքները, որոնք կաշկանդել են մարդկանց մտքերը, կը զարթեցնէ այն հարուստ ոյժերը և ընդունակութիւնները, որոնք այժմ քնած են ժողովրդի մէջ, և վիթխարի չափերի կը հասցնէ մարդու իշխանութիւնը բնութեան վրայ։ Աշխատանքի արդիւնաւէտութեան այժմեան հրաշքները երեխայի խաղալիքներ կթուան համեմատած այն բոլորի հետ, որ կըտայ սոցիալիզմը։

Բայց թողնենք ապագայի մասին գուշակութիւններ անելը։ Աշխատանքի այժմեան արդիւնաւէտութիւնը արդէն բարձրացել է այնքան, որ ընդհանուր անտեսութեան կանոնաւորման միջոցով հնարաւոր կը դառնայ ապահովել իւրաքանչիւր մարդու այն բոլոր պիտոյքներով, որ անհրաժեշտ է մարդավայել ապրուստ ունենալու համար։ Մի գերմանացի գիտնական, աշխատաւոր ժողովրդի բարեկամ, ժանրամատն հաշիւ արեց գերմանական պետութեան համար, թէ որքան մարդիկ պէտք է աշխատեն և որքան ժամանակ, որպէս զի 60 միլլիոն բնակիչ ունեցող մի պետութեան բոլոր քաղաքացիները ապահովուած լինեն երկրագործութեան, արդիւնաբերութեան, արհեստների և գաղութային անտեսութեան արդիւնքներով (թէյ, սուրճ և այլն)։ Հաշուի ժամանակ նա ի նկատի առաւ միայն աշխատանքի այժմեան միջին արդիւնաւէտութիւնը, թէև շատ լաւ գիտէր, որ այդ արդիւնաւէտութիւնը կպած չէ մի տեղի, այլ զարգանում է տարէց—տարի։ Նա հարցրեց ինքն իրան—ինչ բարօրութիւն կարող է այժմ ժողովուրդը ձեռք բերել։ Եթէ աշխատանքի արդիւնաւէտութիւնը ապագայում մեծանայ, հասկանալի է, որ բարօրութիւնն էլ աւելի ևս կը մեծանայ, և աւելի քիչ պէտք կը լինի աշխատելու։ Ահա թէ ինչ է դուրս գալիս նրա հաշուով։

60 միլիոն ազգաբնակութեան մարդավայել կեանքի համար բոլոր անհրաժեշտ առարկաները հայթայթելու համար բաւական է, որ 5 միլլիոն տղամարդիկ և 3 միլլիոն 800 հազար կանայք ամեն տարի աշխատէին օրական 8 ժամից ոչ աւել. իսկ միասին—8 միլիոն 800 հազար բանուորներ և բանուորուհիներ, այսինքն ամբողջ ազգաբնակութեան 1/4 մասը։ Ուրիշ խօսքով, մի բանուորի աշխատանքը կարող է 7 մարդու պահել լիակատար բարօրութեան մէջ։ Հասարակութեան անհրաժեշտ այդ ամբողջ աշխատանքը բոլորի մէջ արդարացի կերպով բաժանելու համար բաւական կըլինէր, օրինակ, հիմնել աշխատանքի ընդհանուր ծառայութիւն, որ կըտևէր տղամարդու համար 10 տարուց ոչ աւել, իսկ կանանց համար 7 տարուց ոչ աւել՝—դիցուք 15 կամ 17 տարուց սկսած մինչև 25 կամ 27 տարեկան հասակը տղամարդու համար, և 15-ից մինչև 22 տարին կանանց համար։ Մինչև 15 կամ 17 տարին բոլորն էլ կը յաճախէին դպրոց հասարակական հաշուով և կը ստանային այնտեղ խելացի ուսում և կրթութիւն։ Այնուհետև բոլորն էլ կը մտնէին աշխատանքի ծառայութեան, իսկ վերջինս աւարտելուց յետոյ ծառայութիւնից դուրս կը գային տարեկան որոշ կենսաթոշակով, որը բաւական կը լինէր ամբողջ ընտանիքին լաւ ապրելու համար, մինչև որ երեխաները մեծանային և մտնէին աշխատանքի ծառայութեան մէջ։ Եթէ որ և է մէկը ուզեց անհրաժեշտ պիտոյքներից ջոկ ունենալ նաև փարթամ կեանքի առարկաները, այդ դէպքում ծառայութեան վերջանալուց յետոյ նա կարող կը լինէր մտնել արհեստաւորական ազատ ընկերութիւնների մէջ, որտեղ նրա նման ծառայութիւնը աւարտած մարդիկ միասին կարող կը լինէին պատրաստել իրանց համար փարթամութեան պիտոյքները ըստ իրանց ընտրողութեան և հայեցողութեան։

Այսպիսով, իւրաքանչիւր ընտանիք աշխատանքի հասարակական տասը տարուայ ծառայութեան միջոցով (իսկ կանանց համար 7 տարուայ) կը կարողանար ապահովել ամբողջ կեանքի ապրուստը լիովին։ Տղամարդը և չամուսնացած կինը իրանց պարտադիր աշխատամիջոցը վերջացնելուց յետոյ ծաղիկ հասակում կօգտուէին լիակատար ազատութեամբ և կը կարողանային իրանց ժամանակը գործադրել կամ իրանց բարօրութեան մակերևոյթը բարձրացնելու կամ միայն իրանց մտաւոր զարգացումը առաջ մղելու և մարդկային զանազան հաճոյքներ ստանալու համար, եթէ կուզենային բաւականանալ այնպիսի բարեկեցիկ կեանքով, որով ապրում են այժմ միջին

ունևոր մարդիկ։ Այդ դեռ բոլորը չէ. 50 միլիոն ազգաբնակութեան մէջ կայ 5 միլիոն 300 հազար տղամարդ և մօտ 4 միլիոն դամենը 9 միլիոն 300 հազար աշխատաւոր հասակին պատկանող մարդիկ։ Իսկ որովհետև պէտք է միայն 8 միլիոն 800 հազար հոգի, ուստի կարելի կը լինէր 60 հազարի չափ արտօնեալ կանայք և տղամարդիկ պահել (30 հազար տըղամարդիկ, որ տասը տարուայ մէջ կանէ 300 հազար,—և 30 հազար կանայք, որ 7 տարուայ մէջ կանէ 201000, ընդամենը 501000)։ Արտօնութեամբ կօգուտէին ամենաընդունակ մարդիկ, որոնք աշխատանքի ժամանակը կը սովորէին զանազան գիտութիւններ և արուեստներ, որպէս զի լեռոյ օգտակար դառնային ամբողջ հասարակութեան համար իրանց զբաղմունքներով և իրանց կրթական գործունէութեամբ։

Բացի այդ շատ հեշտութեամբ կարելի էր այնպէս անել, որպէս զի աշխատանքի ծառայութիւնը, որը կը կատարուի առողջութեան համար ամենալաւ և ամենաօգտակար պայմաններում, նման չի լինի այժմեան կաղարմաների կեանքին, որպէս զի մարդիկ որքան կարելի է ազատ լինեն իրանց պարապմունքները և ծառայութեան տեղը որոշելու գործում։ Այդ բոլորի համար անհրաժեշտ միջոցների մասին մանրամասն խօսելը շատ երկար կը տևէր։ Դրա համար մի առանձին գիրք պէտք կը լինէր գրել։ Կասենք միայն այն, որ ամենածանր և ամենաանախորժ աշխատանքների համար կարելի կը լինէր սահմանել որոշ արտօնութիւններ (օրական աշխատանքի աւելի քիչ ժամեր կամ աշխատանքի ծառայութեան աւելի քիչ տարիներ և այլն), այնպէս որ այդ գործի համար ցանկացողներ միշտ կը գտնուէին։ Իսկ եթէ չը գտնուէին կամ շատ քիչ գըտնուէին այդ տեսակ մարդիկ, այն ժամանակ այդ աշխատանքը կը կատարէին վիճակահանութեամբ կամ հերթով բոլորն էլ։

Այս բոլոր դատողութիւնները, ինչպէս ասացինք, արուած են գերմանական պետութեան նկատմամբ, հաշի առնելով նրա 60 միլիոն ժողովուրդը։ Հասկանալի է, որ գործը ամենևին չի փոխուի, եթէ մենք անենք այդ բոլոր դատողութիւնները Ռուսաստանի 130 միլիոն ժողովրդի կամ մի ուրիշ երկրի վերաբերմամբ, միայն թէ այդ երկիրների տնտեսութիւնը

նման լինի Գերմանիայի այժման տնտեսութեան։ Ամեն տեղ նոյնը կը լինի։ Սոցիալիստական տնտեսութեան ժամանակ տըղամարդու տասը տարուայ և կնոջ 7 տարուայ աշխատանքի ծառայութեան միջոցով կարելի կը լինի բոլորի համար էլ ապահովել ամբողջ կեանքի ապրուստը, աւ կրթութիւն և ուսում։ Սոցիալիստական հասարակութեան մէջ իւրաքանչիւր քաղաքացի ուրախութեամբ կը կատարէ աշխատանքի ծառայութիւնը, որ կը տայ նրան ազատութիւն, անկախութիւն և լիակատար ապահովութիւն։

Սոցիալիստական հասարակութեան մէջ չեն լինի ձրիակերներ, անգործ և ուրիշի հաշին ապրող մարդիկ, չեն լինի նաև չափից վեր աշխատանքից ուժասպառ եղող թշուառականներ։ Ամենքն էլ կաշխատեն, որքան պէտք է, և ամենքն էլ բարեկեցիկ կեանք կը վայելեն։ Այն ժամանակ այլ ևս չի լինի այնպէս, ինչպէս այժմ, երբ շորերով աւ կօշիկներով լիքը խանութի մօտից անց ու դարձ են անում ցնցոտիների մէջ և ոտաբոբիկ այն նոյն բանուորները, որոնք իրանք են կարել այդ շորերը, այդ կօշիկները, երբ հացի, մսի և զանազան ուրիշ բաների խանութների ու ռեստորանների առակեայ պատեղէնների տակ կուչ են գալիս քաղցած, իսկ երբեմն մի քանի օրեր ոչինչ չը կերած աշխատաւոր մարդիկ, որոնք ագահութեամբ նայում են իրանց համար այնքան անմատչելի բարիքների վրայ։ Չի լինի և այն, ինչ այժմ սովորական մի երևոյթ է,—երկրում սով է, իսկ վաճառականները այդ երկրից հաց են տանում արտասահման։ Հազարաւոր, միլիոնաւոր մարդիկ կարգին շորեր չունեն, իսկ չթի, քաթանի և մահուդի վաճառականները և ֆաբրիկանտները գանգատւում են, որ խիստ շատ ապրանք է պատրաստուած և պահանջ չը կայ։ Շատ նահանգներում տիրում է սովի տիֆը, իսկ խոշոր տընտեսութիւնները կրճատում են իրանց ցանքսը և հողը արօտի համար թողնում, ասելով, որ հացահատիկի գները շատ ցածր են և նրա պահանջը չնչին։

Ապատուելով ստրկական աշխատանքի ծանր լուծի տակից, միայն այն ժամանակ մարդը լրջօրէն կասէ, որ «միայն հացով չէ որ ապրում է մարդս», որ բաւարարութիւն տալով

իր բոլոր մարմնային պահանջներին, պէտք է մնունդ տալ նաև իր մարդկային հոգուն։ Միայն այն ժամանակ բոլոր մարդկանց սրտում պայծառ լոյսով կը վառուի գիտութեան ծարաւը, միայն այն ժամանակ մարդս կըմբռնէ գիտութեան հմայքը, քննութեան ենթարկելով բնութեան բոլոր գաղտնիքները և զմայլուելով այն խորը իմաստով, որ նա գտնում է իր շուրջը. միայն այն ժամանակ մարդ խորը կերպով կը զգայ գեղեցկութեան ամբողջ վեհութիւնը, կը սովորի ճանաչել, գնահատել և բանալ նրան ամեն տեղ—և աստղերով լի երկնքում, սարերի գագաթներում և անսահման ծովի մէջ և դաշտերի ու մարգագետինների պայծառ կանաչի մէջ և մարդկային հոգու խորքերում։ Մաքրուելով աշխարհային մեղքերից առևտրից և գոյութեան կուից առաջացած մանր—մունր մտածմունքներից, մարդկային հոգին կը վերածնուի, կուզդի և աւելի զգայուն կըդառնայ դէպի իր նմանի հոգեկան կեանքը, որովհետև իր նմանների մէջ նա կըտեսնի այնուհետև ոչ թէ թշնամիներին, որոնց առաջ նա աչքը միշտ չորս պիտի բանար, այլ իր բարեկամներին և աշխատակիցներին, որոնց հետ միասին աշխատելը ընդհանուր բարօրութեան համար մի մեծ հաճոյք է պատճառում նրան.....

ՎԵՐՋ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/II. 1922
именная Библиотека
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Լույս են տեսել

1. *Բախ.*—Հարուստներ և աղքատներ II տպագ. 15 կոպ.
2. *Պեշէխոնով.*—Հաց, լույս և ազատութիւն . 12 »
3. *Փէլոբովիչ.*—Ինչպէս են ժողովում և ծախսւում ժողովրդական փողերը . . . 5 »
4. *Կարմելիուկ.*—Նոր լիրան քարոզը . . . 2 »
5. *Չեռնով.*—Գիւղացին և բանւորը . . . 15 »
6. *Պերներստորֆեր.*—Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան . . . 5 »
7. *Պրամնոլիեր.*—Գիւղացիներին . . . . 5 »
8. *Ն. Թոմչեան.*—Արհեստակց. միութիւններ 15 »
9. *Նովոտորժսկի.*—Ի՞նչ է իրաւական պետութ. 15 »
10. *Ս. Կարանով.*—Հողային հարցը նոր Զելանդիայում . . . . . 2 »
11. *Ժան Ժորէս.*—Բուրժուական սեփականութիւն և նրա ապագայ գրաւումը . . . 5 »
12. *Ա. Արեղեան.*—Դեմոկրատ. ընտրութիւններ 12 »
13. *Կարլ Կաուցկի.* — Ազգութիւնների հարցը Ռուսաստանում . . . . . 3 »
14. *Ա. Անարոնեան (Ղարիբ).*—Ազատութեան ճանապարհին . . . . . 80 »

Տպագրւում են եւ շուտով լոյս կտեսնեն

1. *Ալֆոնս Դոնան.*—Ժողովրդական օրէնսդրութիւնը Զուիցերիայում։
2. *Փ. Լասսալ* — Սահմանադրութեան էութեան մասին։
3. *Դիկշտէյն.*—Ով ինչով է ապրում։

Պատրաստւում են տպագրութեան համար մի շարք ուրիշ գրքեր։

Յանկացողները դիմեն «Ցատաջ»-ի խմբագրատուն Փրէյբինսկայա № 6.

ՀՀ Ազգային գրադարան
NL0200297